

# ՀԲԸՄ

ԵՐԿԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## 2010 - 2011

ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ 87<sup>րդ</sup> ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ  
ՀՈԿՏԵՄԲԵՐ 20, 2012, ԵՐԵՒԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Հ.Բ.Ը. Միության Երևանի նոր կեդրոնի ճարտարապետական գծանկարը:  
Կեդրոնի շինարարության աւարտը կը նախատեսուի 2013ին



# ՀԲԸՄ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ 2010 – 2011

**Նախագահ**  
Պերճ Սեդրակեան

**Փոխ նախագահ**  
Արշալիր Կեօնճեան (2010), Սինան Սինանեան (2011)

**Գանձապահ**  
Սեմ Սիմոնեան

**Ատենադպիր**  
Պերճ Փափազեան

**Պատուոյ Անդամ**  
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.  
Ամենայն Հայոց Կաթողիկոս

## Անդամներ

ԱՄՆ՝ Մ. Մայքըլ Անսուր, Գերոլ Պաղտասարեան-Ասլանեան, Ժոզեֆ Լ. Պասրալեան, Երուանդ Տեմիրճեան, Նազարեթ Ֆրստորքճեան, Արտա Յարութիւնեան, Սարգիս Ճեպէճեան, Լեւոն Նազարեան, Ժոզեֆ Ուղուրլեան, (Հոկտ. 2010էն), Տիգրան Թերիզեան, Երուանդ Զօրեան, ԱՐԺԱՆԹԻՆ՝ Ռուբէն Քէշիշեան, ՖՐԱՆՍԱ՝ Արիս Ադամեան, ԶՈՒԻՑԵՐԻԱ՝ Վահէ Կապրաշ, ՍՈՒՐԻԱ՝ Վազգէն Եագուպեան

## ԽՆԱՍՏԱԿԱԼՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐ

Սարգիս Տեմիրճեան, Ռիչըրտ Մանուկեան, Նազար Նազարեան,  
Լուիզ Մանուկեան Սիմոն, Գառնիկ Եագուպեան

## Ի յիշատակ

Պօղոս Նուպար, Հիմնադիր  
Ալէք Մանուկեան, Յկեանս Պատուակալ Նախագահ



# ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

2 – 3	Նախագահին Խօսքը
4 – 5	Նիւթական Տեղեկագիր 2011 - 2010
6 – 9	Հայաստան / Ղարաբաղ
10 – 13	Կրթական
14 – 19	Ասպարէզային Փորձառութեան Ամառնային եւ Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագիրներ
20 – 34	Մասնաճիւղեր
35	ՀԲԸՄի Յանձնաժողովներու եւ Մասնաճիւղերու Ատենապետներ 2010 – 2011
36 – 38	Լուսարձակ
39	Յատուկ Շրջայցեր
40 – 43	Կատարողական Արուեստներ
44 – 45	«Կիզակէտ» Երկամեայ Շաբաթավերջ
46 – 49	Երիտասարդ Արհեստավարժներ
50 – 55	Երիտասարդութիւն
56	Մամուլ
Կոնակի կողքի ներքին էջ	2010 եւ 2011 Հ.Բ.Ը.Միութեան Ծրագիրներ

## Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 86<sup>Պ</sup> ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԼՈՒՍԱՐԶԱԿ

Ձախէն աջ՝ Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչական ժողովի անդամները Պուէնոս Այրէսի մէջ Հոկտեմբեր 16, 2010ին գումարուած 86<sup>Պ</sup> Ընդհանուր Ժողովին: Հ.Բ.Ը. Միութեան Պուէնոս Այրէսի մէջ տեղի ունեցած 86<sup>Պ</sup> Ընդհանուր Ժողովի մէկ շաբթուան ձեռարկները սկիզբ առին Ֆրանսայի դեսպանութեան մէջ տեղի ունեցած համերգով, Պուէնոս Այրէս, Արժանթին: Արժանթինահայ բարերար Էտուարտո Էօրնէքեանը Հ.Բ.Ը. Միութեան կողմէ Հոկտեմբեր 2010ին կը պատուուի «Տարուան Մարդ» տիտղոսով, առ ի գնահատանք Հայաստանի ենթակառոցներու կատարելագործումին բերած իր նպաստին: Արժանթինի Հ.Բ.Ը. Միութեան սկաւտները շարուած՝ Միութեան Սկաւտական Շարժումի նոր կեդրոնի հիմնարկէքի արարողութեան ընթացքին, որ տեղի ունեցաւ 86<sup>Պ</sup> Ընդհանուր Ժողովի աւարտին:







## Մեր Անդամակցության, Նուիրատուներուն և Բարեկամներուն,

87-րդ Ընդհանուր Ժողովի այս Երկամեայ Տեղեկագիրը իր մէջ կը խտացնէ Հ.Բ.Ը.Միութեան անցեալ երկու տարիներու բազմաթիւ ծրագիրները, գործունէութիւնները և նախաձեռնութիւնները որոնք կը զուգահիւյսին յատկանշական շարք մը հանգրուաններու և պատմական իրադարձութիւններու, որոնցմով գործունէութեան և նախաձեռնութիւններու նոր ժամանակաշրջան մը կը սկսի մեր ազգին և Միութեան համար:

Երբ այս հասկացողութեամբ կ'արժեւորենք մեր գործունէութիւնը և ծառայութիւնը, հպարտ կը զգանք մեր Մեծ Միութեան անշեղ ուղիով և ազգային ռազմավարութեամբ, որ կը կազմէ մեր նպատակներու հիմքը: Հ.Բ.Ը.Մ.ը կը շարունակէ իր սուղ միջոցները ուղղել դէպի Հայաստան և Արցախ, միաժամանակ հաւատարիմ փառով Սփիւռքին հանդէպ իր պատասխանատուութիւններուն, իր ուժերը գլխաւորաբար կեդրոնացնելով նոր սերունդի լաւագոյնս պատրաստութեան աշխատանքին վրայ, մեր առաքելութեան յառաջիկայ հանգրուանները յաջողութեամբ դիմագրաւելու համար:

Հայաստանի և Արցախի գոյգ հանրապետութիւններու անկախութեան և անոնց զինեալ ուժերու և արտաքին դիւանագիտական յարաբերութիւններու ստեղծման 20-ամեակներու նշումի ձեռնարկները վերապրումի և վաղորդակի սոսնախմբութիւններ էին, որոնց առիթով մեր կազմակերպութիւնը արդար հպարտութեան և գոհունակութեան իրաւունք կը վայելէ, որովհետեւ մենք կը շարունակենք մեր անվերապահ և ամբողջական նուիրումը մեր հայրենքին, նոյնիսկ քաղաքական անբարենպաստ պայմաններու տակ: Մեր անշեղ նպատակակէտն է յետ այսու, զարգացնել մեր հայրենիքի կարողականութիւնը յենուելով անոր ուժեղագոյն տուեալներուն վրայ: Մինչ հայրենի ղեկավարութիւնը անկեղծութեամբ իր կարելիութիւնները ի գործ կը դնէ պայքարելու համար չարաշահութեան դէմ, զօրացնելու համար ժողովրդավարութիւնը և երկրի տնտեսութիւնը, մենք մեր ամբողջական օժանդակութիւնը պիտի բերենք յուսալի ապագայի ստեղծումին:

Երբեմն կը տարուինք մտածելու թէ ազգովին շարունակաբար կը դիմագրաւենք հայրենիքի ինչպէս և սփիւռքի կարգ մը համայնքներու փայտուն և տակաւ ի յայտ եկող կարիքները: Սակայն կարելոր է նաեւ անդրադառնալ, որ այժմ իբր ամբողջութիւն, մենք հզօր և կարելիութիւններով հարուստ ազգ մըն ենք և անհրաժեշտ է որ գործենք այդ հասկացողութեամբ և ոգիով: Իբր բարեկեցիկ և ուժեղ Սփիւռք, վճռակամութեամբ և յստակ ռազմավարութեամբ ու յուրջ նախաձեռնութիւններով գործելու մեր պատրաստակամութիւնը փորձաքարի տակ է ներկայիս: Կեդրոնանալով այն հիմնահարցերուն վրայ որոնք միահամուռ համագործակցութեան տրամադրութեամբ գործի կը մղեն սփիւռքահայ մեր բոլոր համայնքները, անհրաժեշտ է որ միացնենք մեր ուժերը զօրաւոր և համադրուած աշխատանքով նպաստելու համար հայրենիքի և Արցախի զարգացման: Մեր ուշադրութիւնը սեւեռած համազգային տարողութեամբ Յեղասպանութեան 100-ամեակի նշումին, կենսական է որ միացալ ուժերով և անտեղիտալի ոգիով հետապնդենք ճանաչումի և յատուցման մեր պահանջները:

Հայաստանը կը փայ մեր մտասեւեռումի առարկան, սակայն նոյնքան կարելորութեամբ մեր մտահոգութեան առանցքը կը կազմէ աշխարհատարած մեր նոր սերունդին մշակումը: Հ.Բ.Ը.Մ.ը կը նախաձեռնէ և կը գործադրէ շարք մը ծրագիրներ, որոնք կը ձգտին անհրաժեշտ նախադրեալներ ապահովել երիտասարդներու յաջողութեան համար, քաջալերելով ազգային և հանրային կեանքի ու ծառայութեան մէջ անոնց ներգրաւումը: Բարձրագոյն ուսման կրթաթոշակներու և ասպարէզային փորձառութեան լաւագոյն առիթներու ընձեռումով, Միութիւնը կ'օժանդակէ երիտասարդներուն, քաջալերելով որ անոնք տէր կանգնին իրենց ազգային ժառանգութեան և առաջնորդ դերեր ստանձնեն, նաեւ իրենց ասպարէզային մարզերէն ներս փայլուն յաջողութեամբ և առաջնակարգ դիրքերով պատիւ բերեն հայրութեան ու բարձր պահեն անոր անունը:

Այս մտածումներով երբ կը թերթատեմ Երկամեայ Տեղեկագիրը, գոհունակութեամբ կը հաստատեմ այդտեղ պարզուող բազմաթիւ գործունէութիւններու և ծրագիրներու երիտասարդական բնոյթը: Մատնանշելով անոնցմէ քանի մը հատը Հայաստանի Ամերիկեան Համալսարանը նշեց իր հիմնադրութեան 20-րդ տարեդարձը: Էօրնէքեան Արդիւնաւոր Հայաստան Հիմնարկին հետ համագործակցութեամբ իրականացաւ Արցախի մէջ «Իւրաքանչիւր Աշակերտի Առձեռն Համակարգի»-ի ապահովման ծրագիրը: Հայկական Հեռավար Գոլէճի լեզուի, պատմութեան և մշակոյթի համացանցային ուսուցման բազմալեզու ծրագիրը ընդարձակեց իր նիւթերու և մասնակիցներու տարողութիւնը, յիսուն երկիրներէ հազարէ աւելի աշակերտներ ապահովելով: «Արմենիաքա» նախաձեռնութեամբ կարելի պիտի ըլլայ հանրութեան տրամադրելի թուայնացած արխիւներով ապահովել և կորուստէ փրկել հայկական ճարտարապետական և պատմական հազարաւոր կոթողներ: Մոսկուայի Ամառնային Ասպարէզային փորձառութեան նորագոյն նախաձեռնութիւնը, կարելոր յաւելում մը հանդիսացաւ այդ մարզի յաջող ծրագիրներուն, մինչ Նիւ Եորքի Ամառնային Փորձագիտութեան Ծրագիրը մեծ շուքով սոսնախմբեց իր փայլուն գործունէութեան 25-ամեակը: Մեր նորագոյն նախաձեռնութիւնը՝ «Երաժշտական Հայաստան» երեքշաբաթեայ ամառնային ծրագիրը, առիթ ստեղծեց կատարողական արուեստի երիտասարդ խոստփայի տաղանդներու մշակման, Հայաստանի երաժշտական լաւագոյն դպրոցներուն մէջ դասընթացներու հետեւելու և անտանի արուեստագէտներու հետ շփման կարելիութիւններ ապահովելով անոնց: Մեր ամառնային ճամբարները, սկաւորական, մշակութային և մարզական շարժումները, կը



շարունակեն ընկերային առողջ եւ օգտակար մթնոլորտ ապահովել մասնակից պատանիներուն:

Հայաստանի մէջ Երեւանի սրտին կառուցուող Հ.Բ.Ը.Մ.ի նոր կեդրոնը, որ կ'ամբողջանայ 2013-ին, խորհրդանիշը կը հանդիսանայ Միութեան հայրենիքի նուիրումաձութեան, շեշտելով մեր ներկայութիւնը Հայաստանի եւ Արցախի մէջ:

Մեր ղեկավարութեան զօրաւոր կառոյցը, մեր բարերարներու լայնասրտութիւնը, մեր մասնաճիւղերու միասնականութիւնը եւ խանդավառ ծառայութեան ոգին, նաեւ մեր հաւատաւոր անդամակցութիւնը, կը շարունակեն կազմել մեր յաջողութեան եւ մեր միութեան վայելած լայնածիր վստահութեան գրաւականները: Մեզի համար կենսական է պահպանել այս եռանդը, սեւեռումը եւ նուիրումը: Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը կ'ընդգրկէ անհատներ, որոնք իրենց իւրայատուկ տաղանդներով, աշխոյժ անհատականութեամբ, պայծառ մտքով եւ հարուստ փորձառութիւններով, լրագոյնս կը պահպանեն ու կը շարունակեն մեր հիմնադիր առաջնորդներու տեսիլքը

եւ լայնահորիզոն աշխարհահայեացքը, նոր բարձունքներու առաջնորդելով մեր Միութիւնը:

Նման անհատներու, նուիրեալ անդամակցութեան եւ պաշտօնէութեան կողքին, իբր Նախագահ Հ.Բ.Ը.Միութեան ծառայելը ինձի համար մեծագոյն պատիւ կը սեպեմ:

Մենք հպարտ ենք մեր պանծալի միութեան անցեալի իրագործումներով, նուիրում եմք մեր հայրենիքին եւ կը հաւատանք թէ պէտք է առաջնորդենք մեր բարի օրինակով: Հետեւաբար կոչ կ'ուղղենք աշխարհատարած հայութեան միանալու մեզի ազգաշինութեան վեհ գործին մէջ:



Պերճ Սեդրակեան  
Նախագահ



Երիտասարդներ ամէն ամառ կը հաւաքուին Նիւ Եորքի Նուպար Ճամբարի դրօշակի ձողին շուրջ:



Հ.Բ.Ը. Միութիւնը ամենամեայ կրթաթոշակներ կը տրամադրէ Հայաստանի Ֆրանսական Համալսարանին մէջ:



Երիտասարդներ աշխարհի բոլոր կողմերէն ամէն տարի Հայաստանի մէջ կը հաւաքուին մասնակցելու Յայտնաբերէ Հայաստանը շրջապտոյտին:



# Նիւթական Տեղեկագիր 2011 - 2010

## ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԳՈՅՔ	Դեկտեմբեր 31	
	2011 (*)	2010
<b>Ընթացիկ Գոյք</b>		
Դրամատան մէջ պատրաստ Արժեթուղթեր	\$ 11,729,375	\$ 9,170,861
Գանձելի աւանդներ/հաշիւներ	243,941,640 (*)	237,524,889 (*)
Գանձելի տոկոս	3,272,049	3,140,673
Գումար Ընթացիկ Գոյքի	437,208	589,989
	<b>259,380,272</b>	<b>250,426,412</b>
<b>Անշարժ Կալուածներ</b>	<b>81,993,449</b>	<b>79,425,794</b>
<b>Մարքեր, կարասի եւ այլ գոյքեր</b>	<b>1,694,336</b>	<b>1,817,921</b>
<b>Գումար Գոյքի</b>	<b>\$343,068,057</b>	<b>\$331,670,127</b>
<b>ՊԱՐՏԱԿԱՆՔ ԵՒ ԶՈՒՏ ԳՈՅՔ</b>		
<b>Պարտականք</b>		
Վճարելի հաշիւներ	\$9,686,161	\$7,753,731
վճարելի պարտաթուղթեր	549,931	549,931
Գումարի Պարտականքի	<b>10,236,092</b>	<b>8,303,662</b>
<b>Զուտ Գոյք</b>		
Ոչ պայմանաւորեալ	49,556,330	46,958,734
Առժամապէս պայմանաւորեալ	37,532,837	33,409,123
Մշտապէս Պայմանաւորեալ (Հիմնադրամներ)	245,742,798	242,998,608
Գումար Զուտ Գոյքի	<b>332,831,965</b>	<b>323,366,465</b>
<b>Գումար Պարտականքի եւ Զուտ Գոյքի</b>	<b>\$343,068,057</b>	<b>\$331,670,127</b>

## ՄՈՒՏՔ

Օժանդակութիւն՝  
 Նուիրատուութիւններ  
 Անդամավճարներ  
 Յատուկ Ձեռնարկներ եւ այլ մուտքեր  
 Հասոյթ՝  
 Շահաբաժին եւ տոկոս  
 Կալուածային  
 Դպրոցական

## Յայտագիրներու Մատակարարման

## ԳՈՒՄԱՐ ՄՈՒՏՔԻ

**ԵԼՔ**  
 Յայտագիրներ եւ Վարչական Ծախք  
 Յայտագիրներ՝  
 Կրթական  
 Մշակութային  
 Կրօնական  
 Մարդասիրական

Վարչական Ծախք  
 Դրամահաւաքի Ծախք  
 Դրամասակային Տարբերութիւն/  
 Վերադասաւորում

## ԳՈՒՄԱՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՄՔԻ

Յաւելում (Նուազում) Ելեւմուտքի

Միջ-յատկագումարային փոխանցում

Յաւելում (Նուազում) Զուտ Գոյքի

Զուտ Գոյք՝ տարեսկիզբին

Զուտ Գոյք՝ տարեվերջին

(\*)Կը ներկայացնեն ՀԲԸՄիութեան արժեթուղթերու տոմարական արձանագրութիւնը 12/31/2011-ին եւ 12/31/2010-ին, որոնց սակարանային արժեքը յաջորդաբար Ամերիկեան Տոլարով \$232,886,433 եւ \$243,002,060 են:

(\*\*)Միութեան 2011-ի եւ 2010-ի տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւնները կը պարփակեն Միացեալ Նահանգներու (Մ.Ն.) Տէլաուերի ընկերակցութեան, հաշուեքննիչներու կողմէ վաւերացուած տուեալները, առաւել Մ.Ն.է դուրս գործող շրջանակներու եւ մասնաճիւղերու կողմէ ներկայացուած նիւթական տեղեկագրերը: Նկատի ունենալով որ գրքային պատրաստութեան ժամանակ Մ.Ն.է դուրս գտնուող մարմիններէ 2011-ի կարեւոր թիւով Նիւթական տեղեկագրեր մեր տրամադրութեան տակ չէին գտնուէր, 2011-ի ընդհանուր համարատուութիւնը 2010-ի իրականացած թիւերուն վրայ հիմնուած գումարներ կը պարփակէ:

## ՄԱՓՈՓՈՒՄ

ՀԲԸՄ Նիւթական Տեղեկագիր  
 10-Տարուայ Բաղդատական Գումարներու

	2011	%*	2010	%**	2000
Ընդհ. Գոյք	\$343,068,057	3.43%	\$331,670,127	39.13%	\$238,402,626
Ընդհ. Մուտք	52,882,182	32.76%	39,830,669	<11.03>%	44,768,080
Ընդհ. Ելք	43,416,682	1.88%	42,612,748	27.70%	33,369,168

\*Միամեայ % Յաւելում (Նուազում) \*\*10-ամեայ % Յաւելում (Նուազում)

## Ամերիկեան Տոլարով



# Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն

## ԵԼԵԻՄՈՒՏՔ

Առ Դեկտեմբեր 31, 2011(\*\*)

Առ Դեկտեմբեր 31, 2010

Ոչ Պայմանաւորեալ	Առժամայէն Պայմանաւորեալ	Մշտապէս Պայմանաւորեալ	Ընդհանուր Գումար	Ոչ Պայմանաւորեալ	Առժամայէն Պայմանաւորեալ	Մշտապէս Պայմանաւորեալ	Ընդհանուր Գումար
\$ 2,727,114	\$ 14,199,990	\$ 2,684,521	\$ 19,611,625	\$ 2,969,436	\$ 7,402,858	\$ 2,045,995	\$ 12,418,289
396,562	-	-	396,562	298,965	-	-	298,965
5,196,907	20,000	-	5,216,907	5,121,106	3,597	-	5,124,703
<b>8,320,583</b>	<b>14,219,990</b>	<b>2,684,521</b>	<b>25,225,094</b>	<b>8,389,507</b>	<b>7,406,455</b>	<b>2,045,995</b>	<b>17,841,957</b>
15,152,137	-	-	15,152,137	9,614,270	-	-	9,614,270
2,062,600	4,435	-	2,067,035	2,064,079	8,625	-	2,072,704
10,437,916	-	-	10,437,916	10,301,738	-	-	10,301,738
<b>27,652,653</b>	<b>4,435</b>	-	<b>27,657,088</b>	<b>21,980,087</b>	<b>8,625</b>	-	<b>21,988,712</b>
<b>35,973,236</b>	<b>14,224,425</b>	<b>2,684,521</b>	<b>52,882,182</b>	<b>30,369,594</b>	<b>7,415,080</b>	<b>2,045,995</b>	<b>39,830,669</b>
12,320,983	(12,320,983)	-	-	11,013,905	(11,013,905)	-	-
<b>48,294,219</b>	<b>1,903,442</b>	<b>2,684,521</b>	<b>52,882,182</b>	<b>41,383,499</b>	<b>(3,598,825)</b>	<b>2,045,995</b>	<b>39,830,669</b>
18,466,814	-	-	18,466,814	18,644,589	-	-	18,644,589
10,934,516	-	-	10,934,516	10,869,584	-	-	10,869,584
4,735,883	-	-	4,735,883	5,482,478	-	-	5,482,478
5,550,441	-	-	5,550,441	4,119,946	-	-	4,119,946
<b>39,687,654</b>	-	-	<b>39,687,654</b>	<b>39,116,597</b>	-	-	<b>39,116,597</b>
3,430,922	-	-	3,430,922	3,212,033	-	-	3,212,033
250,113	-	-	250,113	236,125	-	-	236,125
47,993	-	-	47,993	47,993	-	-	47,993
<b>3,729,028</b>	-	-	<b>3,729,028</b>	<b>3,496,151</b>	-	-	<b>3,496,151</b>
<b>43,416,682</b>	-	-	<b>43,416,682</b>	<b>42,612,748</b>	-	-	<b>42,612,748</b>
4,877,537	1,903,442	2,684,521	9,465,500	(1,229,249)	(3,598,825)	2,045,995	(2,782,079)
(2,279,941)	2,220,272	59,669	-	(3,701,761)	4,450,052	(748,291)	-
<b>2,597,596</b>	<b>4,123,714</b>	<b>2,744,190</b>	<b>9,465,500</b>	<b>(4,931,010)</b>	<b>851,227</b>	<b>1,297,704</b>	<b>(2,782,079)</b>
<b>46,958,734</b>	<b>33,409,123</b>	<b>242,998,608</b>	<b>323,366,465</b>	<b>51,889,744</b>	<b>32,557,896</b>	<b>241,700,904</b>	<b>326,148,544</b>
<b>\$49,556,330</b>	<b>\$37,532,837</b>	<b>\$245,742,798</b>	<b>\$332,831,965</b>	<b>\$46,958,734</b>	<b>\$33,409,123</b>	<b>\$242,998,608</b>	<b>\$323,366,465</b>

# ՀԱՅԱՍՏԱՆ / ՂԱՐԱԲԱՂ



Տեսարան՝ Հ.Բ.Ը.Մ.ի կողմից հովանավորվող Հայաստանի ճատրակի իամադպրոցական 5<sup>րդ</sup> ողիմպիականէն, որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ, Մարտ 2011ի ընթացքին:



- ✦ Արաբկիրի Հայորդեաց Կեդրոն
- ✦ Արաբկիրի Եկեղեցի
- ✦ Մալաթիայի Հայորդեաց Կեդրոն
- ✦ Նորքի Հայորդեաց Կեդրոն
- ✦ Հայաստանի Ամերիկեան Համալսարան Հայկական Համացանցային Գոլէճ Ճատրակի Համադպրոցական Ռղիմբիադ ԵԱ
- ✦ Սրբ. Աննա Եկեղեցի
- ✦ Տարեցներու Ճաշարաններ (3) Հայաստանի Ֆիլիարմոնիք Նուագախումբ
- ✦ Սրբ. Ներսէս Հիւանդանոց Գերաձայնային Հետազօտութիւններու Կեդրոն Սկաւտական Շարժում
- ✦ Սապար. Փորձ. Ամառնային Ծրագիր
- ✦ Դաստիարակչական Այց Հայաստան

### ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ

<p><b>Երկիր</b></p> <p>Երկիրներ ուր կրթանպաստ ստացող համալսարանականներ կ'ուսանին</p> <ul style="list-style-type: none"> <li>● Կեդրոն / Գրասենեակ</li> <li>● Վարժարան / Ճամալսարան</li> <li>● Երիտ. Արհեստավարժներ (ԵԱ)</li> <li>✦ Սրբ. Էջմիածնի հետ գործակցաբար Բարեսիրական Ծրագիր</li> <li>✦ Մշակութային Ծրագիր</li> </ul>	<p><b>Կրթական Ծրագիր</b></p> <p><b>Բժշկական Ծրագիր</b></p> <p>Երիտասարդական Ծրագրեր, Մարզական, Ճամբարներ, Սկաւտներ և Սապարեգային Փորձառութեան Ծրագրեր</p>
---	---



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2010ին, Հայաստանի Ամերիկեան Համալսարանը երեք կարեւոր յայտարարութիւններ կատարեց: Առաջին յայտարարութիւնը կը վերաբերէր Լինսի շինարարութեան տրամադրած 400,000 ամերիկեան տոլար որամասնաշնորհին, որ պիտի նպաստէ հաստատութեան ծրագիրներու կատարելագործումին: Ընդամենը ամիս մը յետոյ, Ապրիլին, յայտարարուեցաւ համալսարանի նոր Նախագահի նշանակումը: Դոկտ. Պրիւս Ռոզոսեան կը յաջողդէր հանգստեան կոչուած հաստատութեան երկարամեայ նախագահ Յարութիւն Արմէնեանին:

Դոկտ. Պրիւս Ռոզոսեան յայտնի գիտնական է, որ բնագիտութեան Պսակարու է հիւլէական ճարտարագիտութեան Մագիստրոս Գիտութեանց տիտղոսներուն արժանացած է Մասաչուսեցի ճարտարագիտութեան Ինստիտուտէն: Ան Գիտութիւններու Դոկտորի կոչում ստացած է Գալիֆորնիոյ Համալսարանէն, կիրառական գիտութիւններու եւ ճարտարագիտութեան մէջ:

Յունիսին, Միացեալ Նահանգներէն Աքեան ընտանիքի անդամներ, բացումը կատարեցին համալսարանի «Փարամագ Աւետիսեան» մասնաշէնքին մէջ գտնուող «Աքեան Արուեստի Յուցարահ»ին: Ի յաւելումս արուեստի ցուցարահին կատարած իրենց 283,000 ամերիկեան տոլարի նուիրատուութեան, Աքեան Ընտանիք Հիմնադրամը յանձն առաւ 500,000 ամերիկեան տոլարի յատկացում կատարելու համալսարանին, որ յառաջիկայ հինգ տարիներուն պիտի տրամադրուի համալսարանի եւ հայրենի կրթական այլ հաստատութիւններուն մէջ բարձրագոյն ուսման հետեւող ուսանողներու կրթաթոշակներու հիմնադրամին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻՔ

### ՆՈՒԱԳԱՄՈՒՄԲ

Հ.Բ.Ը Միութեան հովանաւորութիւնը վայելող Հայաստանի Ֆիլիարմոնիք Նուագախումբի 2010ի համերգաշրջանը եզրափակուեցաւ յատկանշական ձեռնարկով մը: Արդաւե, Յուլիսին, հայրենի շարժարուեստի բեմադրիչ Վիզէն Չալտրանեան եւ նուագախումբը, գլխաւոր խմբավար Էտուարդ Թովչէանի ղեկավարութեամբ, «Արամ Խաչատուրեան» համերգարահին մէջ ներկայացուց Չայքովսքիի «Ելկէնի Օնէկին» օփերան: Բեմադրութեան կը մասնակցէին նաեւ «Ալ. Սպէտկիարեան»ի անուան օփերայի եւ պալէի ազգային ակադեմիական թատրոնի մենակատարները եւ «Հովեր» Սենեկային Երգչախումբը:

Ֆիլիարմոնիքը աւելի ուշ բացումը կատարեց 2010ի աշնանային համերգաշրջանին, մասնակցելով Հայաստանի Առաջին Տիկին Ռիթա Սարգսեանի հովանաւորութեամբ կազմակերպուող Երեւանի 4-րդ Միջազգային Երաժշտական Փառատօնին, որուն մասնակցեցան երաժիշտներ 12 երկիրներէ: Մէկ ամիս յետոյ Ֆիլիարմոնիքը ելոյթներ ունենալու համար մեկնեցաւ Գերմանիա եւ Սլովաքիա, հրաւերովը Գերմանիոյ «Արուեստներու Համերգ» կազմակերպութեան: Բացառիկ յաջողութեամբ համերգներ տեղի ունեցան Ֆրանքֆուրտի «Ալթ Օփեր»-ի մէջ, որմէ ետք նուագախումբը ելոյթ ունցաւ Պրաթիսլավայի «Լեոտուք» համերգարահին մէջ, ուր ելոյթ ունեցաւ նաեւ Հ.Բ.Ը Մ.ի Կատարողական Արուեստի Կրթաթոշակներու Ծրագրի սան ջութակահարուհի Անոյ Նիկողոսեանը:

Փետրուար 2011ին, Ֆիլիարմոնիք Նուագախումբը Երեւանի համալսարաններուն մէջ ունեցած իր համերգներով իրականացուց դասական երաժշտութիւնը երիտասարդութեան հասցնելու ձգտող ծրագիր մը: Չայքովսքիի երկրորդ գլուխգործոցը՝ «Շչէլլունչիկ»ը հնչեց Մարտ ամսուան տեղի ունեցած համերգին, որ նոր եւ անսովոր բեմադրութիւն մըն էր: Բեմի վրայ գետեղուած մեծ պատասի վրայ ծիածանի գոյները պալէի ճկուն շարժումներով կը խառնուէին ձիւնի փաթիլներուն՝ ստեղծելով հեքիաթային միջավայր մը: Ներկայացումը այնքան գնահատուեցաւ, որ ընդառաջելով հանդիսատեսներու խնդրանքներուն, անգամ մը եւս ներկայացուցաւ:

## ՃԱՏՐԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

Հ.Բ.Ը Միութեան հովանաւորութեամբ Հայաստանի Ճարտարակի 4րդ Համադպրոցական Ուղիմպիականը տեղի ունեցաւ Մայիս 2010ին, Քաջարանի մէջ, որուն մասնակցեցան Հայաստանի, Ղարաբաղի

# Հ.Բ.Ը.Մ.Ի Հովանաւորած Ծրագիրները Հայաստանի եւ Արցախի Մէջ

### ԸՆԹԱՑՑԻՎ ԾՐԱԳԻՐՆԵՐ

<b>ՀԱՅԱՍՏԱՆ</b>	<b>ԱՐՑԱՍՔ</b>
Հայաստանի Ամերիկեան Համալսարան	Արցախի Սենեկային Նուագախումբ
Հայաստանի Ֆիլիարմոնիք Նուագախումբ	ՆՌԻՌ Ծրագրի Գործակցութիւն
Հայրողեայց Տուներ (3)	
Տարեցներու Ճաշարահներ (4)	
Գերձայնային շեղանկութիւններու Կեդրոն	
Հայկական Համացանցային Գոլթճ	
Ճարտարակի Հանրապետական Համադպրոցական Ուղիմպիական	
Հայ Կին Յղի Կանանց Աջակցութեան Կեդրոն (Թալին)	
Հայ Կին Յղի Կանանց Աջակցութեան Կեդրոն (Վանաձոր)	
Հայ Կին Յղի Կանանց Աջակցութեան Կեդրոն (Եղվարդ)	
Երեւանի Պետական Համալսարան	

### ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Հ.Բ.Ը Մ.ի Հայաստանի Սկաւտական Ծարժում Երեւանի Երիտասարդ Արիւեստակարծներ

### ՍՓԻՌՔԱԶՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Անդրանիկ Սկաւտական Բանակում Ցայտարբեր Հայաստանը Դաստիարակչական Այց Հայաստան Երեւանի Ամառնային Ասպարեգային Փորձառութեան Ծրագիր

### ԳԼՄԱՒՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Արաբկիրի եկեղեցի  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Հայաստանի Ծրագիրներ  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Մայր Տաճար  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Հայրողեայց Տուներ  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Հոգեւորականներու Բնակարաններ  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Հոգեւոր Կրթութեան Կեդրոն  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Գրադարան-Մատենադարան  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Թանգարան (Ալեք Մանուկեան Գանձատուն)  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Թանգարան (Հին Վեհարան)  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Ընծայարան  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Շառայութեանց Կեդրոն  
Ս. Աննա Եկեղեցի  
Ս. Ներսէս Հիւանդանոց  
Վանաձորի Հայրողեայց Կեդրոն  
Վազգէնեան Ընծայարան

### ՅՍՏՈՒՎ ՓՈՆԱՆՑՈՒՄՆԵՐ

Ֆրիտեթ Նանսէն Որբանոց  
«Կեանք Նուիր» Հիմնադրամ  
Գիւմրիի Վերածնունդ Փառատօն  
Գիւմրիի Պետական Երաժշտանոց  
Գիտութիւններու Ազգային Ակադեմիա  
Մերոնք շեռտեսիլի Յայտագիր  
Օտար, Ամայի Ճամփէի Վրայ շեռտեսիլի Յայտագիր  
Բաց Երաժշտութեան Փառատօն  
Հայաստանի Ֆրանսական Համալսարան  
Հայաստանի Գորդներու Միութիւն  
Զանազան Հրատարակութիւններ

### ՆՈՐՈՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԱՑԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Արագածոտնի Մարզ-Արուջ գիւղի դպրոցի մարզարահի վերականգնում  
Արագածոտնի Մարզ-Զքնաղ գիւղի դպրոցի նորոգութիւն  
Արագածոտնի Մարզ-Գետափ գիւղի մարզարահի վերականգնում  
Արարատի Մարզ-Լանջազատ գիւղի դպրոցի մարզարահի վերականգնում  
Արարատի Մարզ-Ուրցասար գիւղի Մշակութային Կեդրոնի հիմնանորոգում  
Դիլիճան-թիւ 6 դպրոցաշէնքի վերականգնում  
Դիլիճան-թիւ 6 դպրոցաշէնքի հիմնանորոգում  
Կոտայքի Մարզ-Նոր Գեղի համայնքային կեդրոնի ջեռուցում  
Կոտայքի Մարզ-Զարնեցանի Մշակութային Կեդրոնի ջեռուցում  
Լոռիի Մարզ-Գեղաշարի ծրագիր  
Լոռիի Մարզ-Խնկոյեան գիւղի համայնքային կեդրոնի հիմնանորոգում  
Լոռիի Մարզ-Շահումեանի Մշակութային Կեդրոնի հիմնանորոգում  
Շիրակի Մարզ-Ամասիայի մանկապարտեզի շէնքի համայնքային կեդրոնի հիմնանորոգում  
Շիրակի Մարզ-Գիւմրիի Յովհաննէս Երիզաւի տուն-թանգարան  
Սիւնիքի Մարզ-Անգեղակոթ գիւղի Մշակութային Կեդրոնի հիմնանորոգում  
Սիւնիքի Մարզ-Բնունիս գիւղի դպրոցի մարզարահի նորոգութիւն  
Սիւնիքի Մարզ-Գեղանոյ զիւղի դպրոցի մարզարահի նորոգութիւն  
Սիւնիքի Մարզ-Խնածախ գիւղի դպրոցի նորոգութիւն  
Սիւնիքի Մարզ-Սեղրի գիւղի դպրոցի մարզարահի նորոգութիւն  
Սիւնիքի Մարզ-Քարաշէն գիւղի դպրոցի նորոգութիւն  
Տաւշի Մարզ-Կողբի թիւ 1 դպրոց  
Տաւշի Մարզ-Նաւուր գիւղի դպրոցի մարզարահի նորոգութիւն  
Տաւշի Մարզ-Զինար գիւղի ծրագիր  
Տաւշի Մարզ-Պողոսեան գիւղի դպրոցի մարզարահի նորոգութիւն

Եւ Ջաւախքի դպրոցներու խումբերը: Մրցաշարքին կը հետեւէր Հայաստանի Ճատրակի Միութեան փոխ-նախագահ Մաքսատ Լպուտեան: Մայիս 2011ի ամսաթուականը տեղի ունեցաւ Տաւուշի Մարզին մէջ: Հ.Բ.Ը. Միութիւնը համահովանաւորն էր նաեւ Ճատրակի Համահայկական Ողիմպիականին, որ տեղի ունեցաւ «Մէկ Ազգ, Մէկ Մշակոյթ» Փառատօնի շրջագիծին մէջ, Օգոստոս 2010ին: Աւելի քան 40 Ճատրակորդներ Հայաստանէն թէ Մփիւրքէն, պատուուցանս Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի ներկայութեամբ տեղի ունեցած ողիմպիականի բացումին:

Հ.Բ.Ը. Միութիւնը ցարդ անելի քան 4,000 Ճատրակի կազմածներ էւ Ճատրակի ժամացոյցներ նուիրած է Հայաստանի եւ Արցախի դպրոցական խումբերուն, որով պայմաններ ստեղծուած են ուշխմութեան կարողութիւնները մշակող խաղի զարգացումին համար: Աւարտականի յաղթողներ պարգևատրուեցան Հ.Բ.Ը.Մ.ի տրամադրած համակարգիչներով: Հայաստանի Ճատրակի Միութեան եւ Հ.Բ.Ը.Մ.ի միջեւ այս համագործակցութիւնը նպատակ ունի աշակերտներու մօտ սէր արթնցնել Ճատրակի հանդէպ եւ ի յայտ բերել տաղանդաւոր երիտասարդներ, որոնք ապագայի ախտյեաններ կրնան դառնալ, նպաստելով Ճատրակի համաշխարհային մրցումներուն մէջ Հայաստանի դիրքերու ամրապնդման:

## ՀԱՅՈՂԵԱՅՑ ՏՈՒՆԵՐ

Անցնող երկու տարիներուն, Նորքի, Արաբկիրի եւ Մալաթիայի Հայորդեայց Տուներու 1,850 աշակերտներ շարունակեցին արուեստի, ձեռնային աշխատանքներու, պարի, մարմնամարզութեան, պատմութեան, երաժշտութեան իրենց դասերը, ինչպէս նաեւ զանազան առիթներով ելոյթներ ունեցան հանդիսութիւններու ընթացքին: Ամէնէն կարեւոր ելոյթը տեղի ունեցաւ Մարիլ 2-8, 2011ին, երբ Նորքի Հայորդեայց Կեդրոնի 30 երիտասարդներ հրաւիրուեցան Պէլրոյթ, Լիբանան, ելոյթ ունենալու Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի 80-Ամեակի հանդիսութիւններուն: Հինգ ելոյթներ տեղի ունեցան «Յովհաննէս Պօղոսեան» հանդիսարանին մէջ, որոնց ներկայ գտնուեցան 3,000 հանդիսատեսներ, որոնց շարքին՝ 1,300 դպրոցականներ:

5էն 14 տարեկան տաղանդաւոր կատարողներ ներկայացուցին երգեր, պարեր եւ կրկեսային ներկայացումներ: Լիբանան իրենց կեցութեան ընթացքին, Հայորդեայց Տան համոյթի անդամները այցելեցին Լիբանանի տեսարժան վայրերը եւ ծանօթութիւններ հաստատեցին իրենց տարկիցներուն հետ, որոնցմէ շատեր Հ.Ե.Ը.ի «Արին» պարախումբի անդամներ էին: Համոյթի այցելութեան ծախսերը հոգաց Հայաստանի բջջային հեռահաղորդակցութեան «Վիվա Սել» Ընկերութիւնը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2010 եւ 2011 թուականներուն, Հ.Բ.Ը. Միութիւնը 60,000 ամերիկեան տղար գումարով կրթաթոշակներ տրամադրեց Հայաստանի Ֆրանսական Համալսարանի յարաջաղէմ ուսանողներուն: 2007էն ի վեր, մօտաւորապէս 100 յարաջաղէմ ուսանողներ նպաստաւորուած են Միութեան նիւթական աջակցութեան: Համալսարանի շրջանաւարտներ կը ստանան Հայաստանի պետական ճանաչում ունեցող վկայականներ, որով կարելիութիւնը կ'ունենան վկայուելէ անմիջապէս յետոյ աշխատանք գտնելու, ինչպէս նաեւ ապագայի առաջնորդներ դառնալու ճամբայ կը բացուի իրենց առջեւ:

## ՀԱՅ ԿԻՆ ՅՈՒ ԿԱՆԱՅ ԿԵՐՈՒ

Նոյեմբեր 2011ին տեղի ունեցաւ Հայ Կին Յոյ Կանանց նոր կեդրոնին բացումը: Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին Նորա Ինձիճեան կեդրոնը, որ կը գտնուի Եղուարդի հիւանդանոցի կից ծննդատան մէջ, չորրորդ նմանատիպ կեդրոնն էր, որ իրականացաւ Լուս Անճելուսէն Հայկազ եւ Մարի-Լուիզ Ինձիճեաններու նուիրատուութեան շնորհիւ: Ինձիճեան ընտանիք այդ նուիրատուութիւնը կատարած էին իրենց դստեր՝ Նորայի իշխատակին: Յուզիչ էր իմանալու, թէ Նորաբաց կեդրոն յաճախած մայրերէն մէկը իր նորածին դուստրը անուանակոչած էր Նորա:

Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին Յանձնախումբի Յոյ Կանանց Աջակցութեան առաջին կեդրոնը հաստատուած է 2002ին: Այդ կեդրոններու գործունէութեան շարունակականութիւնը մեծապէս ապահովուած է Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ կազմակերպուած արդիւնաւոր հանգանակութիւններու շնորհիւ: Հ.Բ.Ը.Մ.-ի Լուս Անճելուսի Երիտասարդ



Հ.Բ.Ը.Մ.ի Նորքի Հայորդեայց կեդրոնի գեղարուեստական խումբին ելոյթը ծափահարութիւններով ընդունուեցաւ Պէլրոյթի մէջ, Մարի 2011ին:



Հայաստանի Ամերիկեան Համալսարանը կը տօնախմբէ իր հիմնադրութեան 20-ամեակը, 27 Սեպտեմբեր 2011ին:



Հ.Բ.Ը.Մ.ի Խնամակալներու Խորհուրդի անդամ եւ Բարերար Տէր եւ Տիկին Նազար եւ Արտեմիա Նազարեաններ բացումը կը կատարեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Դիւնատան նոր շէնքին, 5 Մարիլ 2010ին:



Արհեստավարժներու Համախմբումը 2011ին կրցած էր հանգանակել բաւարար գումար հոգալու համար Վանաձորի ՅՊԻ Կանանց Կեդրոնի գործունեութեան ծախսերը: ՅՊԻ Կանանց Կեդրոններու ծառայութիւններուն շնորհիւ առողջ մանուկներու թիւը ցարդ հասած է 800ի, որ կը նշանակէ թէ այդ կեդրոններու գործունեութիւնը նպաստած է մանկական մահացութեան ցուցանիշներու կրճատումին: Արդէն մանկական մահացութեան դէմ պայքարն էր որ տասնամեակ մը առաջ Հայ Կին Համախմբումը մղած էր այդ կեդրոնները հիմնելու:

## ԱՐԾԱԽԻ ՄԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒԱԳԱՅՈՒՄԲ

Արցախի Մենեկային Նուագախումբը, 2010ի համերգաշրջանը սկսաւ Մարտ 12ին արցախցի երաժիշտ, ուսուցիչ, գեղանկարիչ եւ քանդակագործ Ալպերթ Սաֆարեանի ծննդեան 60-ամեակին նուիրուած ելոյթով: Համերգին ներկայ գտնուեցաւ Արցախի Մշակոյթի նախարարուհի Նաիրա Աղաբալեանը, որ յոբելեարը պարգևատրեց յուշամետալով՝ առ ի գնահատանք Արցախի Հանրապետութեան մշակոյթի զարգացման բերած իր նպաստին: Դասական երաժշտութեան անմոռանալի ձեռնարկ մըն էր Նոյեմբեր 6ին տեղի ունեցած համերգը, որ այս անգամ գործադրուեցաւ Ստեփանակերտի Երիտասարդական Պալատին մէջ: Հիւրաբար ելոյթ ունեցան Բարսեղ Թումանեանը, Քրիսթին Տովլաթեանը եւ Իրինա Զաքեանը, Հայաստանէն: Արցախի Մենեկային Նուագախումբի 2011ի համերգներէն մէկը, որ տեղի ունեցաւ Ապրիլին, նուիրուած էր Կոմիտասին եւ Հայոց Տեղասպանութեան:

Նուագախումբը հիմնուած է Սեպտեմբեր 2044ին: Հ.Բ.Ը. Միութիւնը, ընդառաջելով Ղարաբաղի նախկին նախագահ Արկաղի Ղուկասեանի խնդրանքին, հովանաւորած էր այս ծրագիրը:

## ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵԶԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ - «ՆՈՒՌ» ԾՐԱԳԻՐ

Յունուար 2011ին, Ղարաբաղի Վարչապետ Արա Յարութիւնեան եւ արժանթինահայ բարերար Էտուարտո Էօրնէքեան ստորագրեցին գործակցութեան համաձայնագիր մը, որ Ղարաբաղի մէջ սկիզբ դրաւ «Իւրաքանչիւր Երախայի Համար ՄԷԼ Առձեռն Համակարգիչ» ծրագրին: Ծրագրի նպատակն է Ղարաբաղի միջնակարգ դպրոցներուն տրամադրել գործնական եւ ուսումնական համացանցային կարելիութիւններով օժտուած տոկուն համակարգիչներ:

Նորարարական ճարտարագիտութեան կիրառելուով մշակուած այս ծրագիրը, որ կը կոչուի Նոր Ուսումնական Ռազմավարութիւն (ՆՈՒՌ), պիտի իրականանայ Էօրնէքեանի «Արդիւնաւէտ Հայաստան» բարեսիրական կազմակերպութեան հիմնադրամին միջոցներով՝ Հ.Բ.Ը.Մ.-ի գործակցութեամբ, որ անհրաժեշտ աջակցութիւն պիտի տրամադրէ ծրագրի յաջող ընթացքը ապահովելու համար:

ՆՈՒՌ-ը շարունակութիւնն է «ՄԷԼական Առձեռն Համակարգիչ Իւրաքանչիւր Երախայի» ծրագրին, որ կրթական նպատակներու համար անջրանցիկ, դիւրամատնելի, արեւային բջիջներով ելետրոնի ապահովող ՄՕ կոչուած համակարգիչներ կը պատրաստէ: Այդ համակարգիչները պիտի տրամադրուին առաջինէն չորրորդ դասարաններու աշակերտներուն եւ ուսուցիչներուն:

Ըստ համաձայնագրի, Արցախի կառավարութիւնը յանձն պիտի առնէ համացանցային հաղորդակցութեամբ ապահովել ծրագրին մաս կազմող դպրոցները: Ծրագրի առաջին փուլին, որ սկիզբ առաւ Սեպտեմբեր 2011ին, Ստեփանակերտէն եւ Շուշիէն ուսուցիչներ հետեւեցան կրթական համակարգչային ծրագրի դասընթացներու:

## ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՃԱՍԱՄԱԶՆԵՐ

Հայաստանի անկախութենէն ի վեր, Հ.Բ.Ը. Միութիւնը հպարտութեամբ կը հովանաւորէ Նորքի, Մալաթիայի եւ Արաբկիրի Հայորդեայ Կեդրոններու մէջ գործող երեք ճաշարանները, ուր օրական տաք ճաշ եւ թարմ պտուղներ ու բանջարեղէն կը մատակարարուի 600 տարեցներու եւ որբերու, որոնցմէ շատեր կրնան նաեւ ճաշաբաժիններ տանիլ տուն եւ բաժնեկցիլ ընտանիքի այլ անդամներու հետ: Յատուկ կարգադրութեամբ մը ճաշ կը հասցուի նաեւ անոնց, որոնք դժուարութիւն ունին անձամբ ճաշարան գալու:



Տեսարան՝ տարեցներու երեք ճաշարաններէն մէկէն:



20 Ապրիլ 2011ին, Արցախի Մենեկային Նուագախումբը համերգ մը նուիրեց Հայոց Տեղասպանութեան զոհերու յիշատակին:



Ձախէն աջ՝ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Վագգէն Եագուպեան, գործարար Էտուարտո Էօրնէքեան, Fruitfull Armenia Հիմնադրամի Գործադիր տնօրէն Աննա Քրիսթինա Շիրինեան եւ NUR Ծրագրի տնօրէն Սեպաթիան Արիաս-Տիվալ կը յայտարարեն Ծրագրի մեկնարկը Արցախի մէջ:





Նուպարեան-Մանուկեան Վարժարան, Մոնթեվիդեո, Ուրուկուէ

Անցնող հարիւրամեակին, Հ.Բ.Ը.Մ. ը յաճախ գուգորդուած է դպրոցներու եւ կրթական ծրագիրներու հետ, որոնք բարձրորակ կրթութեան, մշակութային հարստացումի եւ բարձրագոյն ուսման կարելիութիւններ ապահոված են: Այդ նախաձեռնութիւնները կարելոք դէր կատարած են յաջողական սերունդներու մօտ մեր ազգային ժառանգութեան պահպանման եւ ծանօթացումին, նաեւ պատկանելութեան գիտակցութեան եւ հպարտութեան զգացումի մշակումին ուղղութեամբ: Մինչ շատեր Հ.Բ.Ը.Մ.ի կրթական դերը կը դիտեն աւանդական կրթական հաստատութիւններու նեղ տեսանկիւնէն, այդ դերը ժամանակի ընթացքին զարգացած է տարբեր նորարար ծրագիրներով, որոնք կը պատշաճին 21-րդ դարու մեր սփիւռքահայ թէ հայրենի համայնքներու նոր սերունդի կարիքներուն:

Հ.Բ.Ը.Մ.ի կրթական բարձր ճանաչում ունեցող դպրոցներու միջազգային ցանցը հետեւողականօրէն ձգտած է ուսումնական գերազանց մակարդակի, միաժամանակ դառնալով տեղական համայնքներու հիմնականառոյցներէն մին: Այդ դպրոցներու կրթական համապարփակ ծրագիրը, ուսումնական հիմնական նիւթերու դասաւանդումին առընթեր, որոնք մրցումակ կարողութիւններով կ'օժտեն ուսանողները, ետակգու ծրագիրները տեղական գլխաւոր լեզուին կողքին հայերէն եւ մէկ այլ լեզուի դասաւանդութեամբ եւ արտադասարանային մշակութային հարուստ գործունէութիւններով, կ'ընդարձակէ պատանիներու մտահորիզոնը, իրենց ազգային ժառանգութեան եւ արմատներուն ծանօթացնելով զիրենք:

Հայկական շեռավար Գոլէճի ծրագիրը որ իբր յաւելլալ աղբիւր կ'օգտագործուի Միութեան դպրոցներէն ներս, հայերէնի ծրագրին իբր լրացուցիչ միջոցառում, առիթ կ'ընծայէ սփիւռքի տարբեր շրջաններէ աշակերտներու միջեւ կենդանի հաղորդակցութեան, որուն ընթացքին անոնք կը բաժնեկցին իրենց միջազգային փորձառութիւնները, նաեւ միասնաբար պատկերաւոր այցելութիւններ կը կատարեն Հայաստանի տարբեր շրջաններուն եւ կառոյցներուն, ինչ որ զիրենք կը նախապատրաստէ հայրենիք այցելութեան որուն կը մասնակցին բոլոր Միութեան դպրոցներու աշակերտները, իրենց դպրոցական նախաձեռնող տարեշրջանին:

Հ.Բ.Ը.Մ.ի կրթութիւնը կը հասնի տարեկան շուրջ 5000 աշակերտներու: Դպրոցական ցանցին կողքին, որ կ'ընդգրկէ նախամանկապարտնդէն մինչեւ երկրորդականի բոլոր կարգերը, միօրեայ եւ ամառային դպրոցները նոյնպէս կը նպաստեն սերունդներու դաստիարակութեան կարելոք աշխատանքին:

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

**Աստրալիա, Միսնի** Ֆորէսթի միջ-դպրոցական վիճաբանական մրցումը Միսնիի մէջ տեղի կ'ունենայ արդէն տասնչորս տարիներէ ի վեր շարունակաբար: Յունիս 2010ին **Ալեքսանդր Վարժարանը** յաղթական հանդիսացաւ 7րդ անգամ ըլլալով: Երկար պատրաստութենէ ետք, խումբ մը աշակերտներ իրենց մասնակցութիւնը բերին որպէս բանավիճողներ, ժամանակակապահներ եւ խմբապետներ:

**Վանատա, Մոնթրէալ** 2010ը հետաքրքրական տարի մըն էր **Ալեք Մանուկեան Վարժարանին** համար: Հանդիսաւոր ճաշկերոյթով մը վարժարանը տօնախմբեց իր 40-ամեակը, որուն ներկայ էին դպրոցի շրջանակէն հարիւրաւոր ծնողներ, բարեկամներ եւ նախկին շրջանաւարտներ: Վարժարան այցելեց նաեւ Քէպէք նահանգի մշակոյթի նախարարուհի Քրիսթին Սէն-Փիէր:

**Վանատա, Թորոնթօ** Փետրուար 2011ին, **Զարուկեան Վարժարանի** աշակերտները աշխատեցան գիտական ցուցահանդէսի իրենց ծրագիրներուն վրայ եւ յատուկ ցուցահանդէսի մը ընթացքին իրենց աշխատանքները ներկայացուցին հանրութեան: Վեց ընտրեալներ հրահրուեցան մասնակցելու Թորոնթօյի համալսարանի աշակերտական գիտական ցուցահանդէսին, որ տեղի ունեցաւ Ապրիլին, ուր անոնք հանդիպեցան այլ յաջողակ աշակերտներու: Զարուկեան Վարժարանը ներկայացնող աշակերտները բաժնուեցան մասնագիտական գանձաւոր խումբերու եւ մասնակցեցան այդ մասնագիտութեան գծով աշխատանքային քննարկումի: Անոնք մետալներ ստացան իրենց մասնակցութեան համար:

**Յունատան, Աթէնք** Միանալով աշխարհի տարբեր շրջաններէ եկած իրենց ընկերներուն, **Արթաքի Գալիփաքեան Նախակրթարանի** աշակերտներ, ինչպէս նաեւ մինչեւ 18 տարեկան նախկին շրջանաւարտներ, Հայաստանի Մփիւրքի նախարարութեան հրաւերով մասնակցեցան Արի Տուն ծրագրին: Խումբը ճամբորդեց առաջնորդներու ուղեկցութեամբ եւ Յուլիսին, երկու շաբաթներու ընթացքին, այցելեց նշանաւոր յուշակոթողներ եւ շփումներ ունեցաւ այլ երկիրներէ ժամանած աշակերտներու հետ, աւելի մօտէն ճանչնալով եւ գնահատելով իր ժառանգութիւնը:

**Լիբանան, Պլիւրօք** Հարիւրաւոր խանդավառ շրջանաւարտներ պարահանդէսով մը Յուլիս 2010ին տօնախմբեցին **Դարուհի-Յովակիմեան Վարժարանի** 70-ամեակը: Ծրագիրներ մշակուեցան վերականգնանցնելու Մանուց Միութիւնը, որ օգտակար պիտի ըլլայ մայր վարժարանին:

**Մուրիա, Հալէպ** Հոկտեմբեր 2010ին, **Լ.Նաճարեան-Գ. Գիպլէնկեան Վարժարանը**, որ հայրենիքէն դուրս մեծագոյն հայկական վարժարաններէն մին է, հանդիսացաւ «Ամենալալ Հայկական Կրթական Հաստատութիւն» մրցանակակիրներէն մին: Վարժարանը պարգեւատրուեցաւ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի դաիլիճին մէջ կայացած հանդիսաւոր արարողութեան ընթացքին, Մփիւրքի նախարարութեան կազմակերպած մրցոյթի շրջագիծին մէջ եւ նիւթական պարգեւ ստացաւ Հայկական Համաշխարհային Խորհուրդին կողմէ:

**ԱՄ, Գալիֆորնիա** Մարտ 2011ին, **Մանուկեան-Տեմիքեան Վարժարանը** նշեց իր հիմնադրութեան 35-ամեակը Ռոնալտ Ռեյկլըն նախագահական գրադարանին մէջ մօտ 500 ներկաներու մասնակցութեամբ: Հանդիսութիւնը կը կրէր «Անցեալը եւ Ներկան, Անցեալին եւ Այժմ» խորագիրը: Ծրագրի ընթացքին ընտրուեցան արժանացան շաբթ մը շրջանաւարտներ եւ պարգեւատրուեցան ուրիշներ: **Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահական Բարձրագոյն պարգեւին** արժանացաւ Տնօրէն **Յակոբ Յակոբեան** իր երկարամեայ նուիրեալ ծառայութեան համար: Վարժարանը 2010ին ձեռք բերաւ հպարտատախիթ



իրագործում մը: Արդարեւ 25 աշակերտներ արժանացան AP մրցանակին, նահանգային համալսարանական յանձնաժողովի քննություններուն արձանագրած յաջողություններուն համար: Աշակերտներէն երկուքը շահեցան Ազգային Արժանեաց Կրթաթոշակի մրցանակը: Խումբ մը աշակերտներ ալ յիշատակութեան արժանացան ուսուժական հանրային պաշտօնական քննություններու մէջ ձեռք բերած իրենց արդիւնքներուն համար, որով անոնք Միացեալ Նահանգներու տարածքին մասնակից 1.5 միլիոն աշակերտներու լուսագոյն հինգ տոկոսը կազմող երեսուչորս հազար աշակերտներու խումբին մաս կը կազմէին:

**ԱՄՆ, Գալիֆորնիա** 2011ին, Փաստօրինայի **Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանը** նշեց իր հինգերորդ տարեդարձը: Այս կարճ ժամանակամիջոցին հաստատությունը նշանակալի յառաջընթաց արձանագրեց ձեռք ձգելով ամբողջական եւ անկախ ճանաչում համալսարանական պատրաստութեան բոլոր հիմնական նիւթերու դասաւանդման մէջ, ընդգրկելով նորագոյն ճարտարագիտական ծրագիր, կատարողական արուեստներու համապարփակ ծրագիր եւ հայերէնի եւ հայ մշակոյթի գործնական ծրագիր: Աւարտական դասարանի աշակերտները յաջողութեամբ ընդունուեցան բարձրագոյն ուսման լուսագոյն հաստատություններէ ներս, ներառեալ Պէրքլի, Գալիֆորնիայի Պետական Համալսարանի շարք մը մասնաճիւղեր, Հարաւային Գալիֆորնիայի Համալսարան, UCLA, UC Irvine եւ այլն.: Վարժարանի բարերար Տէր եւ Տիկին Մանուկեանները իրենց սպասուած այցելութիւնը կատարեցին 2010ին եւ իրենց առատաձեռնութեան համար արժանացան երախտագիտութեան:

**ԱՄՆ, Միչիկըն** 2010ին **Ալեք Մանուկեան Վարժարանի** աւարտական դասարանի աշակերտները ձեռք բերին համալսարանական կրթաթոշակներու աւելի քան մէկ միլիոն տոլարի հաւաքական գումար մը, ինչ որ աննախընթաց էր դպրոցի պատմութեան մէջ: 1,2 միլիոն տոլար կրթաթոշակի արժանացան վարժարանի 29 աւարտական դասարանի աշակերտներու գրեթէ կէսը, յաճախելու համար նահանգային կրթական հաստատություններ, ներառեալ Միչիկընի Համալսարան՝ Էնն Արպըր եւ Տիրպորն, Ուէլնի Պետական Համալսարան, Կեդրոնական Միչիկընի Համալսարան, Լորընս ճարտարագիտական Համալսարան եւ Տիբորոյի շահալսարան-Մըրսի: Դրամաշնորհներու արժանացան նաեւ այլ նահանգներու համալսարաններ յաճախող ուսանողներ: Երջանաւարտից հանդէսին 650 ներկաներու մասնակցութեամբ, Հ.Բ.Ը. Միութեան նախագահ Պերճ Սեդրակեան արտասանեց Հոսկ Բանքը:



Պուէնու Այրէսի Մարի Մանուկեան Վարժարանի աշակերտներ կ'այցելեն Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի իրենց հասակակիցներուն, Աշակերտական Փոխանակումի 2011-ի Ծրագրի ընթացքին:

## ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՏԵՄԻՐՃԵԱՆ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԻ ԾՐԱԳԻՐ

Այս նախաձեռնությունը սկիզբ առած է 1999ին: Տարեկան այս ծրագրով Հարաւային Գալիֆորնիոյ Մանուկեան-Տեմիրճեան եւ Պուէնու Այրէսի Մարի Մանուկեան վարժարաններու աշակերտներ փոխանակումի ծրագիր մը կ'իրականացնեն: 2010ին եւ 2011ին նոյնպէս տեղի ունեցաւ այս ծրագիրը: Աշակերտներ գոյր վարժարաններէ, ոչ միայն յայտնաբերեցին նոր մշակոյթ մը, այլեւ անգամ մը եւս վերահաստատեցին հասարակաց այն կապը, գոր աշխարհի բոլոր ծագերու հայերը իրարու կը միացնէ: Երեք շաբթուան ընթացքին աշակերտներ հետեւեցան անգլերէնի եւ սպաներէնի դասընթացներու, ինչպէս նաեւ շրջապտոյտներու ընթացքին ամուր բարեկամական կապեր հաստատեցին իրարու հետ:

## Հ.Բ.Ը.ՄՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

ԱՐԺԱՆԹԻՆ	Պուէնու Այրէս	Մարի Մանուկեան Վարժարան (Pre K-12)
ԱԲՄՏՐԱԼԻԱ	Միտնի	Ալեքսանտր Նախակրթարան (K-6)
ԳԱՆԱՏԱ	Մոնթրէալ	Արմէն Քէլպէ-Ալեք Մանուկեան Վարժարան (Pre K-8)
ԹՈՐՈՆՅՕ		Դանիէլ եւ Ալիս Զարուկեան Վարժարան (Pre K-6)
ՅՈՒՆԱՍՏԱՆ	Աթենք	Արթաքի Գալիպքեան Վարժարան (Pre K-6)
ԻՐԱՆ	Թեհրան	Մարի Մանուկեան Վարժարան (9-12) Նուարդ Կիւպէնկեան Վարժարան (1-5)
ԼԻԲԱՆԱՆ	Պէրտոբ	Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան (Pre K-6) Լեւոն Կ. Նազարեան Վարժարան (Pre K-6) Դարուհի-Յովակիմեան Վարժարան (7-12)
ՍՈՒՐԻԱ	Հալէպ	Լազար Նաճարեան-Գալուստ Կիւպէնկեան Վարժարան (Pre K-12)
	Դամասկոս	Կիւլլապի կիւպէնկեան Վարժարան (Pre K-6)
ՈՒՐՈՒԿՈՒԷՅ	Մոնթրէվիտէօ	Նուպարեան-Մանուկեան Վարժարան (Pre K-12)
ԱՄՆ	Գալիֆորնիա	Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան (Pre K-12)
	Գանուկա Փարք	Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան(9-12)
	Փասատինա	
Միչիկըն	Տիբորոյ	Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարան (Pre K-12)

## Հ.Բ.Ը.ՄՈՒԹԵԱՆ ՇԱՐԲՅՈՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ

ԱԲՄՏՐԱԼԻԱ	Միտնի	Ալեք Մանուկեան Շարբորեայ Դպրոց
ՊՈՒԼԿԱՐԻԱ		
Տոպրիչ	Հապոփօ	Շարբորեայ Դպրոց
Փլովտի	Բուսէ	Շարբորեայ Դպրոց
Սլիսթրա	Սիլվըն	Շարբորեայ Դպրոց
Եամպոլ		Շարբորեայ Դպրոց
ՖՐԱՆՍԱ	Փարիզ	Ալեք Մանուկեան Շարբորեայ Դպրոց
	Վիեն	Չորեքշաբթի Դպրոց
ԼԻԲԱՆԱՆ	Պէրտոբ	Տեմիրճեան Կեդրոնի Հայոց Լեզուի «Միօրեայ Վարժարան»
ՍՈՒՐԻԱ	Գամիշլի	Շարբորեայ Դպրոց
ԱՄՆ	Գալիֆորնիա	
	Քոսթա Մեսա	Օրէնճ Քառնթի Շարբորեայ Դպրոց
Իլլինոյ	Շիքակօ	Միսակ Յ. Վարժապետեան Շարբորեայ Դպրոց
Օհայօ	Գլիվլընտ	Շարբորեայ Դպրոց



Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարան, Մաուֆֆիլտ, ԱՄՆ



Դարուհի-Մանուկեան Վարժարան Պեյրուօ, Լիբանան

## Հ.Բ.Ը.Մ.Ի ԲԱՐՁՐԱԳՈՅՍ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

### AGBU Scholarship Program

Թէ 2009-2010 եւ թէ 2010-2011 ուսումնական տարեշրջաններուն մօտ 400 ուսանողներ եւ արհեստավարժներ օգտուեցան Հ.Բ.Ը.Մ.Ի կրթաթոշակի յատկացումներէն: Անոնք կ'ուսանէին մօտ 30 երկիրներու մէջ աշխարհի չորս ծագերուն եւ ընդհանուր առմամբ ստացան համապատասխանաբար 600,000 եւ 700,000 հազար ամերիկեան տոլար ընդհանուր գումարով կրթաթոշակ:

**Հ.Բ.Ը.Մ.Ի համալսարանական կրթաթոշակներ տրամադրուեցան ԱՄՆ-ի** մէջ մագիստրոսական ուսանողներուն, որոնք կը հետեւէին ճարտարապետութեան, մանկավարժութեան, տնտեսագիտութեան, միջազգային յարաբերութիւններու, իրաւաբանութեան եւ բժշկութեան ճիւղերուն, Միացեալ Նահանգներու գերագանց եւ խստապահանջ համալսարաններու մէջ, ինչպիսիք են՝ Քոլումպիա, Հարվըրտ, Թաֆթս, Ելչ, Նիւ Եորքի եւ Իւ.Սի.Էլ.Էյ.ի համալսարանները:

**Հ.Բ.Ը.Մ.Ի Կատարողական Արուեստի կրթաթոշակներ** տրամադրուեցան երաժիշտներու, որոնք կ'ուսանէին Աւստրիոյ, Գանատայի, Գերմանիոյ, Իտալիոյ, Չուիլցերիոյ, Միացեալ Թագաւորութեան եւ Միացեալ Նահանգներու երաժշտանոցներու կամ համալսարաններու մէջ: Այս ծրագրին օժանդակեցին նաեւ Լեւոն եւ Սաթենիկ Նազարեան Հիմնադրամը եւ Հ.Բ.Ը.Մ.Ի Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբը:

**Հ.Բ.Ը.Մ.Ի Հոգևորականներու Պատրաստութեան կրթաթոշակներ** տրամադրուեցան ձեռնադրութեան թեկնածուներու, Ս. Ներսէս Ընծայարանի ուսանողներու եւ Արեւմտեան Թեմի ծուխերու ծրագրերուն, ինչպէս նաեւ Աստուածաբանութեան այլ ուսանողներու աշխարհի տարբեր համալսարաններու մէջ:

Անհատական կրթաթոշակներու առիծի բաժինը **Հ.Բ.Ը.Մ.Ի Միջազգային Կրթաթոշակներու Ծրագրով** տրամադրուեցաւ ուսանողներու, որոնք բարձրագոյն ուսման կը հետեւին իրենց բնական երկիրներուն մէջ: Ստոնցմէ շատեր կը հանդիսանան Հ.Բ.Ը.Մ.Ի վարժարաններէ շրջանաւարտներ աշխարհի տարբեր երկիրներու մէջ: Խոստմալից եւ արժանի թեկնածուներու ընտրութեան հարցի լուծման մէջ իրենց կարեւորագոյն դերը կ'ունենան Հ.Բ.Ը.Մ.Ի մասնաճիւղերու յանձնախումբերն ու աշխատակիցները, որոնք նաեւ կ'օժանդակեն կրթաթոշակ ստացողները առաջնորդութեան եւ խորհրդատուութեան պատեհութիւններով գաղութային կեանքի մէջ ներգրաւելու գործին:



Հ.Բ.Ը.Մ.Ի Փոլվտիի Մասնաճիւղի Վարչութեան անդամներ եւ աշակերտներ Պուրկասէն, Տոպրիչէն, Հասքովոյէն, Միլիսթրայէն, Սիլվընէն, ինչպէս նաեւ տեղացի աշակերտներ ներկայ գտնուեցան Մասնաճիւղի կազմակերպած դպրոցական կրթաթոշակներու յանձնումի արարողութեան, որ տեղի ունեցաւ 27 Մարտ 2010ին :

**Հ.Բ.Ը.Մ.Ի գնահատական կրթաթոշակներ** կը տրամադրուին նաեւ գերագանց կատարողութիւն ցուցաբերող աշակերտներու, որոնք կ'ուսանին Միացեալ Նահանգներու մէջ գործող Հ.Բ.Ը.Մ.Ի երեք երկրորդական վարժարաններու ասարտական կարգերուն մէջ, եւ որոնք կը ցուցաբերեն բարձր ուսումնական արդիւնք, նաեւ մասնակցութիւն դպրոցական եւ գաղութային կեանքին մէջ: 2010ին եւ 2011ին այսպիսի կրթաթոշակներ ստացան երկրորդականէ շրջանաւարտ ապագայի խոստմալից առաջնորդներ, մարզիկներ, մշակոյթի եւ կրօնական գաղութային գործիչներ: Այս ծրագրին աջակցեցաւ Ճորձ Հոլմիկեան Յիշատակի Հիմնադրամը:

Հ.Բ.Ը.Մ.Ի Կրթաթոշակներու ծրագրի նոր կայքը [www.agbu-scholarship.org](http://www.agbu-scholarship.org) արդէն կը գործէ առցանց դիմումներ ներկայացնելու կարելիութիւն ընձեռնելով ուսանողներուն:





Հայաստանի Մշակոյթի նախարարուհի Յասմիկ Պօղոսեան կը խօսի Հ.Բ.Ը.Մ.ի Համացանցային Գոլէճի կազմակերպած առցանց քննարկումի ընթացքին, որ տեղի ունեցաւ 6 Սեպտեմբեր 2011ին եւ որուն մասնակցեցան Հ.Բ.Ը.Մ. Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ Համացանցային Գոլէճի հիմնադիր Երուանդ Զօրեան (աջին): Ձեռնարկը նուիրուած էր Համացանցային Գոլէճի արձանագրած շարունակական յաջողութիւններուն կրթական նորարարութեան բնագաւառին մէջ:



Համացանցային Գոլէճի ուսուցչուհի Մարինա Խաչատրեան եւ Ռոսթոփի հայ գաղութի մարմնի ղեկավար Յարութիւն Սիւրմալեան բացումը կը կատարեն Համացանցային Գոլէճի դասասրահին, որ տեղի ունեցաւ 28 Սեպտեմբեր 2011ին:

## Հ.Բ.Ը.Մ.ԻՌԻԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԱՆԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ ԱՇԽԱՏԱԳՐԱԿԱՆ ԿԱՇԿԱՆՈՒՄՆԵՐԸ



Աշխարհի առաջին եւ միակ հայկական համացանցային կրթական հաստատութիւնը Հ.Բ.Ը.Մ.-ի Հայկական Հեռավար Գոլէճը, իր բացումէն ի վեր (2009) տարածուեցաւ աշխարհի չորս կողմերը, բոլոր տարիքի ուսանողներուն առիթ ընձեռելով ուսումնասիրելու ու սորվելու հայկական մշակոյթը, պատմութիւն եւ Հայոց լեզու:

Բացման առաջին տարուան ընթացքին, աւելի քան 500 ուսանողներ, 35 տարբեր երկիրներէ՝ Ֆրանսա, Ռուսաստան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ, նոյնիսկ ոչ հայաշատ երկիրներէ, ինչպէս Հարաւային Աֆրիկէի, Ռիեունտերն կղզի եւ Վենեզուէլլա, մաս կազմեցին համալսարանին: Ուսանողներ կարելիութիւնը ունեցան դասընթացներուն հետեւելու վեց լեզուներով՝ Արեւելահայերէն, Արեւմտահայերէն, Անգլերէն, Ֆրանսերէն, Ռուսերէն եւ Սպաներէն: 2011ին աւելցաւ նաեւ թրքերէնը:

Համալսարանը իր առաջին տարեդարձը տօնելու համար Յունիս 2010ին կազմակերպեց առցանց համաժողով մը: Արդէն երկրորդ տարեդարձին, Հայկական Համացանցային Համալսարանը կարեւոր յաջողութիւններ արձանագրած էր, գրեթէ կրկնապատկելով ուսանողներու թիւը եւ 50է աւելի երկիրներէ ուսանողներու մասնակցութիւն ապահովելով: Համալսարանը նաեւ ազգային ճանաչում ձեռք ձգեց որպէս Երեւանի «Ելեկտրոնային Բովանդակութեան Հինգերորդ Համահայկական Մրցոյթ»-ի յաղթող (Դեկտեմբեր 2010):

Յունիս 2011ին, իր հիմնադրութեան երրորդ տարեդարձը նշելու համար, Հայկական Համացանցային Համալսարանը համընդհանուր առցանց համաժողով մը եւս կազմակերպեց, ղեկավարութեամբ համալսարանի հիմնադիր նախագահ՝ Դոկտ. Երուանդ Զօրեանի:

Համաժողովին ներկայ էին նաեւ Հայաստանի Մշակոյթի նախարարուհի՝ Տիկին Յասմիկ Պօղոսեանը, կառավարութեան այլ ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ պատուաւոր հիւրեր, որոնք բարձր գնահատեցին Հայկական Համացանցային Համալսարանի պատշաճեցում կրթական ծրագիրը, որ առաջին անգամ կիրարկուեցաւ Շարժայի (Միացեալ Արաբական Էմիրութիւններ) Օհաննէսեան միօրեայ դպրոցէն ներս: Այդ ծրագիրը

աստիճանաբար ընդգրկուեցաւ աշխարհի տարբեր հայկական դպրոցներու ուսումնական ծրագիրներուն մէջ:

Կեդրոնանալով սփիւռքահայութեան վրայ, Յունիս 2011ին Հայկական Համացանցային Համալսարանը իր դասընթացները ներկայացուց «Արի տուն» ծրագրի մասնակիցներուն, (նախաձեռնութիւնը՝ Հայաստանի Սփիւռքի նախարարութեան, որ շարունակ կը ջանայ ստեղծել մշակութային փորձի փոխանակումի մթնոլորտ մը աշխարհի հայ երիտասարդներու միջեւ): Միեւնոյն ատեն, Հայկական Համացանցային Համալսարանը շարք մը շնորհահանդէներ կազմակերպեց աշխարհասփիւռ հայկական համայնքներուն համար, որոնցմէ՝ կարելի է յիշել յատկապէս Ս. Փեթերսպուրկի մէջ կազմակերպուած շնորհահանդէսը 2010ին, որ արժանացաւ համայնքի ներկայացուցիչներու, երիտասարդներու եւ ուսանողներու ուշադրութեան: Այս բոլոր ջանքերը նպաստեցին ժամանակակից հաղորդագանցելու միջոցով հայկական կրթութիւնը բոլորին հասանելի դարձնելու ուղղութեամբ Հայկական Համացանցային Համալսարանի ծրագիրներու արդիւնատրուումին:



Հեռավար Գոլէճի ուսանողներ համացանցային այցելութիւն մը տուին Երեւանի Մատենադարան:

# ԱՄՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ



Հեղինակ Մարկրեթ Ահներթ (կեդրոն-աջ) և Տիկնի Վերա Նազարեան-Սեդրակեան (կեդրոն-ձախ) շրջապատում 2010ի Նյու Եորքի Ասպարեզային Փորձառության Ամառնային Ծրագրի ուսանողներով և Հ.Բ.Ը.Մ.ի անձնակազմով . Ահներթ խօսեցաւ իր “The Knock at the Door” գիրքին մասին:

## ՆԻՒ ԵՈՐՔԻ ԱՄՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Նյու Եորքի Ասպարեզային Փորձառության Ամառնային Ծրագիրը մասնակիցներուն անհրաժեշտ և կարևոր արհեստավարժ փորձառության ապահովելու կողքին, որ իրենց յետագայ ասպարեզներուն մեջ յաջողության կարևոր տուեալ մը կը հանդիսասանայ, անոնց կուտայ նաեւ աշխարհի տարբեր ծայրերէն եկած իրենց նմաններուն հետ ժայռայն և տեսական բարեկամութիւններ հաստատելու կարելիութիւնը: Անցնող երկու տարիներու ընթացքին 64 մասնակիցներ Արժանիքներն, Հայաստանէն, Աւստրալիայէն Գանատայէն, Կիպրոսէն, Ֆրանսայէն, Յունաստանէն, Լիբանանէն, Քաթարէն, Ռուսիայէն, Սուրիայէն, Միացեալ Արաբական Էմիրութիւններէն, Միացեալ Թագաւորութենէն, Միացեալ Նահանգներէն և Ուզպէիստանէն, ուր շարքաթեր անցուցին ծանօթանալով իրենց ընտրած մասնագիտութիւններու տեսական և գործնական կողմերուն, Հ.Բ.Ը.Մ.-ի ցանցին մեջ ընդգրկուած համաշխարհային և համբաւուր հաստատութիւններու մեջ աշխատելով: Այդ հաստատութիւններէն են Քոլումբիա Համալսարանի բժշկական կէդրոնը, Մերիլ Լինչ Հաստատութիւնը, Մերձաւոր Արեւելք Հիմնարկութիւնը, Rothschild և Sony ընկերութիւնները: Մասնակիցները



իջեանեցան Նյու Եորքի Համալսարանի հանրակացարանին մեջ: Անոնք երեկոները անցուցին հետաքրքրական մշակութային հաւաքներով: Մասնակցեցան հայկական պարի անհատական դասերու Հ.Բ.Ը.Մ.ի Անդրանիկ պարախումբի կազմակերպութեամբ, գիրքի ներկայացման՝ հեղինակներ Մարկրեթ Ահներթի և Մայ քըլ Պոպլեյեանի կողմէ և հայկական արուեստի մասին դասախօսութեան մը քննադատ և ասանդապահ Նիքի Մելքոնեանի կողմէ: Մասնակիցները նաեւ ներկայ գտնուեցան արհեստավարժական երեկոներու, ուր քննարկեցին ինքնակենսագրութիւն գրելու արուեստը, հարցազրոյց վարելու, գործարարութեան վարքականոնները և ձեռներեցութիւնը. քննարկումները կը վարէին Մենհեթընի յաջող հայ արդիւնաբերող-գործարարներ:

Իրաքանչիւր շրջանի աւարտին մասնակիցները ներկայ կ'ըլլան խորհրդատուներու ընդունելութեան, որ տեղի կ'ունենայ Հ.Բ.Ը.Մ.-ի գլխաւոր գրասենեակին մեջ, մեծարելու համար հոգատար խորհրդատուները, որոնք հիւրընկալած էին մասնակիցները իրենց համապատասխան հաստատութիւններուն մեջ, անոնց տալով ոչ միայն անհրաժեշտ գիտելիքներ, այլև ասպարեզային խորհրդատուութիւն: Այս ծրագիրը հիմնադրուած է 1987ին:

## ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՀԵՏԱՎԱՐԺՆԵՐՈՒ ՀԵՏ

Նյու Եորքի Ասպարեզային Ամառնային Փորձառության ծրագիրը կողմնորոշումի համագործակցական ծրագիր հիմնած է Մեծն Նյու Եորքի Երիտասարդ Արհեստավարժներու Համախմբումի անդամներուն համար, ապահովելով իրաքանչիւր մասնակիցի քաղած գիտելիքներու բազմապատկումը: Շարունակելով մի քանի տարի առաջ սկսած խորհրդատուական այս նախաձեռնութիւնը, հիմնուեցաւ Նյու Եորքի Ասպարեզային Ամառնային Փորձառության Ծրագիր-Մեծն Նյու Եորքի Երիտասարդ Արհեստավարժներու Համախմբում Խորհրդատուական Ծրագիր անունով, որ տեղի կ'ունենայ ամէն ամառ: Իրաքանչիւր մասնակից կը գործակցի խորհրդատուի մը հետ, որ կ'աշխատի ուսանողի ընտրած ասպարեզին մեջ և հանդիպումներ կ'ունենայ անոր հետ ծրագրի ամբողջ տևողութեան ընթացքին քննարկելու զանազան հարցեր և ուղղութիւն ստանալու: Ծրագրի աւարտին տեղի կ'ունենայ սպասուած խորհրդատուներու երեկոն: Երիտասարդ Արհեստավարժներու խումբը նաեւ կը կազմակերպէ ամենամայ Տարեցներու Այցելութեան ծրագիրը Նյու Եորքի Հայ Տունին մեջ, որու ընթացքին մասնակիցներ կը ցուցադրեն իրենց տաղանդը: Այդպիսով ոչ միայն զուարճացնելով այնտեղ բնակող տարեցները, այլև անհատապէս ծամանակ անցընելով անոնց հետ: Տարեցները իրենց կեանքի պատմութիւնները կը բաժնեկցին երիտասարդներուն հետ:



Մեծն Նյու Եորքի Երիտասարդ Արհեստավարժներ գրուցեցին Նյու Եորքի Ասպարեզային Փորձառության 2011ի Ամառնային Ծրագրի մասնակիցներուն հետ, Խորհրդատուական Շարքավերջի ձեռնարկին:





2010ի Երևանի Ասպարեզային Փորձառության Ամառնային Ծրագրի մասնակիցներ Գառնիի տաճար այցելության ընթացքին:

## ԵՐԵՎԱՆԻ ԱՍՊԱՐԵԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2007ին իր հիմնադրությունեն ի վեր, Երևանի Ասպարեզային Փորձառության Ամառնային Ծրագիրը, բացի արհեստավարժ փորձառությունեն, մասնակիցներուն կ'ընձեռէ մշակութային հարուստ յայտագիր մը վայելելու կարելիությունը: 2010ին եւ 2011ին, 41 նոր շրջանաւարտներ միացան հետզհետէ ստուարացող մասնակիցներու խումբին՝ Գանատայէն, Պուլկարիայէն, Ֆրանսայէն, Լիբանանէն, Ռուսիայէն, Սուրիայէն, Սիւացեալ Թագաւորութենէն եւ Սիւացեալ Նահանգներէն: Աւելի սերտօրէն կապուելով իրենց հայրենիքին հետ, մասնակիցները խոր գիտակցութեամբ կ'ընկալեն իրենց արմատները, կը հաղորդակցին իրենց տարեկիցներուն հետ եւ խորամուխ կ'ըլլան Հայաստանի ամենօրեայ կեանքին մէջ: Հետեւեալ նշանաւոր հաստատութիւնները եւ կազմակերպութիւնները հիւրընկալած են մասնակիցները. Ameria Bank, Հայաստանի Ամերիկեան Համալսարան, Ժամանակակից Փորձարարական Արուեստի Հայկական Կեդրոն, Civilitas, Hetq Online, IDS Design Studio, Սփիւռքի նախարարութիւն, Մարդու Իրաւունքներու Գրասենեակ, Հայաստանի Ազգային Ժողով եւ Սուրբ Ներսէս Մեծ հիւանդանոց: Մասնակիցները իրենց վեց շաբաթուան կեցութեան ընթացքին ապրեցան նոյն յարկին տակ եւ աւանդական հրաժեշտի ընդունելութեան ժամանակ մեծարեցին իրենց համապատասխան խորհրդատուները:

Մասնակիցները նաեւ ներկայ եղան մշակութային տարբեր ձեռնարկներու, ծանօթացան երիտասարդ ձեռներեցներու, մասնակցեցան հայերէնի եւ ժողովրդական պարի դասերու, այցելեցին պատմական յուշարձաններ եւ մօտէն ծանօթացան Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ Հ.Բ.Ը.Մ.ի գործունէութեան: Ամեն ամառ յատուկ այցելութիւն մը կը կազմակերպուի դէպի Ղարաբաղ, ուր մասնակիցները կը յայտնաբերեն Արցախի բնական գեղեցկութիւնը, ինչպէս նաեւ այցելութիւն մը կու տան Լոռիի շրջանին մէջ գտնուող Հ.Բ.Ը.Մ.ի Անդրանիկ սկաուտական բանակավայրին: 2011ին մասնակիցները նաեւ եզակի առիթը ունեցան ներկայ գտնուելու «Անոյշ» օփերայի ներկայացումին:



2011-ի Երևանի Փորձագիտական Ամառնային Ծրագրի մասնակից ուսնողներ, իրենց մշակութային դասախօսութիւններէն մէկուն ընթացքին:



Աշխատանքային երկար օրէ մը ետք, 2010ի Երևանի Ասպարեզային Փորձառության Ամառնային Ծրագրի մասնակիցներ պապեթպոլի բարեկամական մրցում մը ունեցան:





2011ի Մոսկուայի Ասպարեզային Փորձառութեան Ամառնային Ծրագրի Ուսանողներ:

## ՄՈՍԿՈՒՍԻ ԱՍՊԱՐԷԶՍԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հ.Բ.Ը.Մ.-ի նորագոյն  
ասպարեզային  
փորձառութեան  
նախաձեռնութիւնը՝  
Մոսկուայի Ասպարեզային



Փորձառութեան Ամառնային Ծրագիրը, սկիզբ առաւ 2010ին: Ութ մասնակիցներով, որոնք Ռուսիոյ մայրաքաղաք ժամանեցին հարստացնելու իրենց արհեստավարժ փորձառութիւնը եւ կապեր հաստատելու թէ տեղաբնակ եւ թէ սփիւռքահայ հասակակից հայերու հետ: Յաջորդ տարի մասնակիցներու թիւը հասաւ 13ի, Հայաստանէն, Պրագայիէն, Գանատայէն, Ֆրանսայէն, Հոլանտայէն, Ռումանիայէն եւ Միացեալ Նահանգներէն: Մասնակիցները համապատասխանաբար հինգ եւ վեց շաբաթ անցուցին Մոսկուայի մէջ, որ հայկական սփիւռքի մեծագոյն գաղութն է: Անոնք խորասուզուեցան առեւտուրի, վաճառականութեան եւ նորարարութեան համաշխարհային կեդրոնին մէջ: Մասնակիցները միասնաբար ապրեցան շէնքի մը մէջ:

Մասնակիցները իրենց ընտրած ասպարեզներուն գծով անվճար եւ ամբողջական ժամանակացոյցով աշխատեցան անգլիախօս աշխատանքային միջավայրի մէջ, ինչպէս Association of Russian Banks, Cigar Clan Magazine, Credit Reform Russia, Media Crat Publishing, The Moscow Times, Russian Research Center of Surgery, SKOLKOVO School of Management, Troika Dialogue, Uspensky Technikum: Մասնակիցներէն ոմանք ձգտելով աւելի լայն փորձառութեան մէկէ աւելի բնագաւառներու մէջ, որոշեցին զուգահեռաբար մասնակցիլ երկու տարբեր հաստատութիւններու մէջ ընթացող ծրագրին:

Տեղական երիտասարդական SIVAM կազմակերպութիւնը նուիրումով աջակցեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ին այս ամառնային ծրագիրը իրագործելու համար: SIVAM-ի անդամները խորհրդատուներ հանդիսացան ծրագրի մասնակիցներուն եւ կազմակերպեցին զանազան մշակութային եւ ընկերային գործունէութիւններ: Երեկոները եւ շաբաթավերջերը լի էին մշակութային եւ կրթական նիւթերու շուրջ քննարկումներով եւ ռուսերէնի տարրական եւ հայկական պարի դասերով, ինչպէս նաեւ ճանաչողական շրջապտոյտներով դէպի Մոսկուայի պատմական վայրեր եւ թանգարաններ: Տեղի ունեցաւ նաեւ հանդիպում

հայ ուսանողներու հետ, բարձրագոյն տնտեսագիտական համալսարանի մշակութային կեդրոնին մէջ: Անոնք շաբաթավերջին այցելութիւններ տուին նաեւ Ս. Փեթերսպուրկ, ուր ծանօթացան Կայսերական Ռուսիոյ մշակութային հարստութիւններուն, ներառեալ Հերմիթաժի թանգարանը, Պետրոս եւ Պաւլոս ամրոցը, ինչպէս նաեւ Հայաստանի Հիւպատոսութիւն եւ Ս. Կատարինէ Հայ Առաքելական եկեղեցին:

Ծրագրի աւարտին մասնակիցները ներկայ եղան խորհրդատուներու ընդունելութեան, ուր մեծարեցին իրենց հիւրընկալները, ինչպէս նաեւ հրաժեշտի ընթրիքի մը, նշելու իրենց յաջողութիւնները եւ երախտագիտութիւն յայտնելու մասնակիցներուն, կամաւորներուն եւ համակարգողներուն:



Ասպարեզային Ծրագրի ուսանողներ 11 Յուլիս 2010ին-- մասնակցեցան Վարդավառի ամառնային տօնին:



## ՓԱՐԻԳԻ ԱՍՊԱՐԷԱՅՑԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԾՐԱԳԻ

Փարիզի Փորձառության Ամառնային Ծրագիրը ընդարձակեց իր նպատակները Հայաստանի Ֆրանսական Համալսարանի գործարարության, իրաւագիտության և վարչարարության մասնագիտություններու չորրորդ տարուան ուսանողներուն առիթ տալով կատարելագործելու իրենց գիտելիքները: Այս ծրագրի մասնակիցներ, ոչ միայն Փարիզի, այլ նաեւ ֆրանսական ուրիշ քաղաքներու մէջ նոյնպէս կատարելագործեցին իրենց գիտելիքները: Նկատի ունենալով որ բազմաթիւ ընկերություններ կը գործեն Ռոն Ալպ շրջանին մէջ, Լիոնի Մասնաճիւղը, միանալով Փարիզի Մասնաճիւղին, հիւրընկալեց ծրագրի մասնակիցները:

Ընտրուած 33 ուսանողներ, ըստ իրենց մասնագիտություններուն, մասնակցեցան Կրենոպլի, Լիոնի, Փարիզի և Մարսելի մէջ 2010ին և 2011ին տեղի ունեցած ծրագրին: Ուսանողներ Երեւան կը վերադառնան կատարելագործելէ ետք ֆրանսերէնի իրենց գիտելիքները և մասնագիտական ձգտումները, ինչպէս նաեւ անվճար աշխատանքի դիմաց կը ստանան համալսարանական վարկանիշ:

## ԿՈՐԻՋ ԱՌԱՋՆՈՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻ

Շուրջ 20 երիտասարդներ, ինը տարբեր երկիրներէ, ընտրուած էին մասնակցելու 2010ի Հ.Բ.Ը.Մ. Եւրոպայի Կորիջ Առաջնորդութեան Ծրագրին, որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ, Մայիս 2010ին: Յայտնի իբրեւ Pro Democratia խորհրդածողով, հաւաքի մասնակիցները քննարկեցին ժողովրդավարութեան և յարակից գործընթացներու ներկայ վիճակը Հայաստանի մէջ, հարստացուցին իրենց գիտելիքները Հայաստանի տնտեսական և քաղաքական կացութեան վերաբերեալ, խորացուցին իրենց երկխօսութիւնը քաղաքական ազդեցիկ գործիչներու հետ, ինչպէս նաեւ զարգացուցին համացանցի և հաղորդամիջոցներու հետ աշխատելու իրենց կարողությունները: Անոնք որոշեցին ստեղծել հաղորդակցութեան դաշտ մը, որու սահմաններէն ներս պիտի քննարկուին այն միտքերը և գաղափարները, որոնք կարելիութիւն պիտի տան Կորիզի մասնակիցներուն տեղեկատուութիւն և ուսումնասիրություններ փոխանակելու և տարածելու, մշտապէս իրարու հետ կապի մէջ մնալու և նորանոր համագործակցական ծրագիրներ մշակելու Հ.Բ.Ը.Մ.-ի աջակցութեամբ:

2011ի Կորիզ շաբաթավերջը դարձեալ կազմակերպուած Եւրոպական Յանձնաժողովի աջակցութեամբ, տեղի ունեցաւ Պրիւքսէլի մէջ Դեկտեմբերի սկիզբը: Այս անգամ 7 երկիրներէ 13 սփիւռքահայեր՝ Հայաստանէն, Պուլկարիայէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն, Յունաստանէն, Ռումանիայէն և Ուքրանիայէն հաւաքուեցան Եւրոպական Միութեան կեդրոնին մէջ, այժմեական հարցեր քննարկելու, գաղափարներ փոխանակելու և նախաձեռնություններ հանդէս բերելու Եւրոպայի և հայ համայնքի հետ կապուած: Հիւր դասախօսներու շարքին էր Պեճիքայի Առեւտուրի Պալատի նախագահ Վալերի Սաֆարեանը: Մարդու իրաւունքներու հարցեր և կաշառակերութեան դէմ պայքարի հարցերը կեդրոնական տեղ կը զբաւեին հանդիպման օրակարգերուն վրայ:

Կորիզը հիմնադրուած է 2009ին, Եւրոպայի մէջ ապագայի հայ առաջնորդներու պատրաստութեան ի խնդիր և սկիզբ առած է թէ 2006ին և թէ 2007ին համապատասխանաբար Պրիւքսէլի և Վալանսի մէջ տեղի ունեցած և Եւրոպայի Խորհուրդին կողմէ հովանաւորուած Երիտասարդ Եւրոպացի Հայերու Համար Զարգացման Մեմիարներ և Հ.Բ.Ը.Մ.ի Ծրագիրներու Փոխանակման նախաձեռնութեան արձանագրած յաջող և սերտ համագործակցութեան որպէս արդիւնք: Մասնակիցներու ընտրութիւնը կը կայանայ ըստ անոնց ակադեմական յաջողություններուն և արհեստավարժ տուեալներուն, ինչպէս նաեւ առաջնորդական յատկություններուն և իրենց տեղական հայ համայնքին մէջ ներգրաւուածութեան:



2011ի Փարիզի Ապարելային Փորձառութեան Ծրագրի ուսանողներու և իրենց խորհրդատուներու ի պատիւ ընդունելութիւն մը կազմակերպուեցաւ Ալէք Մանուկեան Մշակութային Կեդրոնին մէջ, որուն ներկայ գտնուեցաւ Հ.Բ.Ը.Մ.ի Եւրոպայի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Ալէքսի Կեօվճեանը (ներքեւի շարք, աջէն երկրորդ) և Հ.Բ.Ը.Մ.ի Ֆրանսայի Վարչութեան անդամներ և բարեկամներ:



Կորիզ Երիտասարդական Առաջնորդներու ամենամեայ Ծրագրի մասնակիցներ 6 Դեկտեմբեր 2011ին այցելեցին Եւրոխորհրդարան, Պրիւքսէլի մէջ:



2010ի Կորիզ Երիտասարդական Առաջնորդներու Ծրագրի մասնակիցներ այցելեցին Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի Ներկայացուցչութեան գրասենակ:

# ՅԱՋՈՐԻ ՍԵՐՈՒՆԴ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ



Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագրի խորհրդատուներ, խորհրդատուներ, աջակիցներ և Հ.Բ.Ը.Մ.ի ղեկավարներ հարիւրաւոր ներկաներու հետ Հ.Բ.Ը.Մ.ի Յաջորդ Սերունդ Խորհրդատուական նոր Կեդրոնին առջև 2010ին:

## ՅԱՋՈՐԻ ՍԵՐՈՒՆԴ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագիրը երկրորդական դպրոցներու աշակերտութեան համար կրթական, մշակութային և վարքի պատշաճեցումի յատուկ միջոցառումներու գործադրութեան գծով կը շարունակէ բարերար դեր կատարել: Անցնող երկու տարիներուն ծրագիրը Vons հիմնարկութենէն ստացաւ դրամաշնորհ մը, տեղափոխուեցաւ Կլենտլիլի իր նոր կեդրոնատեղին, մեծարեց երկարամեայ խորհրդատուներ և Երիտասարդ Արհեստավարժներու Խմբաւորումին նախաձեռնութեամբ ստացաւ կրթաթոշակային յատկացում՝ երկրորդական դպրոցներէ շրջանաւարտ և համալսարան ընդունուած աշակերտներու ի նպաստ:

Օգոստոս 2010ին, ՀԲԸՄ Փաստաւեանայի կեդրոնի Պոյաճեան սրահին մէջ տեղի ունեցաւ «Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագրի Տաղանդներու Ցուցադրութիւն և Շրջանաւարտից Հանդիսութիւն» անունը կրող ամենամեայ ճրոյ ձեռնարկը: Երեկոյին ընթացքին նշուեցան ծրագիրներու յաջողութիւնները, ինչպէս նաեւ ութ խորհրդատուներ արժանացան Յաջորդ Սերունդ մրցանակին, որ կը շնորհուի անհատներու, որոնք հինգ կամ անէլի տարիներ խորհրդատու եղած են: Յաջորդ Սերունդ ծրագրի բարերարներ



Կիրակի, 26 Յունիս 2011ին, Լոս Անճելըսի Երիտասարդ Արհեստավարժներ դպրոցական կրթաթոշակներ տրամադրեցին Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագրի շրջանաւարտներին ութ յառաջադէմ ուսանողներու:

Սարգիս և Տիանա Թաթումեաններ նոյնպէս մեծարուեցան: 2010ի վերջին, Յաջորդ Սերունդ ծրագիրը փոխադրուեցաւ Կլենտլիլի իր նոր կեդրոնը, որ կը ծառայէ իբրև ծրագրի երկրորդ կեդրոնատեղի: Այդ կեդրոնը գնդաձէն ճարտարապետական կառոյց մըն է, հանձարեղ ամերիկացի ճարտարապետ Պարմինաթըր Ֆիլլըրի նախագծած կառոյցին հետետողութեամբ:

Յունիս 2011ի Տաղանդներու Ցուցադրութեան և Շրջանաւարտից հանդէսին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Բ.Ը.Մ. Լոս Անճելըսի Երիտասարդ Արհեստավարժները, որոնք կրթաթոշակներ տրամադրեցին ծրագրի արժանաւոր մասնակիցներուն: Այդ կրթաթոշակները տրամադրուեցան գնահատելու համար նաեւ գրելավարժութեան մրցումին մասնակցող աշակերտները: Երկու հարիւր ներկաներ գնահատեցին բոլոր մասնակիցները:

Երկու ամիս յետոյ, Vons Հիմնարկութիւնը Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագրին փոխանցեց 5,000 ամերիկեան տոլարի փոխգիր մը, աշակերտներու համար նախատեսուած ֆիլմերու պատրաստութեան և երաժշտական արուեստանոցի մը կահաւորման նպատակով: Վերջապէս յայտարարուեցաւ, որ Clark Magnet High School դպրոցի աշակերտ և խորհրդատու Եփրեմ Չաստարեան և իր խմբակը, կենսոլորտային ուսումնասիրութիւն մը պատրաստած ըլլալով շահած են Lexus Eco Challenge մրցոյթի առաջին մրցանակը, որ կը կազմէ 70,000 հազար տոլար: Այդ գումարով անոնք գնեցին ծովային ուսումնասիրութեանց անհրաժեշտ սարք մը, որով պիտի շարունակեն իրենց ուսումնասիրութիւնները և մասնակցին սննդանիւթերու և ուտելիքի հետազոտութեան միջ-նահանգային մրցումին:

Անցնող երկու տարիներու դրական արդիւնքներուն կարելի է վերագրել ծրագրի ընդլայնումը: Ան ներկայիս կ'ընդգրկէ 109 մասնակիցներ որոնք համադրուած են ու կը գործեն 109 խորհրդատուներու հետ: Հ.Բ.Ը.Մ.-ի Յաջորդ Սերունդ ծրագիրը կ'օժանդակէ Հարաւային Գալիֆորնիոյ հայկական ծագում ունեցող երիտասարդներուն, անոնց տրամադրելով դրական օրինակելի կերպարներ, առաջնորդութիւն և աջակցութիւն: Անհատական խորհրդատուներու միջոցով, ամենամեայ խմբային գործունէութիւններով և սեմինարներով, ծրագիրը կ'աջակցի հայ աշակերտութեան, որոնք ընտանեկան և ընկերային պայմաններու բերումով դժուար և փորձանաւոր կացութիւններու դէմ յանդիման կը գտնուին այսօրուան երբեմն լարուած դպրոցական միջավայրին մէջ:

Ամէն անոնք, որոնք հետաքրքրուած են այս ծրագրով և կը փափաքին Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագրի խորհրդատու դառնալով դրական և ուղղակի ազդեցութիւն ունենալ երիտասարդ հայու մը կեանքին մէջ, կրնան այցելել [www.agbuennext.org](http://www.agbuennext.org) կայքը:



# ՀԱՄԱԼՍԱՐՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մեպտեմբեր 2010ին, Հ.Բ.Ը. Միությունը հիմնեց համալսարանական University Outreach ծրագիրը, որուն նպատակն է հաստատել և զօրացնել Հ.Բ.Ը.Մ.-ի և աշխարհատարած գործող հայկական համալսարանական ուսանողական զանազան խումբերու միջև յարաբերությունը: Առաջին ձեռնարկը տեղի ունեցավ ծրագրի մեկնարկին ամիս մը յետոյ: «Պատրաստուի՞ր Յաջողութեան» խորհրդով տեղի ունեցաւ աշխատանքային ժողով մը, որուն ընթացքին խորհուրդներ տրուեցան արհեստավարժ կենսագրականներ և ուղեկցող նամակներ գրելու հիմնաստարբերու և հարցազրոյցներու պատրաստուելու և պատասխաններ տալու կապակցութեամբ:



Յաջողը ձեռնարկը, որ տեղի ունեցաւ Յունուար 2011ին, Նիւ Եորքի մէջ, նուիրուած էր հաղորդակցութեան միջոցներուն, ուր մանրակրկիտ կերպով ներկայացուեցան արհեստավարժ և ընկերային հաղորդակցութեան միջոցներու գործունէութեան մանրամասնութիւնները: Քննարկուեցան Facebook, LinkedIn, Twitter հաղորդակալքերու գործունէութիւնները և բացատրութիւններ տրուեցան աշխատանքի փնտռութիւնը և աշխատողի շուկայի վրայ այս կալքերուն ունեցած հսկայական ազդեցութեանց մասին: Ելեկտրոնային փոստի գործածութեան և վարքի կանոններու պահպանման մասին քննարկուեցան ներկայ աշակերտներուն կողմէ բազմաթիւ հետաքրքրական հարցեր յառաջացուցին: 2011ի վերջաւորութեան տեղի ունեցած երրորդ ձեռնարկին, Columbia համալսարանին մէջ հաւաքուած ուսանողներ քննարկեցին հրապարակային ելոյթներու և միջ-անձնային հաղորդակցութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ արդիւնատր հարցազրոյցներ վարելու վարպետութիւնը: Ուրջ տեղական համալսարաններէ մեծ թիւով ուսանողներ, Դեկտեմբեր 2011ին ժամանեցին Պոստոնի համալսարան, ներկայ գտնուելու սեմինարի մը, որ նուիրուած էր ընկերային հաղորդակցութեան միջոցներուն և գործարարութեան վարքային կանոններուն: Սեմինարը կը կոչուէր «Ընկերային հաղորդակցութեան միջոցները և ես»: Քննարկուեցան կեդրոնացան ընկերային հաղորդակցութեան միջոցներու ընձեռած կարելիութիւնները առաւելագոյն օգտագործելու, զանոնք ի նպաստ սեփական ասպարեզի յաջողութիւններուն ծառայեցնելու, ինչպէս նաեւ համացանցային նկարագրի հարցերուն վրայ:

University Outreach ծրագիրը պիտի համագործակցի ուսանողներու և դասախօսներու հետ, իրաքանչիւր կրթական տարեշրջանի ընթացքին կազմակերպելու նման ձեռնարկներ և աշխատանքային հանդիպումներ, որոնք զարկ պիտի տան ուսանողներու արհեստավարժութեան և ընկերային զարգացումին:

Հաճեցէք այցելել Հ.Բ.Ը.Մ.ի University Outreach ծրագրի համակիրներու էջը, որ կը գտնուի Facebook ընկերային կայքի վրայ ([facebook.com/agbuunioutreach](https://www.facebook.com/agbuunioutreach)).

## ԱԿԱԴԵՄԱԿԱՆՆԵՐՈՒ ԽՄԲԱԴՈՐՈՒՄ

Ստեղծուած է 2011ին, Ֆրանսայի մէջ: Տարածուած է, ստեղծելով լայնընդգրկուն մտածողութիւն և գիտելիք ունեցող հայ ուսանողներու եզակի համաշխարհային ցանց մը: Օգտագործելով ընկերային հաղորդակցութեան միջոցներու ընձեռած կարելիութիւնները, համալսարանական տարիքի անդամներ կը գործածեն Հ.Բ.Ը.Մ.-ի կեդրոնական կայքը ([www.agbuacademics.com](http://www.agbuacademics.com)), հաղորդակցելու, կրթական ասպարեզին մէջ իրարու աջակցելու, ինչպէս նաեւ իւրայատուկ զաղափարներ ու տեղեկութիւններ փոխանակելու համար:



Տարուան ընթացքին նախաձեռնութեամբ ձեռնարկներ տեղի ունեցած են նաեւ Հալէպի, Պէրուի, Պուէնոս Այրէսի, Դամասկոսի, Լոնտոնի և Մոսկուայի մէջ, որոնք մեկտեղած են լատինոս ամերիկացի աշխարհի ուսանողական առաջնակարգ հաստատութիւններէն, ի թիւս որոնց, Հարվըրտի, Փարիզի (HEC), Լոնտոնի (LSE), Մոսկուայի (MGIMO), Օքսֆորտի, Քէմպրիճի, Պուէնոս Այրէսի (Universidad de Buenos Aires), և այլ համալսարանները: Ծրագրին կ'անդամակցին 12 երկիրներէ շուրջ 400 ուսանողներ:



Տեղացի ուսանողներ շրջապատած Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Արտա Յարութիւնեանը, որ հիւր դասախօսը եղաւ Նիւ Եորքի Քոլումբիա համալսարանին մէջ 7 Դեկտեմբեր 2011ին տեղի ունեցած ասպարեզային զարգացումի նուիրուած քննարկումին:



Հ.Բ.Ը.Մ.ի Համալսարանական Հաղորդակցութեան Ծրագիրը, Պոստոնի Համալսարանի Հայկական Ակումբին հետ համագործակցաբար, ընկերային հաղորդամիջոցներու և գործարարութեան վարքականոններու մասին «Ընկերային Հաղորդամիջոցները և ես» վերնագրով խորհրդածողով մը կազմակերպեց, որ տեղի ունեցաւ 2 Դեկտեմբեր 2011ին: Գլխաւոր բանախօսը The Castle Group ընկերութեան հանրային կապերու փոխ-նախագահ Հիլարի Ալլըրտն էր:




Ակադեմականներու հաղորդակցական ծրագրի Լոնտոնի ձեռնարկը 2011ին:



# ՄԱՍՆԱՃԻՂԵՐ



8 Մայիս 2011ին, Պեյրուսի Հ.Ե.Ը.-Անդրանիկը հազարաւոր հանդիսականներու ներկայութեամբ փառատօնով մը նշեց իր հիմնադրութեան 80-ամեակը:





# ԱՓՐԻԿԷ / ԱՄԻԱ / ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔ

## ԿԻՂՈՍ

**Լաոնաքա** Մայիս 2011ին, Կիպրոսի նախագահ Տեմեթրիս Խրիսթոֆիաս կտրեց հանդիսաւոր ժապաւենը եւ բացումը կատարեց Հ.Բ.Մ.Ս.-ի Հայկական Մշակութային Կեդրոնի նոր շէնքին, ուր կը գործէ նաեւ գրադարանը մը իբրեւ հայ մշակոյթի, ազգագրութեան եւ արուեստի հարուստ գանձարան ի նպաստ հայութեան եւ ի մասնաւորի կիպրահայութեան պատմութեան տարածման: Աւելի քան 200 անդամներ եւ հիւրեր, ներառեալ Հ.Բ.Մ.Ս.-ի պատասխանատուներ, քաղաքապետ, նախկին քաղաքապետեր եւ Կիպրոսի Ներկայացուցիչներու տան անդամներ եւ Նիկոսիայէն եւ Լիմասոլէն ժամանած միութենականներ ներկայ գտնուեցան բացումին: Մասնաճիւղի վարչութիւնը պիտի շարունակէ համագումարներ, քննարկումներ եւ մշակութային ձեռնարկներ կազմակերպել համայնքը գործունէպէս պահելու համար:

**Նիկոսիա** Կեդրոննաւարկ յաջորդ սերունդին վրայ, Յունիս 2011ին Մասնաճիւղը հիմնեց շաբաթական արուեստներու եւ ձեռնային աշխատանքներու ծրագիր մը կեդրոնին մէջ, 4էն 15 տարեկան մանուկներու եւ պատանիներու համար: Այս ձեռնարկը դրականօրէն ընդունուեցաւ մասնակիցներու կողմէ, որոնք նոր հմտութիւններ ձեռք կը բերեն ըլլալ գծագրութեան, գունաւոր թղթային աշխատանքներու, դիմակաստեղծութեան եւ իրենց սորվածները կիրառելով, բազմապիսի եւ առատօրէն տրամադրուող նիւթերով նոր ստեղծագործութիւններ կը կատարեն: Նիկոսիոյ Մասնաճիւղը կը շարունակէ հովանաւորել Արարատ գոց դաշտի ֆութպոլի խումբը, որ 2010ի Կիպրոսի ախոյեանն էր: (Տես էջ 53)



Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Նորին Գերագանցութիւն Տիար Տեմեթրիս Խրիսթոֆիաս, 5 Մայիս 2011ին, Լաոնաքայի մէջ բացումը կատարեց Հ.Բ.Մ.Ս.-ի Հայ Մշակութային Կեդրոնի շէնքին:



Նիկոսիոյ Մասնաճիւղը իր կեդրոնին մէջ չորրորդ տարին անընդմէջ շարունակեց արուեստի եւ ձեռնային աշխատանքներու դասերը: Դասերը սկսան 4 Յունիս 2011ին:

## ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ

### Երկիր

Երկիրներ ուր կրթանպաստ ստացող համալսարանականներ կ'ուսանին



Շրջանակային Յանձնաժողով



Մասնաճիւղ / Յանձնախումբ

Վարժարան / Համալսարան

Շաբաթօրեայ Դպրոց

**Երիտ. Արհեստավարժներ (ԵԱ)**

Բարեսիրական Ծրագիր

Մշակութային Ծրագիր

Բժշկական Ծրագիր

Երիտասարդական Ծրագրեր, Մարզական, Ճամբարներ, Սկաւտներ և Ասպարէզային Փորձառութեան Ծրագրեր



Վերակի, 31 Հոկտեմբեր 2010ին, Գահիրեի Հ.Բ.Ը.Ս.ի Մասնաճիղը Հելիոպոլիսի Պլքքտանեան սրահին մեջ տօնախմբեց իր հիմնադրութեան 100-ամեակը, ներկայութեամբ գաղութի երեւելի անձերու եւ զանազան մշակութային, մարզական միութիւններու եւ բարեսիրական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու:



Պէյրութի Հ.Ե.Ը.ի Մշակութային Յանձնախումբը գեղանկարչական ցուցահանդէս մը կազմակերպեց, ներկայացնելով ֆրանսահայ հռչակաւոր գեղանկարիչ Ժանսեմի գործերը: Յուցահանդէսը, որ տեղի ունեցաւ 7 Դեկտեմբեր 2011ին, կազմակերպուած էր գեղանկարչի որդայն՝ Ճանի Ժանսեմի հետ համագործակցաբար:



Լիբանանի Հ.Բ.Ը.Ս.ի վարժարաններու շրջանաւարտներ հաւաք մը կազմակերպեցին Յունիս 2010ին:

**ԵԳԻՍՏՍ**

**Գահիրեի** Հ.Բ.Ը.Ս.-ի Գահիրեի Մասնաճիղը Հոկտեմբեր 2010ին, Հելիոպոլիսի իր կեդրոնին մեջ հայարտութեամբ տօնախմբեց իր 100-ամեակը, բարձրաստիճան հիւրերու եւ հաւատարիմ անդամներու ներկայութեամբ: Այս բարեպատեհ առիթէն օգտուելով, Մասնաճիղը պատուեց իր ամենագործունէայ անդամներէն 7 կամուրներ, որոնք ծառայած են 20 կամ աւելի տարիներ եւ վերջերանի վկայականներ յանձնեց 18 անդամներու: Խրախուսելով Հ.Բ.Ը.Ս.-ի միաւորներու միջեւ յարաբերութիւնները, Գահիրեի Մասնաճիղը Ապրիլ 2010ին հրաւիրեց Հալէպի Հ.Ե.Ը.-ի Անդրանիկ պարախումբը ելոյթ ունենալու համար, ապա Սիտնիի Մասնաճիղի Վահրամ Փափազեան Թատերախումբը Սեպտեմբերի ընթացքին թատերական ներկայացումներ տալու:

**ԻՐԱՔ**

**Պաղտատ** 2010 եւ 2011ը շատ նշանակալից էին Մասնաճիղին համար: 2010ին Մասնաճիղը նշեց Հ.Ե.Ը.-ի Օհան Երիտասարդական կազմակերպութեան 10-ամեակը եւ հիմնադրեց «Երջանիկ Թաճիրեան» ամառնային ամենօրեայ վարժարանը, որ իր առաջին ուսումնական տարուան իսկ ունեցաւ 120 աշակերտ: Նախակրթարանի տարիքի մանուկներ առիթը ունեցան գիտութեան, լեզուի, հայ մշակոյթի եւ այլ կարեւոր դասերու հետեւելու, զարգանալու եւ իրենց ժառանգութեան մասին իրենց ունեցած գիտելիքները հարստացնելու: Անոնք նաեւ իրենց տարեկիցներուն հետ բարեկամութիւններ հաստատեցին լողի, արուեստի ու ձեռային աշխատանքի պահերուն: Յաջորդ տարին Հ.Բ.Ը.Ս.-ի Պաղտատի Մասնաճիղին 100-ամեակն էր, որ տօնախմբուեցաւ մեծ խանդավառութեամբ: Այս առիթով Մասնաճիղը նոր լողաւազան մը ունեցաւ, որ ամառուան ամիսներուն մեծաթիւ անդամներ, ու մանաւանդ երիտասարդներու ժամադրավայր կը հանդիսանայ:

**ԼԻԲԱՆԱՆ**

**Պէյրութ** Լիբանանի Շրջանակային Վարչութիւնը 2011ին իր բազմաթիւ մասնաճիղերով տօնախմբեց Հ.Ե.Ը.-ի 80-Ամեակը մեծաշուք հանդիսութիւններով: Տարուան ընթացքին տեղի ունեցան յոբելէական ձեռնարկներ, ինչպէս արուեստի ցուցադրութիւններ, թատերական ներկայացումներ եւ այլն: Ամենայատկանշական ձեռնարկներէն մէկը Մայիս 2011ին տեղի ունեցած տողանցքն էր, որուն ներկայ եղան աւելի քան 2,500 հանդիսատեսներ, ի թիւս որոնց կառավարական բարձրաստիճան պաշտօնեաներ: Ներկաներու ծափահարութիւններու ներքոյ Հ.Ե.Ը.-ի մարզիկներ, սկաուտներ, աշակերտներ եւ այլ երիտասարդ անդամներ տողանցեցին: Դեկտեմբերին երկշաբաթեայ արուեստի ցուցադրութիւն մը կազմակերպուեցաւ նուիրուած ֆրանսահայ արուեստագէտ Ժանսեմին: Աւելի քան 800 արուեստասէրներ հիացան անոր 35 վիմատիպ, 33 ջրաներկ եւ 16 իւղաներկ գործերով, որոնցմէ որոշ աշխատանքներ նուիրաբերուեցան Հ.Ե.Ը.-ին: Լիբանանի մէջ տեղի ունեցած Ժանսեմի անհատական ցուցահանդէսի ընթացքին, որուն ներկայ էին արուեստագէտի որդին՝ Ժանի (Մեմերճեան) Ժանսեմ, կառավարական դէմքեր եւ գաղութի ազգայիններ: Մարտ 2011ին, «Նոյեան Տապան» Արուեստի ցուցադրահի սեփականատէր Մովսէս Հերկելեան յայտնեց Միութեան վարձայայտոյց ըլլալու իր փափաքը իր ցուցասրահէն 30 կտոր նուիրաբերելով Հ.Բ.Ը.Ս.-ին Լիբանանի կրթական ֆոնտին ի նպաստ: Ձեռնարկը 70 հազար տոլարի հասոյթ ապահովեց եւ կարելիութիւն տուաւ Հ.Բ.Ը.Ս.-ին շարունակելու աշակերտներու հովանաւորութիւնը: Յունիս 2010ին Դարուհի-



Յովակիմեան Վարժարանի շրջանաւարտները նշեցին վարժարանի 70-ամեակը հարիւրաւոր շրջանաւարտներու եւ բարեկամներու մասնակցութեամբ արտայայտելով իրենց աջակցութիւնը դպրոցին, որ իրենց ջամբած էր հայեցի դաստիարակութիւն եւ տուած էր դասընկերներ, որոնք բարեկամներ պիտի դառնային ընդմիջ:

**ՍՈՒՐԻՍ**

**Հալէպ** Հալէպի Հ.Բ.Ը.-ի «Կիւլպէնկեան» կեդրոնի օրացոյցը միշտ յագեցած է: Ասիկա զարմանալի չէ, քանի որ այդ բազմաթիւ շէնքին մէջ կը գտնուին Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովը, Հալէպի Մասնաճիւղը, Հ.Ե.Ը.-ի Գործադիր Մարմինը եւ աւելի քան երկվեցեակ մը ենթայանձնախումբեր: Հայ համայնքի անդամներ եւ միութենականներ միշտ կարելիութիւնը ունին ընտրելու բազմաթիւ ձեռնարկներէն եւ ծրագիրներէն անոնք որոնք կը հետաքրքրեն զիրենք որպէս մասնակից կամ հանդիսատես: Անցնող երկու տարիներու ընթացքին երկու հիմնական ձեռնարկներ յայտնապէս առանձանցան միւսներէն: Առաջինը Հալէպի Մասնաճիւղի 100-ամեակն էր, որ Ապրիլ 2010ին նշուեցաւ բազմաժամուրդ հանդիսատեսներու ներկայութեամբ: Երկրորդը՝ Դեկտեմբեր 2011ին Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի 80-ամեակն էր: Կեդրոնի հինգ հարիւր տեղանոց «Նագարեան» հանդիսասրահը նեղ կուգար հանդիսատեսներու հոծ բազմութեան համար, որ եկած էր ընթրշինելու մշակութային ճոխ երեկոյ մը, որու ընթացքին անդրադարձ կատարուեցաւ 1931էն ի վեր այդ ընկերակցութեան հրաշալի եւ բեղուն գործունէութեան: Մասնաճիւղի երգչախումբային, պարային, երաժշտական եւ թատերական խումբերը անխտիր իրենց ոգեւորող մասնակցութիւնը բերին երեկոյին, հանդիսատեսը ստիպելով յոտնկայս եւ բռուն ու երկարատեւ ծափահարութիւններով արտայայտելու իր գնահատանքը: Հ.Ե.Ը.-ի նուագախումբը կատարեց նոր երգ մը նուիրուած 80-ամեակին: Այս առթիւ ներկայացուեցաւ 320 էջանոց մեծադիր Ալպով-Յուշամատեան մը:

**Դամասկոս** Դամասկոսի Մասնաճիւղը միշտ բազմազան ձեռնարկներ կը ծրագրէ իր անդամները եւ գաղութը խանդավառութեան մէջ պահելու համար. երիտասարդական հաւաքներ, դասախօսութիւններ եւ ընկերային ձեռնարկներ եւ պտոյտներ եւ այլն, նուագազոյնը ամիսը երկու անգամ: Տարեկան պտոյտը դէպի Խիարա վերածուած է ասանդոյթի, ուր երիտասարդներ համատեղ ժամանակ կ'անցընեն բնութեան գիրկին մէջ, հաստատելով նաեւ ամուր բարեկամութիւններ: Հալէպէն եւ Պէրթոյէն Հ.Բ.Ը.Մ.-ի երիտասարդ անդամներ նոյնպէս մասնակցած են այս պտոյտին:

**Գամփշի** Հ.Բ.Ը.Մ.-ի Գամփշիի Մասնաճիւղը ամեն տարի Ապրիլին կը կազմակերպէ Տօնահանդէս մը նշելու քաղաքի հիմնադրութիւնը: 2010ին Մասնաճիւղի Աղթամար պարախումբը նոյնպէս մասնակցեցաւ տօնահանդէսին:



Հ.Բ.Ը.Մ.ի Հալէպի Մասնաճիւղը 11 Ապրիլ 2010ին տօնախմբեց իր հիմնադրութեան 100-ամեակը:



Ինչպէս ամեն տարի, Գամփշիի Մասնաճիւղը 17 Ապրիլ 2010ին նշեց «Գամփշիի օրը» ներկայութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի Խնամակալներու Խորհուրդի անդամ Տեր եւ Տիկին Գառնիկ եւ Անի Եագուպեաններու:



Աշակերտներ կը հետեւին Պաղտատի Հ.Բ.Ը.Մ.ի Երջանիկ Թաճիբեան Ամառնային Դպրոցի դասերուն, 2010ին:

# ԵՐՈՊԱ

**Երոպայի Երջանակային Յանձնաժողով** 2008ին իր հիմնադրությունեն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.-ի Երոպայի Երջանակային Յանձնաժողովը կարելուք քայլեր ձեռք առաւ Երոպական Միութեան երկիրներուն մէջ Հ.Բ.Ը.Մ.ի առաքելութեան եւ հայկական հարցերու մասին իրազեկութիւնը բարձրացնելու ուղղութեամբ: Յանձնաժողովի անդրանիկ խորհրդաժողովը տեղի ունեցաւ 2011ին, Պուլսարեսթի մէջ, որուն ընթացքին հանդիպում մը տեղի ունեցաւ Ռուսմանիոյ վարչապետին հետ: Աւելի ուշ, Յանձնաժողովը հովանաւորեց ֆրանսահայ լուսանկարիչ Անթուան Ակուճեանի ցուցահանդէսը, որ տեղի ունեցաւ Բարսելոնայի մէջ: Մակայն տարուան կարելուքագոյն ձեռնարկը ARMENIACA ծրագիրն էր, որուն մեկնարկը տրուեցաւ Հոկտեմբերին Երեւանի մէջ: Ծրագիրը նուիրուած է հայկական ճարտարապետական ժառանգութեան պահպանումին, թուայնացումին եւ զարգացումին: Հայկական ճարտարապետութեան տուեալներու շտեմարանի այս ծրագիրը կը վայելէ Երոպական Յանձնաժողովի հովանաւորութիւնը եւ մաս կը կազմէ «Culture 2007-2013» ծրագրին: Երիտասարդ Առաջնորդներու «Կորիզ» ծրագիրը, որ Հ.Բ.Ը. Միութեան Երոպայի Երջանակային Յանձնաժողովի նախաձեռնութիւնն է, նոյնպէս տեղի ունեցաւ 2010ին եւ 2011ին: (Յաւելեալ մանրամասնութիւններու համար տես էջ` 17)

## ԱՄՍՏՐԻԱ

**Վիեննա** Վիեննայի Մասնաճիւղը անցնող երկու տարիներուն բազմապատկեց իր ձեռնարկները գոհացում տալու համար գաղութի պահանջներուն: Մարտ 2011ին, Մասնաճիւղի հովանաւորութեամբ տեղի ունեցող մշակութային ծրագրի մը շրջագիծին մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի «Կարօս» պարախումբը հարիւրաւոր խանդավառ հանդիսատեսներու ներկայութեամբ տուաւ իր սպասուած անդրանիկ ելոյթը: (Յաւելեալ մանրամասնութիւններու համար տես էջ 41): Հայերէն սորվելու բուռն փափաք ունեցողներ հետեւեցան խօսակցական հայերէնի դասերու, զորս իրենց համար կազմակերպուեցաւ 2011ին մի քանի ամիսներու տւողութեամբ: Վիեննայի Հ.Բ.Ը.Միութիւնը, գործակցելով Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի Կրթաթոշակներու Ծրագրի մասնակիցներու հետ, կազմակերպեց դասական եւ սենեկային երաժշտութեան համերգներ, որոնք ընդհանուր առմամբ շատ լաւ ընդունուեցան գաղութին կողմէ:

## ՊՈԻԼՎԱՐԻԱ

**Հասքովօ** 2011-ի Մայիս-Յունիս ամիսներուն, Հասքովոյի Մասնաճիւղը կարգ մը ձեռնարկներ կազմակերպեց գաղութը եւ մանաւանդ երիտասարդութիւնը աշխուժացնելու նպատակով: Մասնաճիւղը Հասքովօ հրաւիրեց Հ.Բ.Ը.Մ.-ի Փլովտիի «Էրեբունի» նուագախումբը համերգ տալու արուեստասէր հասարակութեան առջեւ Մանուկներու Միջազգային Օրուան առիթով, պարգեւելով հաճելի օր մը տեղի երիտասարդութեան: Հասքովոյի եւ Փլովտիի մասնաճիւղերու ֆութպոլի խումբերու միջեւ բարեկամական մրցաշարքերը նոյնպէս նպաստեցին ձեռնարկներու զանազանութեան ապահովման նպատակին:

**Փլովտի** Փլովտիի Մասնաճիւղը միշտ նախապատուութիւն կուտայ մշակութային ձեռնարկներու, իսկ նախորդ երկու տարիները նոյնպէս տարբեր չէին կրնար ըլլալ: Մասնաճիւղը, Ապրիլ եւ Մայիս 2011ին համահովանաւորեց «Օրիորդ Մարկրիթի Թեկնածուները» թատերական ներկայացումը, որ կրկնուեցաւ Միլվընի եւ Վարնայի մէջ: Մայիս 2010ին



Երոպայի Հ.Բ.Ը.Մ.ի Երջանակային Յանձնաժողովի անդրանիկ ժողովը տեղի ունեցաւ 23 Յունուար 2010ին, Լոնտոնի Հայկական Ակումբին մէջ, որ խորհրդանշական հաւաքավայր մըն է բոլոր գաղութին համար:



Սոֆիայի Հ.Բ.Ը.Մ.ի Սենեկային Նուագախումբը զարնանային համերգ մը տուաւ 13 Մարտ 2011ին:



Երոպայի Հ.Բ.Ը.Մ.ի Երջանակային Յանձնաժողովի ատենապետ Ալեքսի Կեօվճեան կը կտրէ յոբելեական կարկանդակը, իր կողքին ունենալով Վալանսի Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղի ատենապետ Ֆիլիպ Փանտեսանը (ետեւի շարք` աջին) եւ անդամներ, Վալանսի Մասնաճիւղի 80-ամեակի ձեռնարկին, որ տեղի ունեցաւ 19 Նոյեմբեր 2011ին:



**Ֆրանսայի Շրջանակ**

- ☆ Լինոն  
Հայկական Ռատիոժամ  
Երիտ. Գործ.
- ☆ Մարսել  
Երիտ. Գործ.  
ԵՄ
- ☆ Նիս  
Փարիզ  
Շաբաթօրեայ Դպրոց  
ԵՄ  
Ահազանգ Թատերախումբ  
Գողթան Երգչախումբ  
Նուպարեան Գրադարան  
Ակադեմական  
Կորիզ Կազմակերպչական  
փորձառութեան Ծրագիր  
Քոլոնի տէ Վազանս  
Ասպար. Փորձ.  
Ամառնային Ծրագիր  
Երիտ. Գործ.
- ☆ Մեն Ծանոն / Մեն Էթին
- ☆ Վալանս
- ☆ Վիեն  
Չորեքշաբթի Դպրոց



Եւ Դեկտեմբեր 2011ին, Մասնաճիւղը երաժշտասերներուն ներկայացուց Հայաստանի Խաչատուրեան Եռեակը, համահովանաւորելով անոր համերգները: Հ.Բ.Ը.Մ.-ի Սոֆիայի եւ Վարնայի Մասնաճիւղերուն հետ համագործակցաբար, Մասնաճիւղը այդ քաղաքներուն մէջ ներկայացուց Հրանդ Տինքի «Երկու Մօտիկ Ժողովուրդ, Երկու Հեռու Դրացի» գիրքին պուլկարերէն հրատարակութիւնը: Հրանդ Տինք Հիմնադրամը Հ.Բ.Ը.Մ.-ի Փլովտիւի Մասնաճիւղին տուած էր այդ գիրքին պուլկարերէն թարգմանութեան իրաւունքը, որ իրագործուած էր Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Պուրկասի Պաքլայեան Հիմնադրամի միջոցներով, որոնց աջակցած էին նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պուլկարիոյ Մասնաճիւղերը: Տինքի Այրին՝ Տիկին Ռաքել յատուկ այդ նպատակով Պուլկարիա ժամանած էր:

**Սոֆիա** Տարիներու ընթացքին Սոֆիայի Մասնաճիւղի Մենեկային Նուագախումբը ոչ միայն տեղւոյն հայկական շրջանակներուն, այլ նաեւ ամբողջ քաղաքին մէջ լայն ճանաչում ձեռք ձգեց: 2010ին եւ 2011ին, նուագախումբը տասնեակ համերգներ ունեցաւ, ամեն անգամ լեցուն դահլիճներու առջեւ արժանանալով բոլոր ծափահարութիւններու: Այդ համերգներուն էլոյթ ունեցան հիւր արուեստագետներ եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստներու Կրթաթղթակներու Ծրագրի մասնակցիներ: Դեկտեմբեր 2010ին յատուկ համերգ մը տեղի ունեցաւ նշելու համար Սոֆիայի Հ.Բ.Ը.Մ.-ի 100-ամեակը: Յատկապէս յիշարժան նախաձեռնութիւն էր ընդգրկուն ձեռնարկներու շարքը, որ վերնագրուած էր «Քեզի Համար Հայաստան»՝ նուիրուած Հայաստանի Անկախութեան 20-ամեակին, որ տեղի ունեցաւ 2011 Սեպտեմբեր-Հոկտեմբեր

- ☆ Յունաստանի Կեդր. Յանձնաժողով
- ☆ Աթենք  
Արթաքի Գալփաբեան Վարժարան  
Երիտ. Գործ.
- ☆ Թեսալոնիկէ  
Պարախումբ

Մոսկուա ●  
Մաուրա, Փորձ.  
Ամառնային  
Ծրագիր.  
**SIVAM**

- ☆ Պուրկաս
- ☆ Տոպրիչ  
Շաբաթօրեայ Դպրոց  
Պարախումբ
- ☆ Հասքովօ  
Շաբաթօրեայ Դպրոց  
Կոմիտաս Երգչախումբ  
Երիտասարդաց  
Թատերախումբ
- ☆ Փլովտի  
Շաբաթօրեայ Դպրոց  
ԵՄ
- ☆ Երեւոնի Երգչախումբ  
Կանաչ Ճամբար  
Երիտ. Գործ.
- ☆ Րուսէ  
Շաբաթօրեայ Դպրոց
- ☆ Սլիպթա  
Շաբաթօրեայ Դպրոց
- ☆ Սլիվըն  
Շաբաթօրեայ Դպրոց
- ☆ Սոֆիա  
ԵՄ  
Մենեկային նուագախումբ  
Նուր Պարախումբ  
Ընկեր Ճամբար
- ☆ Եամպոլ  
Շաբաթօրեայ Դպրոց  
Արաուտ Երգչախումբ

**ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**

Երկիրներ ուր կրթանպաստ ստացող համալսարանականներ կ'ուսանին

- ★ Ծրջանակային Յանձնաժողով
- ☆ Մասնաճիւղ / Յանձնախումբ
- Կեդրոն / Գրասենեակ Վարժարան / Համալսարան Շաբաթօրեայ Դպրոց Երիտ.

**Արհեստավարժներ (ԵՄ)**  
Բարեսիրական Ծրագիր Մշակութային Ծրագիր Բժշկական Ծրագիր Երիտասարդական Ծրագրեր, Մարզական, Ճամբարներ, Սկաւտներ և Ասպարեգային Փորձառութեան Ծրագրեր

■ Հ.Բ.Ը.Մ. Գործընկերներ

ամիսներու ամբողջ տեւողութեան: Հարիւրաւորներ մասնակցեցան Յուցահանդէսներուն, համերգներուն եւ հասութաբեր պարահանդէսին:

## ՏՐԱՆՍ

**Լիոն** Իր մասնակցութիւնը բերելով Հայաստանի ուսանողութեան ներդրմի բացայայտման գործին, Լիոնի Մասնաճիւղը, համագործակցելով Փարիզի Մասնաճիւղին հետ, հիւրընկալեց Հայաստանի Ֆրանսական Համալսարանի ուսանողներ, որոնք կը մասնակցէին Փարիզի Ասպարեգային Փորձառութեան Ծրագրին (Մանրամասնութիւններու համար տես էջ` 17):

**Մարսել** Մարսելի Հ.Բ.Ը.Մ.-ի Մասնաճիւղի 100-ամեակի կալա-պարահանդէսը տեղի ունեցաւ Յունիս 2010ին, իբրեւ հիւր ունենալով պետական պաշտօնեաներ, դիւանագետներ, արուեստագետներ եւ բարեկամներ Պարսելոնայէն, Ժընեւէն, Իսթանպուլէն եւ Սիլանոյէն: Շաբաթավերջի յայտագիրը ճոխ եւ յազեցած էր: Մանաւանդ որ պարահանդէսին նախորդող համերգի հիւրն էր միջազգային թափնեկիր, երաժշտահան Սիշէլ Լեկրանը, որուն մայրը հայուհի է: Աւելի քան 600 հանդիսատեսներ ներկայ գտնուեցան այս համերգին: Նախորդ ամսուան ընթացքին Հայաստանի Սփիւռքի նախարարուհին Ժամանակակից հայ գեղանկարչութեան ցուցահանդէս մը կազմակերպած էր «Հայաստանի Գոյները» վերնագրով, որ տեղի ունեցած էր Հայաստանի Գեղանկարիչներու Տան մէջ հովանաւորութեամբ Հ.Բ.Ը.Մ.-ի Մարսելի Մասնաճիւղին եւ նուիրուած անոր հարիւրամեակին:

**Փարիզ** Տօնխմբելու համար Հայաստանին անկախութեան 20-ամեակը, Փարիզի Մասնաճիւղը քաղաքապետութեան հետ համատեղ «Հայաստանի Օրեր» ընդհանուր խորագրին տակ մշակութային ձեռնարկներու շարք մը կազմակերպեց Սեպտեմբեր 2011ին: Քոքթէյլ-ընդունելութիւն, համերգներ, դասախօսութիւններ, որոնց միջոցաւ հայ մշակոյթը հասանելի դարձաւ Փարիզի բնակիչներուն: Նոյն ամսուան ընթացքին Մասնաճիւղը կազմակերպեց մոնթրէալաբնակ հանրայայտ եւ մրցանակակիր ճագ -երաժիշտ Արտէն Արապեանի համերգը:

**Վալանս** Նոյեմբերի 2011ին Մասնաճիւղը նշեց իր 80-ամեակը այդ նպատակով կազմակերպելով յոբելենական շաբաթավերջ մը: Վալա-երեկոյին ներկայ էին քաղաքապետը, պետական անձնաւորութիւններ, Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարութիւնը, 200 անդամներ եւ համակիրներ: Ֆրանսահայ արուեստագետ Թորոս պատուուցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի տիտղոսով՝ իր երկարամեայ նուիրումին եւ ֆրանսահայութեան հանդէպ յանձնառութեան համար:

## ԳԵՐՄԱՆԻԱ

**Ֆրանքֆուրթ** «Երիտասարդներու Մասնակցութիւնը Ազգային Համայնքներու Կեանքին- Զանապարհի Դէպի Ժողովրդավարական քաղաքացիութիւն» վերնագրով Սիացեալ հայ-հրեական ծրագիր մը տեղի ունեցաւ Ապրիլ 2010ին Պոտսդամմեր քաղաքին մէջ, Հունգարիա: Դասախօսութիւններու եւ քննարկումներու այս շարքը կը վայելէր Եւրոպական Խորհուրդին աջակցութիւնը եւ հովանաւորութիւնը, որ տեղի ունեցաւ Պոտսդամմեր Երիտասարդական Կեդրոնին մէջ: Այս նախաձեռնութեան կազմակերպիչներէն եւ մասնակիցներէն էր Հ.Բ.Ը.Մ.ի համագործակից HAİK Միութիւնը: (Յաւելեալ մանրամասնութիւններու համար տես աջին): Յունիս 2010ին այս մարմինը կազմակերպեց յատուկ դրամահաւաքի համերգ մը, օգնելու Երիտասարդ Արհեստավարժներու ծրագիրներուն (Յաւելեալ մանրամասնութիւններու համար տես էջ 46)



26 Յունիս 2010ին Մարսելի Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղը տօնխմբեց իր 100-ամեակը, ներկայութեամբ Հայաստանի Սփիւռքի նախարարուհի Հրանտշ Յակոբեանի (ստաւած` դէպի աջ):



6 Մայիս 2011ին, Փարիզի Հ.Բ.Ը.Մ.ի Մշակութային Կեդրոնին մէջ Հ.Բ.Ը.Մ.ը ներկայացուց յայտնի պատմաբան, Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի Արեւմտեան Հայաստանին եւ Կիլիկիոյ նուիրուած գիրքը:



Հ.Բ.Ը.Մ.-HAİK (Ֆրանքֆուրթ) համագործակցութեան անդամներ ներկայ գտնուեցան հայ-հրեայ երիտասարդութեան խորհրդաժողովին, որ տեղի ունեցաւ Պոտսդամմեր մէջ, 13 Ապրիլ 2010ին, որու ընթացքին քննարկուեցան հայկական եւ հրեական սփիւռքներու համայնքային կեանքին, մտաւորականներու միջեւ երկխօսութեան, ձուլում-համարկումի, սփիւռքներու կեանքի կազմակերպման հետ առնչուող հարցեր:



## ԻՏԱԼԻԱ

**Միլան** Հ.Բ.Ը.Մ.ի տեղւոյն Մասնաճիւղը Մարտ 2010ին մշակութային ձեռնարկ մը կազմակերպեց մեծ բարերար եւ Հ.Բ.Ը.Մ.ի երկրորդ նախագահ Գալուստ Կիւլպէնկեանի ծննդեան 140-ամեակին առիթով: Յաջորդ տարի Մարտ եւ Ապրիլ ամիսներուն տեղի ունեցան երկու ֆիլմերու ցուցադրութիւններ, իսկ Մայիսին Մասնաճիւղը մեծարման երեկոյի մը ընթացքին պատուեց երեք անձեր:

## ՀՈՒԱՏՍ

**Ալմեյո** Ալմեյոյի Մասնաճիւղը վերակազմուեցաւ շնորհիւ նոր անդամներու հոսքին դէպի այս քաղաքը: Տարբեր տարիքի մօտ 400 անդամներ կանոնաւորապէս կը հաւաքուին Ալմեյոյի Մշակութային Կեդրոնին մէջ, ուր տեղի կ'ունենան ընկերային, մշակութային եւ կրթական յայտագիրներ:

## ՄՊԱՆԻԱ

**Պարսելունա** Սեպտեմբեր 2010ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Եւրոպայի Շրջանակային Յանձնաժողովի անդամներ այցելեցին Պարսելունա, ներկայ գտնուելու Պարսելունայի Հայկական Մշակութային Միութեան նոր կեդրոնի բացման արարողութեան: Այս Միութիւնը, որ կը տնօրինէ Շաբաթօրեայ դպրոց եւ ֆութպոլի խումբ մը, ինչպէս նաեւ երիտասարդական այլ գործունէութիւններ, Հ.Բ.Ը.Մ.իութեան համագործակից կազմակերպութիւն մըն է:

## ՌՈՒՍԱՏՍԱՆ

**Մոսկուա** SIVAM-ը, որ երիտասարդ հայ արհեստավարժներու կազմակերպութիւն մըն է, Հ.Բ.Ը.Մ.-ի գործակից կը հանդիսանայ արդէն տարիներէ ի վեր եւ միշտ պատրաստ է հիւրընկալելու Հ.Բ.Ը.Մ.-ի առաքելութեան եւ նպատակներու իրականացման ուղղուած ծրագիրները: Նման ձեռնարկ մը տեղի ունեցաւ Մարտ 2010ին, որու ընթացքին համալսարանական ուսանողներ ծանօթացան ՀԲԸՄ-ի Ամառնային Ասպարեգային Փորձառութեան Ծրագրին: Տեղական հեռատեսիլի կայանները լայնօրէն անդրադարձան այս ձեռնարկին: SIVAM մեծապէս կը նպաստէ նաեւ ՀԲԸՄ-ի Մոսկուայի Ամառնային Ասպարեգային Փորձառութեան Ծրագրին: (Յաւելեալ մանրամասնութիւններու համար տեսէ՛ք՝ 16)

## ՄԻԱՏԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

**Լոնտոն** Հ.Բ.Ը.Մ.-ի Լոնտոնի Մասնաճիւղը 2010ին համերգով մը նշեց իր 100-ամեակը: Համերգին յատուկ հրաւիրուած էր Հայաստանի Խաչատուրեան եռեակը: Աւելի ուշ կազմակերպուեցաւ պարահանդէս մը, որուն յաջորդեց դասական երաժշտութեան համերգ մը եւս հայ երիտասարդ երաժիշտներու մասնակցութեամբ: Մասնաճիւղը յանձնառու է գաղութին հրամցնելու մշակութային բարձրարժէք ծրագիրներ:



Միլանի Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղը 19 Մարտ 2010ին նշեց Միութեան երկրորդ նախագահ Գալուստ Կիւլպէնկեանի ծննդեան 140-ամեակը:



Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղը 2 Ապրիլ 2011ին ընթրիք մը կազմակերպեց, որուն ներկայ գտնուեցան հարիւրաւոր անդամներ:



Լոնտոնի Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղը Դեկտեմբեր 2010ին նշեց իր 100-ամեակը:

# ՀԻՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ



## ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ

- Երկիր** Երկիրներ ուր կրթանպաստ ստացող համալսարանականներ կ'ուսանին
- ★ Շրջանակային Յանձնաժողով
- ☆ Մասնաճիւղ / Յանձնախումբ Վարժարան / Համալսարան Շաբաթօրեայ Դպրոց
- Երիտ. Արհեստավարժներ (ԵԱ) Բարեսիրական Ծրագիր Մշակութային Ծրագիր
- Երիտասարդական Ծրագրեր, Մարզական, Ճամբարներ, Սկաուտներ և Ասպարեզային Փորձառութեան Ծրագրեր



**ԳԱՆԱՍՏ**

**Սոնթրեալ** Սոնթրեալի մասնաճիղը, 2003-ին ի վեր, ինը ամիս շարունակ ամեն շաբաթ կը կազմակերպէ «Մանուէլ Քէսէեան Հայագիտական Դասախօսութիւններ»-ու շարքը: Անցնող երկու տարիներուն, հայագիտական նիւթերով հետաքրքրուածներ ներկայ գտնուած են այդ դասախօսութիւններուն: Ենչուր ղնելով արուեստի վրայ, Մշակութային Յանձնախումբը ծրագրեց կարգ մը ձեռնարկներ, որոնց ընթացքին գաղութին հրամցուեցան երաժշտական եւ գեղարուեստական ստեղծագործութիւններ: Փետրուար 2010-ին, ֆրանսահայ յայտնի դաշնակահար Վահան Մարտիրոսեան հրաւիրուեցաւ համերգ տալու, իսկ Մայիս 2011-ին, ՄԻՄԱ եռեակը, որուն մաս կը կազմէն Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի Կրթաթոշակի սաներ, ներկայացուց դասական երաժշտութեան կտորներ: Յատկանշական ձեռնարկ մըն էր գեղանկարիչ Ռոպերթ Էլիբեկեանի գործերու ցուցահանդէսը, որ տեղի ունեցաւ Մայիս 2011-ին: Մասնաճիղը շարունակեց ճիգեր գործադրել օգնելու Ալէք Մանուկեան Վարժարանին: Այդ նպատակով Հոկտեմբեր 2011-ին կազմակերպեց Քայլարշաւ մը, որուն ընթացքին հազարաւոր տղար հանգանակուեցաւ ի նպաստ վարժարանին: Մասնաճիղի մարզական եւ սկաւտական աշխոյժ խումբերը շարունակեցին իրենց գործունէութիւնները: Պասքէթպոլի խումբերը Հոկտեմբեր ամիսներուն կը կազմակերպէն Շահէն Շամեան Մրցաշարքը, իրենց մրցակից Թորոնթոյի Մասնաճիղի խումբին հետ: Իսկ սկաւտական խումբը 2011-ին ստացաւ երկրի սկաւտական բարձրագոյն մրցանակը՝ առ ի գնահատանք կատարած կամաւորական աշխատանքներուն նախնինքրու հայրենիքին մէջ: (Յուելեալ տեղեկութիւններու համար տես՝ էջ 52)

**Թորոնթօ** Թորոնթոյի Մասնաճիղին կեդրոնը կը ժայ դասախօսութիւններու, ընկերային ձեռնարկներու եւ դասընթացներու վայր մը: Անցնող երկու տարիները բացառութիւն չէին: Մայիս 2011-ին, ծնողներ, անձնակազմ եւ Հ.Բ.Ը. Միութեան Զարուկեան Վարժարանի աշակերտներ, քայլարշաւի մը միջոցով հանգանակութիւն կազմակերպեցին վարժարանին ի նպաստ: Շուրջ 50 աջակիցներ, 5 քիլոմետր քայլարշաւ մը կազմակերպելով, հանգանակեցին 5,000 գանաստական տոլար, որ տրամադրուեցաւ նախակրթարանին: Նոյն տարուան ընթացքին յայտնի պատմաբան ճորճ Պուռնութեան, մի քանի դասախօսութիւններով ներկայացուց Ղարաբաղի պատմութեան նուիրուած իր գիրքը: Դասախօսութիւնները մաս կը կազմէին Հ.Բ.Ը. Միութեան նախաձեռնած շնորհանդէսներու շարքին ԱՄՆ-ի եւ Գանատայի տարածքին, որոնց ներկայ գտնուեցան հարիւրաւոր հանդիսականներ (Յուելեալ տեղեկութիւններու համար տես՝ էջ 39): Ինչպէս միշտ, Մասնաճիղի մարզական խումբերը եւ արուեստի յանձնախումբերը շարունակեցին իրենց ձեռնարկները: Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.-ի Տաղանդներու Ցուցադրութեան ընթացքին, որ տեղի կ'ունենայ ամեն տարի, խոստմնալից երաժիշտներ հանդէս եկան հայ թէ օտար քնարերգուներու եւ երգահաններու գործերու կատարումներով: 2010-ին եւ 2011-ին, Մարզական եւ Արուեստի Յանձնախումբերը շարունակեցին համակարգել պասքէթպոլի մրցաշարքերը, որոնք տեղի կ'ունենան ամեն տարուան Մայիս ամսոյն ընթացքին Սոնթրեալի մէջ: Այս մրցաշարքերը առիթ կ'ըլլան որ մարզիկներ, շաբաթական մարզումներէ ետք, ցուցադրեն իրենց մարզավիճակը:



8 Մայիս 2010-ին, Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիղի եւ Զարուկեան Վարժարանի յոբելեանները նշուեցան Միութեան կեդրոնին մէջ, տարեկան Կալա-ի մը ընթացքին:



25 Հոկտեմբեր 2011, Քէսէեան Հայագիտական Դասախօսութիւններու շարքէն տեսարան մը:



15-18 Մարտի 2010-ին, Սոնթրեալի Հ.Բ.Ը.Մ.ի Ժիրայր եւ Էլիզ Տերվիշեան սրահին մէջ տեղի ունեցաւ չորսօրեայ գրքի տօնավաճառ եւ երեք խորհրդատուօժանդներ:



7 Դեկտեմբեր 2010-ին, Կարին Յովհաննիսեան հրատարակեց իր նոր գիրքը «Մտուերներու Ընտանիքը» վերնագրով, Թորոնթոյի Մասնաճիղին կազմակերպած ձեռնարկին ընթացքին, որ տեղի ունեցաւ Ալէք Մանուկեան կեդրոնին մէջ:



Հարաւային Գալիֆորնիայի Ասպետներու Համախմբումը հիւրընկալեց Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանը, Հասան Ճէմալը եւ Փաստելա Սթէյնըրը: “Երեկոյ մը Ակադեմականի Հետ” վերնագիրը կրող ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Գալիֆորնիոյ Համալսարանին մէջ, 31 Մարտ 2011ին: Ձեռնարկը, որ խորագրուած էր “Տէր Զօրէն Օիծեռնակաբերդ, Հասան Ճէմալի Հետ Խօսակցութիւն”, իբրեւ գլխաւոր բանախօս ունէր Հայոց Յեղասպանութեան դահճապետներէն Անիտ Ճէմալ Փաշայի թող Հասան Ճէմալը: Ան կը թղթակցի Իթանսպուլի «Միլիէթ» թրքական լրատու գործակալութեան:



Փաստենա-Կլենտլէյի Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղը ներկայացուց գեղանկարիչներ Ռուբէն Մանուկեանի եւ Ալեքսանտրա Մանուկեանի գործերը, 16 Մայիս 2010ին:



Հայ Կին Համախմբումի տարեկան 5րդ խորհրդաժողովը տեղի ունեցաւ 13 Մարտ 2010ին: Խորհրդաժողովը նուիրուած էր հայ համայնքներու գոյավիճակին Միացեալ Նահանգներու մէջ: Խորհրդաժողով տեղի ունեցաւ Գալիֆորնիոյ Պետական Համալսարանի- Նորթրիճի-Ուսանողական Միութեան սրահին մէջ:

**Գալիֆորնիա**

**Ֆրեզնո** Ֆրեզնոյի Մասնաճիւղը, քաջալերելու համար արուեստը, Հոկտեմբեր 2010ին կազմակերպեց ցուցահանդէս մը, որուն մասնակցեցան Սան Եուաքին Հովիտի բոլոր տարիքներէ 30 արուեստագէտներ:

**Կլենտլէյ-Փաստենա** Սկաուտական շարունակ զօրացող խումբի, մարզական խումբերու եւ ընկերային զանազան գործունէութիւններով Մասնաճիւղը ձեռնարկներու հարուստ օրացոյցի մը վիջողով իր անդամները գործունէայ եւ յանձնառու վիճակի մը մէջ պահեց: Մասնաճիւղի տարբեր յանձնախումբերու գործունէութիւնները ընդգրկեցին մշակութային զանազան ձեռնարկներ: Այդ ձեռնարկներէն յատկանշական էին մեծանուն Բանաստեղծ Պարոյր Մեակին նուիրուած երեկոն, որ տեղի ունեցաւ Նոյեմբեր 2010ին եւ որուն ներկայ գտնուեցան 400 հանդիսականներ, Փետրուար 2011ին Յակոբ Վարդանեանի գեղանկարչական գործերու ցուցահանդէսը, որ մասնաճիւղի կեդրոնը ցուցադրահի մը վերածած էր, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը. Միութեան երկարամեայ անդամ Աւետիս Մանուկեանի մեծարման հանդիսութիւնը, Ապրիլ 2011ին: Մեծարեալը 1936ին ի վեր գործունէ անդամ եղած է Միութեան: Այս առթիւ, Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի որոշումով Մանուկեան արժանացաւ Հ.Բ.Ը.Մ.ի Պատուոյ Անդամ տիտղոսին: Հանդիսութեան ընթացքին ցուցադրուեցան մեծարեալին գեղանկարչական գործերը, որոնց հաստըքը նուիրաբերուեցաւ Մասնաճիւղին երիտասարդական գործունէութիւններուն:

Մասնաճիւղին պատրաստուած տարեկան անդրանիկ մրցաշարքը, որ տեղի ունեցաւ 2011ի գարնան, ինչպէս նաեւ Հիւսիսային Ամերիկայի Շրջանային Խաղերը, որ համախմբեց Մոնթրէալի, Սան Ֆրանսիսկո Հովիտի եւ Թորոնթոյի պատրաստուած վոլեյպոլի մարզիկները ապացուցեց որ Հ.Բ.Ը.Մ.-ի երիտասարդութեան միջեւ կայտերը զօրացնող հետաքրքրական հանդիպում մըն է:

**Հայ Կին** 2010 ին եւ 2011ին Հայ Կին Յանձնախումբը իրարու մօտ բերաւ մասնագէտներու, մտատրականներու եւ համայնքային ու տարբեր մարզերէ առաջնորդ դերներու խումբ մը, կազմակերպելով շարք մը խորհրդակցական հանդիպումներ եւ հրապարակային ելոյթներ որոնք քննարկեցին ամերիկահայերու դիմագրաւած խնդիրները: «Սփռուող Հաղորդումներու Ուժը» խորագիրը իբր գլխաւոր նիւթ ընտրուած էր կազմակերպութեան ամերիկահայ համայնքի հիմնախնդիրներուն նուիրուած 5-րդ տարեկան համագումարին, որ տեղի ունեցաւ համագործակցութեամբ Գալիֆորնիոյ Նահանգային Համալսարանի Նորթրիճի Սեռերու եւ Կանանց Ուսումնասիրութեան Կեդրոնի, Շարժարուեստի եւ Հեռատեսիլի Արուեստներու, Հայագիտական Մերտոլոյութեանց, ինչպէս նաեւ համալսարանի Ալֆա Էփսիլոն Օմեկա ուսանողական խմբակցութեան: Հմտորէն գործադրուած քննարկումներով տարբեր ասուլիսներու ընթացքին ներկաները սերտեցին թէ ինչ ձեւերով կարելի է հակազդել զանգուածային լրատուական շրջանակներու մօտ հայութեան նկատմամբ տեղ գտած ժխտական պատկերացումներուն: 6-րդ տարեկան համագումարը որ նոյնպէս տարբեր մարզեր կ'ընդգրկէր, իբր խորագիր ընտրուած էր «Երաժշտութիւնը իբր հայելի – երաժշտութիւնը ինչպէս կը ցոյցանէ ամերիկայի համայնքներու ընկերային փոխառող պայմանները», շեշտը դնելով արուեստներուն վրայ: Ձեռնարկը որ նոյնպէս տեղի ունեցաւ Նորթրիճի մէջ, կ'ընդգրկէր յայտնի յօրինողներ որոնց շարքին Armenian Public Radio խումբը, որուն կատարումները ցոյց տուին թէ մերօրեայ երիտասարդ սերունդը կարող է ինքզինք արտայայտել նորարար միջոցներով, տուրք տալով նաեւ իր արմատներուն: Շարք մը հետաքրքրական ձեռնարկներ գուրադարձեցաւ տեղի ունեցան զոյգ համագումարներուն առնչութիւն, «Կիներ ինչ կ'ակնկալեն ամուսնութենէն», կարճ կատակերգութիւն մը «Հայկական Սովորութիւններ Իբր Մէկ Մասը Մեր Ազգագրական Ժառանգութեան», դասախօսութիւն մը եւ թատերական ներկայացում մը, եւ «Ո՛վ կը հոգայ մանուկները – որբերէն մինչեւ ամուսնալուծութենէն ազդուած երախտները» հարց-պատասխանի դրութեամբ, որուն իրենց մասնակցութիւնը բերին մասնագէտ հոգեբաններ եւ դաստիարակներ:

**Սան Ֆրեանսիսկո Հովիտ** Սան Ֆրեանսիսկո Հովիտի Մասնաճիւղը շարունակեց հոգալ իր սկաուտական եւ մարզական խումբերը, ինչպէս նաեւ կազմակերպել անդամակցութիւնը քով-քովի բերող զանազան ձեռնարկներ: Վերթաններու Ենթայանձնախումբը նոյնպէս իր մասնակցութիւնը բերաւ այդ գործունէութեանց, զաղոյթին համար կրթական նիւթերու մասին կարգ մը դասախօսութիւններ կազմակերպելով: Այդ դասախօսութիւնները նուիրուած էին այսօրուան երիտասարդութեան դիմագրաւած մարտահարկներուն, ինչպէս բռնութիւնը եւ թմրամոլութիւնը: Դասախօսութիւնները անդրադարձան երիտասարդներու նկատմամբ ծնողական սիրոյ եւ գուրգուրանքի անհրաժեշտութեան հարցերուն, նկատի առնելով որ այդ վերաբերումը



կրնայ դրական ազդեցություն թողնել մոլորությունները տարուած երիտասարդներու վրայ:

**Հ.Բ.Ը.Մ.-ի Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողով-Ասպետներու** Արեւմտեան Շրջանակային Յանձնաժողովի Ասպետներու Համախմբումը մեծ տարողութեամբ դասախօսութիւն-ձեռնարկներ կը կազմակերպէր ամէն տարի: Նոյեմբեր 2010ին, Համախմբումը «Երեկոյ մը պետական անձնաւորութեան հետ» վերնագրով հանդիպում մը կազմակերպեց Հայաստանի առաջին Արտաքին գործոց նախարար եւ «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսեանի հետ: Ան խօսեցաւ «Հայաստանը Արեւելքի եւ Արեւմուտքի Միջեւ. Ժողովրդավարութեան, ինքնիշխանութեան եւ Ազգային Շահի Մարտահրաւերները» նիւթերու մասին:

Մարտ 2011ին տեղի ունեցած «Երեկոյ մը Ակադեմականի Հետ» վերնագրով ձեռնարկի գլխաւոր բանախօսը Հայոց Ցեղասպանութեան դահճապետներէն Ահմետ ճեմալ Փաշայի թոռ Հասան ճեմալն էր: Ան կը թղթակցի Բարձրագոյնի «Միլիէթ» թրքական լրատու գործակալութեան, որ հանրայայտ դարձաւ իր Հայաստան այցելութեամբ, ուր ծաղկեպսակ գետեղէց Փիժճեմալաբերդի յուշարձանին առջեւ: Ձեռնարկին միւս հիւրերն էին՝ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան եւ Հենրի Մորկընթաւուի ծոռնուհի, Հարվըրտի Մարդասիրական Նախաձեռնութեան անդամ Փամելա Սթէյնըրը: Գալիֆորնիոյ Լոս անճելըսի Համալսարանի լսարանին մէջ տեղի ունեցած այս ձեռնարկին ներկայ գտնուեցան աւելի քան 400 հանդիսականներ: Երեք բանախօսներն ալ քննարկեցին ցեղասպանութեան ճանաչման եւ հաշտութեան հարցերը:

**Հ.Բ.Ը.Մ. Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Հանձնաժողով** Աւելի քան 500 պատուաւոր հիւրեր, միութենականներ եւ համակիրներ ներկայ գտնուեցան Նոյեմբեր 2011ին Հ.Բ.Ը. Միութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովի տարեկան նուիրահաւաք-հանդիսաւոր ճաշկերոյթին, որուն ընթացքին մեծարուեցաւ լոնտոնաբնակ Դոկտ. Արմէն Սարգսեանը: Այժմ նախագահ իր իսկ հովանաւորութիւնը վայելող Euroasia House International-ին, Դոկտ. Սարգիսեան Հայաստանի առաջին դեսպանն էր Անգլիոյ եւ եւրոպական երկիրներու մօտ, ինչպէս նաեւ Հայաստանի վարչապետ եւ Հ.Բ.Ը.Մ.-ի բարերար:

**Իլլինոյ** Դեկտեմբեր 2011ին, Շիրակոյի մասնաճիւղը իր 100-Ամեակին նուիրուած ձեռնարկով մը տօնախմբեց գաղութն ներս իր հարիւր տարուան բարեփոխական, կրթական, մշակութային եւ ընկերային գործունէութիւնը: Միութեան Օնիլի Նորիստ կեդրոնին մէջ հաւաքուած 200 հիւրերուն առջեւ ելոյթ ունեցաւ Նիւ Եորքի Զուլալ Արափելյա եռեակը: Գոյուածեան Հիմնադրամի օժանդակութեամբ, Մասնաճիւղը 2011ին հիմնեց Գոյումճեան- Հ.Բ.Ը.Մ Շիրակոյ Հայկական Մարդկայնական Ուսումնասիրութիւններու Փառատօնը: Փառատօնի շրջագիծին մէջ տեղի կ'ունենան գաղութային ձեռնարկներ, ներառեալ դասախօսութիւններ, համերգներ, թատերական ներկայացումներ եւ հայ արուեստագէտներու ցուցահանդէսներ: Ձեռնարկներու շարքը սկսաւ երգահան Էրիք Հաչիքեանի «Ճամբորդութիւն Դէպի Ամասիա» մրցանակ շահած ֆիլմին ցուցադրումով, որ տեղի ունեցաւ Մայիս 2010ին: Այս ձեռնարկին յաջորդեցին երկու դասախօսութիւններ Նոյեմբեր 2011ին. «Արշիլ Կորքին եւ Վերացական Արտայայտչապաշտութեան Զարգացումը», զոր ներկայացուց Փրոֆ. Քիմ Միրվարդ Թերիոյթը եւ Փրոֆ. Արմէն Մարտապեանի՝ «Մարգելանի Հայերը եւ Անաթոլիա Գոլճը» նիւթերուն մասին:

**Մասաչուսեց** Նիւ Ինկլընտի մասնաճիւղը իր յարգանքի տուրքը մատուցեց Ռոտ Այլընտի Մասնաճիւղի երկարամեայ Ատենապետ Ուիլիելմ Ազնաւուրեանին՝ իր 45 տարիներու նուիրեալ ծառայութիւններուն համար: Յանձնարար տեղեկութիւններու համար տես՝ էջ 38

**Նիւ Եորք** Կանանց հիմնահարցերուն վրայ ուշադրութիւն սեւեռելու նպատակով, Հ.Բ.Ը.Մ.-Մ.Ա.Կ. Խմբակցութիւնը 2010ին երկու ձեռնարկներ կազմակերպեց: Մարտին տեղի ունեցած դասախօսութիւնը եւ «Անապատի Գիշերներ» վաւերագրական ֆիլմին ցուցադրութիւնը, որ կ'անդրադարձար Հայաստանի մէջ մարդկային զերեկարութեան համագոր անբարոյական աշխատանքի մղող եւելոյթներուն, իսկ Նոյեմբերի դրամահաւաքը, որ կը կրէր «Երջանիկ Մայրեր, Առողջ Մանուկներ. Մուտք Դէպի Նախաձեռնական Խնամքը Հայաստանի Մէջ» վերտառութիւնը, դրական ազդեցութիւն ունեցաւ համաշխարհային մակարդակի վրայ: Բարձրացնելու համար իրազեկութիւնը Հայաստանի գիտական վայրերու ընտանիքներու վիճակին մասին եւ նուիրատուութիւններու միջոցով օգտակար ըլլալու անոնց, Հ.Բ.Ը.Մ.-Մ.Ա.Կ. Խմբակցութիւնը առաւել ընդարձակելով իր առաքելութիւնը, միջազգային կազմակերպութիւններու ուշադրութիւնը սեւեռեց հայրենիքի ընկերային կարեւոր հարցերու վրայ: Միւս կողմէ, Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբը կը շարունակէ Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի Կրթաթոշակներու Ծրագրի մասնակից երիտասարդ երաժիշտներու համերգներու կազմակերպումը: (Այս ձեռնարկներուն մասին տես՝ էջ 43)



Հ.Բ.Ը.Մ.ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովի տարեկան Կալա-ն, 12 Նոյեմբեր 2011ին:



Հ.Բ.Ը.Մ.ի Կատարողական Արուեստի Ծրագրի մրցանակակիրներ եւ Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբի անդամներ 2010ի համերգին առաջ, որ տեղի ունեցաւ Carnegie Hall-ի Weill Recital սրահին մէջ:



Հ.Բ.Ը.Մ.ի ՄԱԿ-ի Յատուկ Յանձնախումբի ձեռնարկին՝ որ տեղի ունեցաւ 31 Մարտ 2010ին: ՄԱԿ-ի Բնակչութեան Հիմնադրամի ներկայացուցիչ Ալեթա Միլլըր Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Գրասենեակին մէջ խօսեցաւ Հայաստանի մէջ անբարոյութեան մղող բռնամիջոցներու եւ կանանց չարաշահութեան կապուած հարցերու մասին:

# ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ



## ԱՐՇԱԼԹԻՆ

**Պուէնոս Այրես** Շուրջ 500 անդամներ եւ համակիրներ, Մայիս 2011ին, ներկայութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հ.Բ.Ը. Միութեան փոխ-նախագահ Սինան Սինանեանի եւ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ ու Մասնաճիւղի առենապետ Ռուբեն Քեշիշեանի, տօնախմբեցին Մասնաճիւղին հիմնադրութեան 100-ամեակը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. պարգևատրեց Ռոսիթա Եուսէֆեանը, Ռուպերթո Մալխասեանը եւ Յարութին Մարաֆեանը՝ առ ի գնահատանք անոնց երկարամեայ ծառայութիւններուն Հ.Բ.Ը.Մ.ին: Աւելի ուշ, Հոկտեմբերին, Մասնաճիւղը իրագործեց «Պուէնոս Այրեսը կը տօնախմբէ» Հայաստանի փառատօնը, որ տեղի ունեցաւ մայրաքաղաքի կեդրոնական փողոցներէն մէկուն վրայ եւ որուն ներկայ գտնուեցան 15,000 բազմութիւն մը: Բացօթեայ այս համերգին երոյթ ունեցաւ հայրենի երաժիշտ Արա Գեղրգեան, որ հիացուց մայրաքաղաքի բնակիչները եւ զբօսաշրջիկները իր հայկական հարուստ մեղեդիներով: Համերգին մասնակցեցաւ նաեւ տեղական Միմֆոնիք Նուագախումբը՝ ղեկավարութեամբ գանատահայ խմբավար Լորի Անթունեանի, որ յատկապէս այս առիթով ժամանած էր Պուէնոս Այրես: Հ.Բ.Ը.Մ.ի հարիւր կամատր անդամներ, բոլոր յանձնախումբերէն, ճիգեր գործադրեցին յաջողցնելու աննախընթաց այս ձեռնարկը: Պուէնոս Այրեսի Մասնաճիւղը իր աջակցութիւնը բերաւ Պուէնոս Այրեսի մէջ տեղի ունեցած եօթեայ «Կամուրջ» վերնագիրը կրող հետաքրքրական ծրագրին, որ կեդրոնացած էր տեսալսողական արուեստի եւ շարժարուեստի վրայ եւ կ'անդրադառնար շարժարուեստի առաջին օրերու եւ անկախ հեռատեսիլի հարցերուն:

Հարաւային Ամերիկայի ամենամեծ գաղութը հանդիսացող Պուէնոս Այրեսի Մասնաճիւղը շարունակեց նուագազոյնը 600 հայեր - եւ ոչ հայեր հիւրընկալել իր կեդրոնին մէջ գործող եւ ժողովրդականութիւն վայելող Ուրբաթ եւ Շաբաթ գիշերներու ընթրիքները, որոնց հասոյթը կը նուիրաբերուի վարժարանի աշակերտութեան ամենողական Հայաստան այցելութիւններուն: Մասնաճիւղի Տիկնանց Յանձնախումբը շարունակեց հայկական խոհանոցի դասընթացները, իսկ շարժարուեստի սիրահարներ ներկայ գտնուեցան ֆիլմերու ցուցադրութեանց:



Շաբաթ, 14 Մայիս 2011ին, շուրջ 500 հանդիսականներ տօնախմբեցին Պուէնոս Այրեսի Մասնաճիւղի 100-ամեակը: Նագարեան հանդիսարանին մէջ տեղի ունեցած յոբելեանական ձեռնարկի Պատուոյ հիւրն էր Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ հովուապետական այցելութեամբ մը Հարաւային Ամերիկա կը գտնուէր:

**ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**

**Երկիր** Երկիրներ ուր կրթանպաստ ստացող համալսարանականներ կ'ուսանին

☆ Մասնաճիւղ / Յանձնախումբ Վարժարան / Համալսարան

**Երիտ. Արհեստավարժներ (ԵԱ)**

**Մշակութային Ծրագիր**

Երիտասարդական Ծրագրեր, Մարզական, Ճամբարներ, Սկսուտներ և Ասպարեզային Փորձառութեան Ծրագրեր



**Գորտոպա** Հոկտեմբեր 2010ին, Գորտոպայի Մասնաճիղը տօնեց իր կեդրոնի բացման 25-ամեակը: Կեդրոնը ամբողջ տարուան ընթացքին կը գործէ ամեն շաբաթ: 4էն 12 տարեկան մանուկները կը շարունակեն իրենց հաւաքները եւ տեղի կ'ունենան Ուրբաթ Օրուան գաղութային ընթրիքներ: Ընթրիքներու հատյալ տրամադարուեցաւ երիտասարդ անդամներու դէպի Հայաստան առաջին ուղևորութեան: Վերանորոգելով իր յանձնառութիւնը յաջորդ սերունդին հանդէպ, Մասնաճիղը շարունակեց ամենամեայ ամառնային ցերեկային ճամբարին՝ Քոլոնիա տէ վաքասիոնեսին կազմակերպումը: ճամբարի մասնակիցներ կ'օգտագործեն կեդրոնի լողաւազանը եւ կը մասնակցին ընկերային ձեռնարկներու: Մասնաճիղի պատանեկան Ուկրաինայի խումբը նոյնպէս կ'ունենայ իր գործունէութիւնները: Մեծ թիւով անդամներ կը մասնակցին անոր զանազան գործունէութիւններուն քաղաքի եւ դրացի շրջաններու մէջ: Գորտոպայի աղջկանց վոլէյպոլի խումբը շահեցաւ քաղաքի տեղական ախոյեանութիւնը 2010ին:

**ՊՐԱՋԷԼ**

**Սան Փաուլօ** Մասնաճիղի շուրջ 1000 անդամներ եւ համակիրներ Հոկտեմբեր 2010ին եւ 2011ին նշեցին Մասնաճիղի հիմնադրութեան տարեդարձերը: Այդ առիթներով կազմակերպուեցան ճաշկերտութիւններ, որոնց ընթացքին մեծարուեցան Մասնաճիղի երկարամեայ նուիրեալ անդամներ: Նախորդ ճաշկերտութի ընթացքին մեծարուած էր գաղութի բարերարուհիներէն Տիկին Հիլտա Տիրուհի Պուրմայեանը, որուն հանգուցեալ ամուսինը՝ Վարուժան Պուրմայեան, երկարամեայ ատենապետը եղած է Մասնաճիղին: Մեծարումի այդ ձեռնարկէն ամիսներ առաջ գնահատանքի արժանացած էր Փետրօ Անտրէ Ըաֆերեանը, իսկ Յունիսին Տիկնանց Յանձնախումբը կազմակերպեց նորաձեռութեան ձեռնարկ մը, որուն ներկայ գտնուեցան 350 հիւրեր: 47-ամեակի հաւաքին, Արիեստագիտական Մարզի մէջ Յաջողութեան՝ «Տարուան Մարդ» մրցանակին արժանացաւ Սան Փաուլոյի Պետական Համալսարանի փոխնախագահ Վահան Յակոբեանը, որ մրցանակը ստացաւ ձեռամբ գաղութի բարերարներէն Անտրէ Գիսակճեանի: Հիւրեր վայելեցին միջազգային ճանաչումի արժանացած հայրենի երաժիշտ Արա Գեորգեանի երաժշտութիւնը, որ հիւրախաղերով կ'այցելէր Հարաւային Ամերիկայի հայ գաղութները:

**ՈՒՐՈՒՎՈՒՆԵՑ**

**Մոնթելիստո** Մասնաճիղի եւ Հայաստանի Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ, Հ.Բ.Ը.Մ.ի «Կռունկ» երգչախումբը Ապրիլ-Մայիս 2011ի երկու շաբաթներուն իր անդրանիկ ելոյթները ունեցաւ Հայաստանի մէջ: Մախթոյ Ալվարօ Յակոբեանի խմբավարութեամբ, որ շրջանաւարտ է Հ.Բ.Ը.Մ.ի Նուպարեան-Մանուկեան Վարժարանէն, երգչախումբը «Քեզի Համար Հայաստան» խորագրուած իր առաջին համերգը տուաւ Երեւանի Առնօ Բաբաջանեանի անուան համերգասարհին մէջ: Հայաստանի պետական ներկայացուցիչներ եւ արուեստագետներ բուն ծափահարութիւններով ողջունեցին երգչախումբին ելոյթը, որ կատարեց Աւետիսեանի, Կոմիտասի, Տամատեանի եւ այլ հեղինակներու ստեղծագործութիւններ, ինչպէս նաեւ ժողովրդական ու հայրենասիրական երգեր: Երգչախումբին երկրորդ համերգը տեղի ունեցաւ Գիւմրիի Արուեստներու Ակադեմիայի համերգասարհին մէջ, որուն ներկայ գտնուեցան մեծ թիւով հանդիսատեսներ: Երգչախումբը հիմնուած է 1993ին եւ մասնակցած հայրենի երաժիշտ Արա Գեորգեանի «Խաղաղութիւն Աշխարհին» վերնագրով Հարաւային Ամերիկայի երկրիրներու մէջ տուած համերգներու Մոնթելիստոյի ելոյթին, 2011ին:



Գորտոպայի Մասնաճիղի երիտասարդութեան հաւաքը տեղի ունեցաւ 18 Սեպտեմբեր 2010ին:



Պրագիլի Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիղը, 24 Հոկտեմբեր 2012ին տօնախմբեց իր հիմնադրութեան 46-ամեակը, որու ընթացքին մեծարուեցաւ երկարամեայ անդամներէն Հիլտա Տիրուհի Պուրմայեան:



Մոնթելիստոյի «Կռունկ» երգչախումբը, խմբավար Ալվարօ Յակոբեանի գլխավորութեամբ, ելոյթ ունեցաւ Երեւանի Առնօ Բաբաջանեանի անուան համերգասարհին մէջ, 26 Ապրիլ 2011ին:

# ԱՒՍՏՐԱԼԻԱ



**ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**

**Երկիր** Երկիրներ ուր կրթանպաստ ստացող համալսարանականներ կ ուսանին

☆ Մասնաճիղ / Յանձնախումբ  
Վարժարան / Համալսարան  
Շաբաթօրեայ Դպրոց

**Երիտ. Արհեստավարժներ (ԵԱ)**  
Մշակութային Օրագիր  
Երիտասարդական Օրագրեր, Մարզական, Համբարներ, Սկաուտներ և Ասպարեզային Փորձառության Օրագրեր

**Սիդնի** Ալեքսանտր Նախակրթարան  
Շաբաթօրեայ Դպրոց  
**ԵԱ**  
Վահրամ Փափագեան Թատերախումբ  
**Երիտ. Գործ.**

**Մելպուռն** Հայկական Ռատիոժամ  
**Երիտ. Գործ.**

**Մելպուռն** Թեև հեռու Հայրենիքէն, այրուհանդերձ գանազան նախաձեռնութիւններու, մասնաւորաբար մշակութային ձեռնարկներու միջոցով, Հ.Բ.Ը. Միութեան Մելպուռնի յանձնառու անդամներ վառ կը պահեն ազգային ժառանգութիւնը եւ ոգին:

Գոհացում տալու համար թատերախումբ մը ունենալու տեղոյն դերասաններուն փափաքին, մասնաճիղը Հ.Բ.Ը. Միութեան «Արտաւագր» թատերախումբէն խնդրեց տրամադրել վերջին թատերախաղերու նախօրինակներէն որեւէ մէկը: Յունիս 2010ին, երկու անգամ ներկայացուեցաւ «Երկու տիկնոջ ամուսինը» թատերգութիւնը, որ գրաւեց նաեւ ոչ հայերու ուշադրութիւնը, քանի որ սպահովուած էր ներկայացման թարգմանութիւնը: Նորաստեղծ թատերախումբը այնուհետեւ հրաւիրուեցաւ Միտնի մասնաճիղին կողմէ, գաղութին հրամաններու նոյն ներկայացումը, որ արժանացաւ թատերասերներու գնահատանքին եւ ծափահարութիւններուն: Թատերախումբը անգամ մը եւս բեմ բարձրացաւ 2011ի աւարտին, այս անգամ ներկայացնելով Ռեյ Քունիի «Ով է հայրս» թատերգութիւնը:

Յուլիս 2011ին, մասնաճիղին կողմէ կազմակերպուած համերգին ելոյթ ունեցաւ Սիմա եռեակը, որուն մաս կը կազմեն Հ.Բ.Ը. Միութեան Կատարողական Արուեստի Կրթաթոշակներու Օրագրի ուսանողներ: Մասնաճիղը կը շարունակէ սեփական կեդրոնին մէջ կազմակերպել իր ամսական ամսական ճաշկերոյթները:



Մելպուռնի Մասնաճիղի անդամներ ընտանեկան դաշտնազնացութիւն մը ունեցան 2011ին:

**Սիդնի** Օգոստոս 2010ին, Ալեքսանտր Վարժարանի 20-ամեակին առիթով, մասնաճիղը կազմակերպեց ճաշկերոյթ-պարահանդէս մը, որ ոգեւորութեան եւ տեղական հաստատութիւնը զօրացնելու վճառականութեան առիթ հանդիսացաւ գաղութին համար: Նոյն տարուան ընթացքին մասնաճիղին «Վահրամ Փափագեան» թատերախումբը ներկայացուց «Ժամանակաւոր Ամուսինը» թատերգութիւնը:

Այցելելով Սիդնի, Սփիւռքի նախարարուհի Հրանտյ Յակոբեան Հ.Բ.Ը. Միութեան տեղոյն կեդրոնին մէջ տեղի ունեցած ձեռնարկին ընթացքին յատուկ մետալ մը շնորհեց մասնաճիղի առեւտրային Թորոս Պօղոսեանին՝ առ ի գնահատանք գաղութին մէջ հայապահպանման գործին մատուցած անոր ծառայութիւններուն:

Նոյն տարուան ընթացքին, Հ.Բ.Ը. Միութեան մասնաճիղին եւ անոր բարերարներուն հովանաւորութեամբ առաջին անգամ ըլլալով աննախընթաց համերգ տուաւ հայրենի Խաչատուրեան եռեակը: Մայիսին տեղի ունեցած այդ համերգներուն ներկայ գտնուեցան հարիւրաւոր երաժշտասերներ, որոնց մէջ կային նաեւ ոչ հայեր, որոնք ծափահարութիւններով ընդունեցին եռեակին կատարումները:



Հայաստանի Խաչատուրեան եռեակը, 2012ի Մայիս 6 եւ 7 օրերուն ելոյթներ ունեցաւ Սիդնիի մէջ:



# ՀԲԸՄԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐ 2010 – 2011

## ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ՝ Ռուբեն Քեշիշյան  
ԳՈՐՏՈՊԱ՝ Ընթացիկ Էրեզյան (մինչև  
Մայիս 2010), Խալիբ Փեթենյան

## ԱԻՍՏՐԱԼԻԱ

ՄԵԼՊՈՒՌՆ՝ Մարալ Չորպաճեան  
ՄԻՏՆԻ՝ Թորոս Պողոսեան

## ԱԻՍՏՐԻԱ

ՎԻԵՆՆԱ՝ Ժիրայր Պալմանեան

## ՊՐԱՋԻԼ

ՍԱՆ ՓԱՌԻԼՕ՝ Գրիգոր Մանուկեան

## ՊՈՒԼՎԱՐԻԱ

ՓԼՈՎՏԻՒ՝ Ռուբեն Չաուշեան  
ՓԼՈՎՏԻՒԻ ՄԱՍՆԱՃԻՂԻՂԻ  
ԸՆԿԵՐԱԿԻՑ ՄԱՍՆԱՃԻՂԻՇՐ՝  
ՊՈՒՐԿԱՍ՝ Յակոբ Մովսէսեան  
ՏՈՊՐԻՉ՝ Էտուարտ Քոքոնեան  
ՀԱՍՔՈՎՕ՝ Սրբուհի Տէր Անտոնեան  
ՌՈՒՍԷ՝ Պողոս Կարճանեան  
ՄԻԼԻՍԹՐԱ՝ Մկրտիչ Գալուստեան  
ՍԼԻՎԸՆ՝ Արշալիր Հուլեան  
ԵԱՄՊՈԼ՝ Սոնիա Արշալիր  
Յոզսանեան  
ՍՈՖԻԱ՝ Սոնիա Աւագեան-Պետրոսեան

## ԳԱՆԱՏԱ

ՄՈՆԹՐԷԱԼ՝ Արմեն Պաքճեան (մինչև  
Սեպտեմբեր 2011), Արամ Եագուպեան  
ԹՈՐՈՆԹՕ՝ Քնար Պասմաճեան

## ԿԻՊՐՈՍ

ԼԱՌՆԱՔԱ՝ Ստեփան Քամաքեան  
ՆԻԿՈՍԻԱ՝ Դալիթ Շահապեան (մինչև  
Մարտ 2010), Վիգեն Քեպերլեան

## ԵԳԻՊՏՈՍ

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ  
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԳԱՀԻՐԷ՝  
Պերճ Թերզեան  
ԳԱՀԻՐԷ՝ Վիգեն Ճիզմեճեան  
ԱՂԵՔՍԱՆԴԻՒ՝ Մարգրիտ  
Վարձապետեան

## ԵԹՈՎՊԻԱ

ԱՏՏԻՍ ԱՊԱՊԱ՝ Վահագն Ղարիպեան

## ԵՒՐՈՊԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՓԱՐԻՉ՝ Ալեքսի Կեովճեան  
ԼԻՈՆ՝ Միշել Սանճեան  
ՄԱՐՍԷՅԼ՝ Սահակ Քարալեքեան  
ՆԻՍ-ՔՕԹ ՏՍՁԻՐ՝ Շաքե  
Յակոբեան-Քլաուսըն  
ՓԱՐԻՉ՝ Վիվիան Էթեմեզեան (մինչև  
Յունիս 2010), Ռաֆֆի Մոնճեան  
ՄԷՆ ՇԱՄՈՆ-ՄԷՆ ԷԹԻԷՆ՝ Լեոնարտո  
Պասմաճեան  
ՎԱԼԱՆՍ՝ Ֆիլիպ Փանոսեան  
ՎԻԷՆ՝ Շարլ Փալթոպետրոսեան

## ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵՂՈՆԱԿԱՆ  
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԱԹԷՆՔ՝  
Յակոբ Ճեւճեան (մինչև Մարտ 2010),  
Տիգրան Ապասեան  
ԹԵՄՍՂՈՆԻԿԷ՝ Հայկուհի  
Փորթուզալեան

## ԻՐԱՆ

ԹԵՀՐԱՆ՝ Լեոն Յովհաննէսեան (մինչև  
Սեպտեմբեր 2010), Աստղիկ Պապայեան

## ԻՐԱՔ

ՊԱՂՏԱՏ՝ Իսկէնտեր Մեյքոնեան

## ԻՏԱԼԻԱ

ՄԻԼԱՆ՝ Կէկէ Խաչատուրեան

## ԼԻԲԱՆԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ  
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ՊԵՅՐՈՒԹ՝  
Ժերար Թիւֆէնքճեան

## ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

ՃՈՀԱՆՆԷՍՊՈՒՐԿ՝ Ժաք Ատանալեան

## ՍՈՒՐԻԱ

ՍՈՒՐԻԱՅ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ  
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ՀԱԼԷՊ՝  
Ներսէս Ներսոյեան  
ՀԱԼԷՊ՝ Յակոբ Միքայելեան  
ԴԱՄՍԿՈՍ՝ Արա Եագուպեան  
ԳԱՄԻՇԼԻ՝ Յովհաննէս Արոյեան  
ԼԱԹԱՔԻԱ՝ Յակոբ Աղամեան  
ԵԱԳՈՒՊԻՅԷ՝ Գէորգ Խաչատուրեան

## ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

ՄՈՆԹԷՎԻՏԷՕ՝ Կուսթալօ Զուլամեան  
(մինչև Օգոստոս 2011), Հայկազուն  
Մոմճեան

## ՄԻԱՑԵԱԼ ԱՐԱՔԱԿԱՆ

ԷՄԻՐՈՒԹԻԻՆՆԵՐ  
ՏՈՒՊԱՅ՝ Հրաչ Պուռունսուզեան

## ԱՆԳԼԻԱ

ԼՈՆՏՈՆ՝ Նուշիկ Սեդրակեան

## ԱՄՆ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ  
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԼՈՍ  
ԱՆՃԵԼՈՍ՝

Հայկ Սարրլեան  
ԿԼԷՆՏԷՅԼ ՓԱՍՍՏԻՆԱ՝ Շահէ  
Սեյթլեմեզեան  
ՀԱՅ ԿԻՆ, ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ՝ Սոնա  
Եագուպեան  
ՕՐԷՆՃ ՔԱՌԻՆԹԻ՝ Գրիգոր  
Մահտեսեան  
ՍԱՆ ՏԻԷԿՕ՝ Անի Գալայճեան-  
Լանուզա  
ՍԱՆ ՖԵՐՆԱՆՏՈՅԻ ՀՈՎԻՏ՝ Յովիկ  
Այնթապլեան (2010), Արա Եսայեան  
(2011)

ՖՐԵՉՆՕ՝ Զարուհի Տէր Մկրտիչեան  
ՄԻԼԻՔՈՆ ՀՈՎԻՏ՝ Երուանդ Զօրեան  
ՇԻՔԱԿՕ, ԻԼԼԻՆՈՅ՝ Սոնա Տիօրեո  
ՆԻԻ ԻՆԿԼԸՆՏ, ՄԱՍԱՉՈՒՍԷՅ՝ Սուրէն  
Մահսերեճեան (մինչև Սեպտեմբեր  
2011), Արա Պալիքեան  
ՆԻԻ ԵՈՐՔ, ՅԱՏՈՒԿ ՉԵՆՆԱՐԿՆԵՐՈՒ  
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՒՄԲ՝ Նիլա Ֆլայթքեան  
Տիթորոնթ, ՄԻՉԻԿԸՆ՝ Նատիա  
Սարաֆեան  
ԳԼԻՎԸԸՆՏ, ՕՉԱԻՕ՝ Սեպուհ  
Սեդրակեան  
ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԵՆՍԻԼՎԱՆԻԱ՝  
Էլիզապէթ Պարոն, Քլարա Մամլեան  
ՓՐՈՎԻՏԸՆՍ, ՐՈՏ ԱՅԼԸՆՏ՝ Ուիլեամ  
Ազնաուրեան  
ՀԻՒՍԹՐԸ, ԹԷՔՍԱՍ՝ Մարգրիտ  
Օհանեան  
ՆԱԽԱԳԱՀԻ ԱԿՈՒՄԲ՝ Ռաֆֆի Պալեան  
Է Սարգիս Ճեպլեճեան



Աւելի քան եօթը հարիւր հիւրերու ներկայութեան, Cipriani- Wall Street-ի մէջ ԱՄՆ, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20րդ տարեդարձին առիթով Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան Հ.Բ.Ը. Միութեան նախագահ **Պերճ Սեդրակեանին** շնորհեց **Պատուոյ բարձրագոյն շքանշան** որ Հայաստանի Հանրապետութեան կողմէ շնորհուող գերագոյն պարգևներէն մէկն է: Պարոն Սեդրակեան շքանշանին արժանացաւ հայրենիքին մատուցած իր յատկանշական ծառայութիւններուն համար: Ցարդ այս բարձր պարգևատրումին արժանացած փոքրաթիւ անձերէն է Հ.Բ.Ը. Միութեան ցկեանս նախագահ Ալէք Մանուկեան:



Հ.Բ.Ը. Միութեան Փոխ-նախագահ **Սինան Սինանեան** արժանացաւ **Անանիա Շիրակացի մետալին**, որ կը կրէ 7րդ դարու հայ նշանաւոր գիտնականին անունը: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան մետալը յանձնեց Հայաստանի անկախութեան 20րդ տարեդարձին առիթով Սեպտեմբեր 2011-ի Լոս Անճելըսի ԱՄՆ Պէվըրի Հիլթըն պանդոկին մէջ տեղի ունեցած ճաշկերոյթի մը ընթացքին: Շիրակացիի անունը կրող այս մետալը կը շնորհուի տնտեսութեան, երկրաչափութեան, գիտութեան եւ ճարտարարուեստի բնագաւառներուն մէջ նշանակալի արւանդ ներդնողներուն:



Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան, գնահատելով Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի գանձապահ **Սէմ Սիմոնեանի** արւանդ տնտեսութեան, երկրաչափութեան, գիտութեան եւ ճարտարարուեստի բնագաւառներուն մէջ, անոր եւս Սեպտեմբեր 2011-ին շնորհեց **Անանիա Շիրակացի մետալը**: Վերջերս Սէմ Սիմոնեանի եւ իր տիկնոջ Սիլվայի, նախաձեռնութեամբ իրականացաւ ԹՈՒՄՕ ստեղծարար ճարտարարուեստներու կեդրոնը Երեւանի մէջ: Թուայնական գիտութեան նորագոյն միջոցներով օժտուած այս կեդրոնը, հիմնուած է տեղեկատուական ճարտարարուեստի եւ թուայնացումի արուեստով հետաքրքրուած 12էն 18 տարեկան երիտասարդներ ուսուցանելու նպատակով:



Որպէս գնահատանք հայութեան, ի մասնաւորի՝ Մոնթրէալի հայ համայնքին մատուցած երկարամեայ ծառայութեանց, Ապրիլ 2011-ին **Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը** պաշտօնական ընթրիքով մը Նիւ Եորքի University Club-ի մէջ պատուեց **Ղուկա Արշալիր Կոնճեանը** (ձախէն՝ վեցերորդը): Արժանատր յոբելէարը, որ հանգստեան կը կոչուէր Կեդրոնական Վարչական Ժողովի կազմէն տարիքի կանոնագրական տրամադրութեան համաձայն, որպէս Փոխ-նախագահ եւ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ երկար տարիներ շարունակ ծառայած է Հ.Բ.Ը. Միութեան: Ան կարելոր դեր ունեցած է Մոնթրէալի Ալէք Մանուկեան Վարժարանի հիմնադրումին մէջ իբր նախաձեռնող հիմնադիր:





2010ին, Հ.Բ.Ը. Միության Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ **Արիս Ադամեան** պարգևատրուեցաւ նախագահ Սարգսի (Ֆրանսա) կողմէ տրուած **Պատուոյ Ասպետի շքանշանով**, առ ի գնահատանք անոր 43-ամեայ մասնագիտական եւ զինուորական ծառայութիւններուն համար: Փարիզաբնակ ճարտարապետ Ադամեան Հ.Բ.Ը. Միության երկարամեայ անդամ է եւ Փարիզի Հ.Բ.Ը. Միության Երիտասարդաց Յանձնախումբի երբեմնի ատենապետը եւ փոխ-ատենապետը:



Հ.Բ.Ը. Միության Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ Միության Զուիցերական Իրաւավիճակի Փոխ-նախագահ **Վահէ Կայրաջ, Ս. Մեծն Գրիգորի Ասպետի շքանշանով** պատուուցեաւ Նորին Սրբութիւն Պենետիկոտո ԺԶ. Պապին կողմէ, որպէս Փարիզի Ս. Խաչ Հայ Կաթողիկէ եկեղեցոյ անդամ: Պարգևը անոր յանձնեց Ներսէս-Պետրոս ԺԹ. Հայ Կաթողիկէ Պատրիարքը Փետրուարի 2010ին, Հայ Կաթողիկէ եկեղեցոյ ընդհանուր ժողովի օրերուն, յաւարտ Ս. Պատարագի: Ս. Գրիգոր Մեծ շքանշանը, որուն պատմութիւնը կը սկսի 1831 թուականին, Վատիկանի կողմէ շնորհուող երկրորդ բարձրագոյն պարգէնն է:



Պէրուիի Հ.Բ.Ը. Միության Տեմբրճեան կեդրոնին մէջ, Նոյեմբեր 2010ին, բարերար եւ Հ.Բ.Ը. Միության Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի երկարամեայ նախկին ատենապետ Տիար **Աւետիս Տեմբրճեան** մեծարուցեալ Հ.Բ.Ը. Միության, Հ.Ե.Ը.ին, Հայ Առաքելական եկեղեցիին եւ հայ համայնքին մատուցած իր երկարամեայ ծառայութիւններուն համար: Այդ առիթով յայտարարուեցաւ, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը յոբելէարը արժանացուցած է Ս. **Ներսէս Շնորհալի շքանշանին**: Ի յաւելումս, Տիար Տեմբրճեան արժանացաւ Հ.Բ.Ը.Միության **«Պօղոս Նուպար» մետալին**, որ կը շնորհուի հայ ժողովուրդին եւ գաղութներուն մատուցուած նշանակալի ծառայութեան համար: Այս առիթով, յոբելէարը 150 հազար ամերիկեան տոլարի նուիրատուութիւն կատարեց հաւասարապէս Ս. Էջմիածնին, Հ.Բ.Ը. Միության Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովին եւ Տեմբրճեան կեդրոնին:



Նոյեմբեր 2011ին, Հ.Բ.Ը. Միության Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ **Պերճ Թերզեան**, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի կողմէ պարգևատրուեցաւ **«Մխիթար Գօշ» մետալով**, հայապահպանման ի նպաստ, ինչպէս նաեւ քաղաքական-հասարակական նշանակալի գործունէութեան համար: Աւելի կանուխ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին կողմէ Պերճ Թերզեան արժանացած էր **«Ս. Մահակ-Ս. Մեսրոպ» շքանշանին** իբրեւ գնահատանք հայութեան բերած իր ծառայութիւններուն եւ նուիրումին:



2011ին, նախագահական ապարանքին մէջ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Հ.Բ.Ը.Միության Եւրոպայի եւ Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ **Ալեքսի Կեօվճեանը** արժանացուց **«Մխիթար Գօշ» շքանշանին**, իբր գնահատանք պետութեան մատուցած ծառայութիւններուն, քաղաքական-հասարակական գործունէութեան, ինչպէս նաեւ իր նշանակալի ներդրումին դիւանագիտական, իրաւական եւ քաղաքագիտական բնագաւառներէն ներս:




Ապրիլ 2011ին, Զուիցերիոյ «Թովալեան Հիմնադրամ»ի նախագահ **Էտմոն Փիլոսեան** եւ Փոխ-ատենապետ **Անի Մեսրոպեան**, Հ.Բ.Ը.Միության նախագահ Պերճ Սեդրակեանի կողմէ արժանացան **Հ.Բ.Ը.Մ.ի Պատուատուր Անդամի** կոչումին, իբրեւ գնահատանք իրենց տեսական հայանպաստ գործունէութեան: «Թովալեան Հիմնադրամ»ը, որ Հ.Բ.Ը. Միության գործակից կազմակերպութիւնն է, հիմնուած է 1993ին Զուիցերիոյ մէջ, ի կատարումս Միության բարերար Յակոբ Թովալեանի ազգասիրական իղձերուն:



Մայիս 2011ին, Հ.Բ.Ը. Միությունն Նիւ Ինկլընտի մասնաճիւղը պատուեց իր երկարամեայ անդամներին, Փրովիտընսի մասնաճիւղի ատենապետ **Ուիլիըմ Ազնաւորեանը**, Հ.Բ.Ը. Միութեան եւ հայ գաղութին իր աւելի քան 45-ամեայ ծառայութեան եւ նուիրումին համար: Մեծարման ճաշկերոյթը տեղի ունեցաւ Ուոթըրթաունի (Մասաչուսեց) Հ.Բ.Ը. Միութեան կեդրոնին մէջ: Ազնաւորեան անձնական նախաձեռնութեամբ եւ առանձին ամբողջ յանձնախումբի մը աշխատանքները կատարած է, ամենամեայ նուիրահաւաքներ կազմակերպելով Հ.Բ.Ը. Միութեան ծրագիրներուն ի նպաստ, որոնց ընթացքին հանգանակուած են հարիւր հազարաւոր տոլար: Առ ի գնահատանք իր մատուցած ծառայութիւններուն, Ազնաւորեան արժանացաւ **Հ.Բ.Ը. Միութեան Պատուոյ Անդամի** կոչումին:



Հոկտեմբեր 2011ին, Փասատենայի Վաչէ եւ Թամար Մանուկեան կեդրոնին մէջ, 600 ներկաներ մեծարեցին Փասատենայի Հ.Բ.Ը. Միութեան Արտաւազ թատերախումբի գեղարուեստական ղեկավար **Գրիգոր Մաթամեանը**: Անցնող 50 տարիներու ընթացքին, Մաթամեան աշխարհի տարբեր բեմերու վրայ բեմադրած է 75 ներկայացումներ եւ գլխաւոր դերեր խաղցած է 85 ներկայացումներու մէջ: Ան հայերէնի թարգմանած է անգլիալեզու եւ ֆրանսալեզու 20 թատերգութիւններ: Առ ի գնահատանք իր թատերական գործունէութեան, Գրիգոր Մաթամեան արժանացաւ նաեւ **Հայաստանի Մփիոջի նախարարութեան Ուիլիըմ Մարոյեան եւ Հայաստանի Մշակոյթի նախարարութեան Ոսկէ մետալներուն**:



Ականաւոր պատմաբան **Ռայմոնտ Գեորգեան**, Փարիզի Հ.Բ.Ը. Միութեան Նուպարեան գրադարանի տնօրէնը, արժանացաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի **Նախագահական Մետալին**: Ան նախագահական ապարանքին մէջ մեծարուեցաւ Հայոց Յեղասպանութեան ճանաչումին ուղղուած իր աւանդին համար, որու մարմնացումն է իր վերջին կողողային աշխատութիւնը՝ «Հայկական Յեղասպանութեան Ամբողջական Պատմութիւն»ը:



Յունիս 2010ին, Հարաւային Գալիֆորնիոյ Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի կազմակերպած յատուկ հանդիսութեան ընթացքին, Փոխ-տնօրէն **Դոկտ. Էլլի Անդրէասեան** մեծարուեցաւ **Հ.Բ.Ը. Միութեան Նախագահի ջրանշանով**, առ ի գնահատանք իր երեսունհինգամեայ կրթական ծառայութեան Միացեալ Նահանգներու Հ.Բ.Ը. Միութեան վարժարաններուն մէջ իբրեւ ուսուցիչ, փոխ-տնօրէն, տնօրէն եւ ուսումնական համակարգող:



Սեպտեմբեր 2011ին, Նիւ Եորքի մէջ Հայաստանի անկախութեան 20-ամեակին առիթով տեղի ունեցած ճաշկերոյթի ընթացքին, Հ.Բ.Ը. Միութեան Պատուոյ Անդամ **Ռիթա Պալեան** արժանացաւ նախագահ Սերժ Սարգսեանի շնորհած **Մխիթար Հերացի մետալին**, հայրենի առողջապահական համակարգին ի նպաստ կատարած իր աշխատանքներուն համար: Ռիթա Պալեան հիմնադիրն է Հայ-Ամերիկեան Մշակութային Միութեան, որ կը ղեկավարէ Երեւանի Հայ-Ամերիկեան Առողջութեան Կեդրոնը:

- ### ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄՆԵՐ
- 100-Ամեակ** Հալէպի, Պաղտատի, Պուէնտո Այրեսի, Գահիրէի, Շիքակոյի, Լոնտոնի, Մարսելի եւ Փրովտիսի Հ.Բ.Ը. Միութեան Մասնաճիւղեր
  - 80-Ամեակ** Լիբանանի եւ Սուրիոյ Հ.Բ.Ը. Միութեան Վալանսի Մասնաճիւղ
  - 70-Ամեակ** Պէրուի Դարուի-Յովակիմեան Վարժարան
  - 50-Ամեակ** Հալէպի Հ.Բ.Ը. Պէտրոս Ադամեան Թատերախումբ
  - 40-Ամեակ** Մոնթրէալի Ալէք Մանուկեան Վարժարան
  - 35-Ամեակ** Գանդկա Փարքի Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան
  - 30-Ամեակ** Փասատենայի Արտաւազ Թատերախումբ
  - 25-Ամեակ** Գորտոպայի Կեդրոն/ Փասատենայի Սկաւտական Շարժում
  - 20-Ամեակ** Միտնիի Ալէքսանտր Վարժարան
  - 10-Ամեակ** Հ.Բ.Ը. Պաղտատի Օհան Երիտասարդական Խումբեր
  - 5-Ամեակ** Փասատենայի Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարան



# ՅԱՏՈՒԿ ՇՐՁԱՅՅԵՐ



Հ.Բ.Ը.Մ.ի Փարիզի Նուպարեան Մատենադարանի Վարիչ Ռեյնոն Գեորգեան, 3 Մայիս 2011ին Թորոնթոյի մէջ ներկայացուց իր «Հայոց Ցեղասպանութեան Ամբողջական Պատմութիւն» գիրքը :

## ՃՈՐՃ ՊՈՒՆՈՒԹԵԱՆԻ ՆՈՐԱԳՈՅ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հ.Բ.Ը. Միութեան հովանաւորութեամբ, Նոյեմբեր 2011ին սկսեալ, գանազան քաղաքներու մէջ պատմաբան Ճորճ Պունտութեան ներկայացուց իր «The Russian Survey of the Karapagh Province. A primary Source on the Demography and Economy of Karapagh in the Early 19<sup>th</sup> Century» աշխատութիւնը: Աշխատութիւնը գիտականօրէն կ'ապացուցանէ թէ՛ 1822ի տուեալներով, հայերը կազմած են Լեռնային Ղարաբաղի տարածքի եւ Զանգեզուրի գիւղական բնակչութեան ջախջախիչ մեծամասնութիւնը՝ 95 առ հարիւրը :

Հարիւրաւոր խանդավառ ունկնդիրներ ներկայ գտնուեցան Տիթորոյիթի, Մոնթրէալի, Նիւ Եորքի եւ Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոններուն մէջ տեղի ունեցած գրքի ներկայացման ձեռնարկներուն, ուր լսեցին նաեւ Պունտութեանի դասախօսութիւնները: Հեղինակին աշխատութիւնը հիմնուած է ռուս պաշտօնեաներու կատարած հետազոտութեանց վրայ, որոնք ուսումնասիրած են մահմետական հաշուապահներու հարկերու օրէնքները, ինչպէս նաեւ հարցազրոյցներ ունեցած են մահմետական պաշտօնեաներու հետ: Աշխատութեան մէջ Պունտութեան օգտուած է 350 էջերէ բաղկացած բացառիկ եւ հազուագիւտ փաստաթուղթ մը, որուն օրինակները գտանելի չեն Միացեալ Նահանգներու մէջ: Այդ վաւերագրերու մի քանի պատճեններ Պունտութեան գտած է նախկին Խ.Միութեան մէջ, զայն ձեռք բերելով Մոսկուայի Կեդրոնական գրադարանէն: Ան անգլերէնի թարգմանած է ամբողջ հետազոտութիւնը, որուն կցած է ծաւալուն ծանօթագրութիւններ եւ մեկնաբանութիւններ:



Ռկոտ. Ճորճ Պունտութեան քննարկեց 19րդ դարու սկիզբներուն Ղարաբաղի հայ բնակչութեան ժողովրդագրական հարցերուն նուիրուած իր գիրքը, 31 Մայիս 2011ին Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնին մէջ տեղի ունեցած երկու ձեռնարկներու ընթացքին:

## ՌԱՅՏՈՒՑ ԳԵՈՐԳԵԱՆ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՁԱՅՅԵՐՈՒ ԸՆԹԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒՄՈՒ ԻՐ ԱՆԳԼԵՐԷՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Փարիզի համալսարանի Institut Français de Géopolitique ինստիտուտի դասախօս, Հ.Բ.Ը.Մ.ի Նուպարեան գրադարանի տնօրէն Ռայմոնտ Գեորգեան, Հիւսիսային Ամերիկա կատարած այցելութեան ընթացքին ներկայացուց իր Հայոց ցեղասպանութեան նուիրուած «Հայկական Ցեղասպանութիւն. Ամբողջական Պատմութիւն» անգլերէն գիտական ուսումնասիրութիւնը: Աշխատութեան մէջ Գեորգեան համովչ ընդհանրացումներով վեր առած է Հայոց ցեղասպանութեան ծագումը, իրադարձութիւնները եւ ցեղասպանութեան հետեւանքները: Գեորգեան նոր պատկերացումներու լոյսին տակ, երոպական ակադեմիական շրջանակներուն կողմէ ընկալելի կը դարձնէ իր աշխատութիւնը, անոնց ուշադրութիւնը սեւեռելով Հայոց ցեղասպանութեան վերաբերող նախապէս չուսումնասիրուած աղբիւրներուն վրայ: Գեորգեան ուսումնասիրած է նաեւ թրքական ազգ-պետութեան կառուցումին եւ թրքական ինքնութեան

ձեւաւորումին վրայ Հայոց ցեղասպանութեան խաղցած դերը, ինչպէս նաեւ հետագոտած է ոյժի գաղափարախօսութիւնները, կարգը եւ պետական բռնութիւնը: Գեորգեան քննութեան առած է նաեւ հայոց դէմ գործադրուած բռնութիւններուն հետեւանքները, տեղահանութիւններուն նախանշանները, ինչպէս նաեւ ջարդարարները արդարութեան առջեւ կանգնեցնելու փորձերը: Գրքին անգլերէն հրատարակութեան լոյս ընծայումին յաջորդեց հեղինակին շրջագայութիւնը Հիւսիսային Ամերիկա: Մայիս 2011ին, Թորոնթոյի, Մոնթրէալի, Լոս Անճելըսի, Միլիքոն Հովիտի, Տիթորոյիթի եւ Նիւ Եորքի մէջ Գեորգեան ներկայացուց իր աշխատութիւնը: Բոլոր դասախօսութիւնները ներկայացուեցան հայերէնով, որոնց ներկայ գտնուեցան շուրջ 600 հանդիսականներ, որոնք եկած էին լսելու զինք եւ խօսակցելու իր հետ:



# ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՄՆԵՐ



«Աղդանիկ» պարախումբը հմայեց 500 հանդիսականները, Հալեպի Հ.Ե.Ը.ի 80-ամեակի առիթով 25 Դեկտեմբեր 2011ին տեղի ունեցած տոնախմբություններուն ընթացքին:

## ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐ ԵՒ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ՀԱՍՈՑԹՆԵՐ

2010 եւ 2011ին, Արժանիքին, Հայաստանի, Պուկլարիոյ, Գանատայի, Ֆրանսայի, Իրաքի, Ղարաբաղի, Սուրիոյ, Ուրուկուէլի եւ Միացեալ Նահանգներու տարածքին գործող ՀԲԸՄ-ի 17 երգչախումբերը եւ երաժշտական համայնքները իրենց ելոյթներուն ընթացքին կատարեցին դասական, ժամանակակից եւ էսթրատային երաժշտական գործեր: Գեղեցիկ ձայներուն, մատներու ճարտար շարժումներուն եւ վարպետ կատարումներուն շնորհիւ մեր համայնքները արժանացան մեծ թիւով հանդիսատեսներու հիացումին: Երբ եւ ուր ալ որ անոնք բեմ բարձրանային, կ'արժանային հանդիսատեսներու բուռն ծափահարություններուն եւ կատարումները կրկնելու անդադրում խնդրանքներուն:

Նախորդ երկու տարիներու ձեռնարկներուն մէջ յատկանշական էին Հայաստանի Նանսէնի անուան Հիմնադրամի հրաւերով Հալեպի Հ.Ե.Ը.ի «Կոմիտաս» երիտասարդ կազմով Սենեկային Նուագախումբին ելոյթները Գորիսի, Գիւմրիի եւ Երեւանի մէջ, Մայիս 2011ին, իսկ յաջորդ տարի՝ Հ.Բ.Ը.Մ.ի Մոնթեվիտոյի «Կոմսկ» երգչախումբին ելոյթները: Երգչախումբը յուզիչ եւ զգացական պահերով հարուստ ելոյթներ ունեցաւ Գիւմրիի եւ Երեւանի մէջ: «Կոմսկ»ի անդամներէն շատեր, երկրորդ կամ երրորդ սերունդի հայեր են, որոնք դեռեւս առաջին անգամ ըլլալով կ'այցելէին հայրենիք: Հարիւրաւոր հանդիսատեսներ ներկայ գտնուեցան երգչախումբին հայաստանեան անդրանիկ ելոյթներուն:

(Յաւելեալ տեղեկություններու համար տես՝ էջ 33):



«Գողթան» Երգչախումբը, Հայկ Սարգիսեանի ղեկավարութեամբ, Փարիզի հայ երիտասարդական խումբին «Հայաստան. Կեանքի Երկիր» վերնագրով դէպի Հայաստան մարդասիրական այցելութեան ի նպաստ դրամահաւաք կազմակերպելու նպատակով համերգ մը տուաւ 18 Դեկտեմբեր 2010ին:



Հալեպի Big Band նուագախումբի 3 Ապրիլ 2011ի ելոյթին պահ մը:



Նանսէն Հիմնադրամի հրաւերով, Հալեպի Կոմիտասի անուան Սենեկային նուագախումբը Մայիս 3-10 2010ին ելոյթներ ունեցաւ Հայաստանի մէջ:



## ՊԱՐԱՌՄԲԵՐ

Աւանդական թէ ժամանակակից հայկական պարը միշտ եղած է հայ մշակոյթի հիմնասիւներէն մէկը: Այդ պարերը, իրենց հարազատ եւ պարզ կատարողութեամբ, կամ նոր եւ արդիական բեմադրութիւններով, ներկայացուեցան Հ.Բ.Ը. Միութեան տասը պարախումբերուն կողմէ, տարբեր քաղաքներու մէջ: 2010- 2011 տարեշրջաններուն, Հ.Բ.Ը.ի Պէլրութի «Արին» եւ Հալէպի «Անդրանիկ» պարախումբերէն իւրաքանչիւրը, հանդէս եկաւ պարային նոր բեմադրութիւններով եւ խոռոնեւրամ հանդիսատեսներու առջեւ, որոնք գնահատեցին պարախումբերուն ոչ միայն հայկական, այլ նաեւ արաբական, իտալական, մոլտովական, սպանական եւ ուքրանական պարերու բարձրարուեստ կատարումները:

Մայիս 2011ին, «Արին» պարախումբի 100 անդամներ բեմ բարձրացան, վերջին անգամ էլոյթ ունենալու «Յաւերժական Ճամբորդ»ը վերտառութեամբ համերգով, որ նուիրուած էր Հ.Բ.Ը.ի հիմնադրութեան 80ամեակին: Պարախումբը, որ նախապէս կը կոչուէր «Անդրանիկ», վերանուանուեցաւ «Արին»՝ ի յիշատակ սիրելի անդամներէն Արին Չերչեանի: Պարախումբը ուրախացուց նաեւ լիբանանեան մեծ համայնքը, 2010ին էլոյթ ունենալով ԻԻՆԵՍՔՕ-ի հանդիսադրահին մէջ կազմակերպուած համերգին, իսկ Օգոստոս 2011ին՝ Պասպտաթի Մշակութային Շարքուան ձեռնարկներուն:

Շարունակելով հալէպահայ մշակութային կեանքին իր աշխոյժ մասնակցութիւնը, Հ.Բ.Ը.ը հիմնեց «Փունջ» Մանկակական Երգչախումբը: Անդրանիկ էլոյթը, որուն ընթացքին մանկահասակներ միասնաբար էլոյթ ունեցան իրենց տարեց ընկերներուն հետ, մեծ յաջողութիւն արձանագրեց:

Ինչպէս միշտ, «Անդրանիկ» պարախումբի անդամները, հայկական ժողովրդական պարերու իրենց կատարումներով հիացուցին հարիւրաւոր հանդիսատեսներ: Նոյեմբեր 2011ին, պարախումբը Շիքակոյի Հ.Բ.Ը.Միութեան մասնաճիւղին եւ «Բարեւ» թերթին կողմէ հրաւիրուեցաւ ներկայացնելու պարային իր վերջին բեմադրութիւնները: Պարախումբը 2010ին էլոյթներ ունեցած էր Միացեալ Նահանգներու կարգ մը քաղաքներու, ի շարս որոնց, Պինկհամթընի, Պոսթոնի եւ Նիւ Եորքի մէջ:

2011ին, գոհացում տալով տեղական պարախումբ ունենալու գաղութի փափաքին, Միութեան Վիեննայի մասնաճիւղը ոգեւորութեամբ յայտարարեց «Կարօտ» պարախումբին հիմնադրութիւնը: Ամիսներ տեւած փորձերէ ետք, պարախումբը Մարտին էլոյթ ունեցաւ մասնաճիւղին կողմէ կազմակերպուած մշակութային երեկոյի ընթացքին:



Հ.Բ.Ը.Մ.ի Անդրանիկ պարախումբը 2010ի աշնան էլոյթներ ունեցաւ Պինկհամթընի (Նիւ Եորք) եւ Պոսթոնի (Մասաչուսեց) մէջ:



Վիեննայի Մասնաճիւղի «Կարօտ» համոյթը, 24 Մարտի 2011ին տուաւ իր անդրանիկ էլոյթը:



Հ.Բ.Ը.ի «Արին» պարախումբը 2011ի Մայիս 20 եւ 21 օրերուն ներկայացուց «Յաւերժական Ճամբորդ» պարային բեմականացումը:



Հալէպի Հ.Բ.Ը.ի պարախումբը էլոյթ ունեցաւ 3 Ապրիլ 2011-ին:

# ԹԱՏԵՐԱՌՈՒՄԲԵՐ

Հազարավոր ոգևորում թատերասերներ ներկայ գտնուեցան Արժանթինի, Աստրալիոյ, Պուլկարիոյ, Ֆրանսայի, Պարսկաստանի, Լիբանանի, Սուրիոյ եւ Միացեալ Նահանգներու Հ.Բ.Ը.Մ.ի ութ թատերախումբերու ներկայացուցած հաճելի եւ կատակերգական թատերախաղերուն եւ կարեւոր յոբելեանական առիթներով կազմակերպուած ձեռնարկներու ելոյթներուն:

Անցնող հինգ տասնամեակներուն, Հալէպի «Պետրոս Ադաման» թատերախումբին ելոյթներուն ներկայ գտնուեցան աւելի քան տաս հազար հանդիսատեսներ: Նոյեմբեր 2011ին, քանի մը ձեռնարկներով տօնախմբուեցաւ թատերախումբին Ոսկեայ Յոբելեանը: Այդ ձեռնարկներուն շարքին էր խնամքով եւ բժախնդրութեամբ պատրաստուած ցուցահանդէր, ուր ներկայացուած էին անցնող տասնամեակներու ընթացքին թատերախումբին խաղացանկերը, ազդագրերը, ներկայացումներու զգեստները, լուսանկարները, յայտագիրները, ինչպէս նաեւ թատերախումբին պատմութեան առնչուող զանազան նիւթեր: Ձեռնարկները շարունակուեցան հայ թատրոնի պատմութեան մասին երկու դասախօսութիւններով, թատերական ներկայացումով եւ այդ առթիւ տեղի ունեցած ճաշկերոյթով:

Յատկանշական ձեռնարկ մըն էր Փաստահայի «Արտաւազ» թատերախումբին 30-ամեակին առիթով տեղի ունեցած հանդիսութիւնը, Սեպտեմբեր 2011ին, որուն ներկայ գտնուեցան հարիւրավոր հանդիսականներ: Ձեռնարկի ընթացքին ներկայացուեցաւ նաեւ 30-ամեակին առիթով հրատարակուած գրքոյկը: Թատերախումբը շարունակեց իր երկամեայ ելոյթները, որոնք միշտ անցան լեցուն դահլիճներով: Միայն 2011ին, ութ շաբաթ շարունակ, Յունուար եւ Փետրուար ամիսներուն, շաբաթը երկու անգամ թատերախումբը ներկայացուց Տերէք Պէնֆիլտի, «Չորեքշաբթի.. Սիրելիս» ներկայացումը, իսկ Նոյեմբեր եւ Դեկտեմբերին ներկայացուց Երուանդ Օտեանի «Սէր եւ Օիծաղ» ը:

Տաղանդաւոր դերասան եւ բեմադրիչ Գրիգոր Սաթամեանի՝ Հ.Բ.Ը. Միութեան եւ օտար թատերական աշխարհին բերած ծառայութիւններուն 50- ամեակին առիթով, Միութեան Պուէնոս Այրէսի մասնաճիւղը Նոյեմբեր 2011ին հիմնադրեց «Գրիգոր Սաթամեան» թատերախումբը, որ իր անդրանիկ ելոյթով ներկայացուց Ռէ Բունիի «Ով է իմ հայրը» թատերգութիւնը: Ոչ հայախօս հանդիսատեսներ գրաւելու համար բեմի վրայ, ցուցադրուող սահիկներու միջոցաւ ապահովուեցաւ ներկայացման սպաներէն թարգմանութիւնը: Ներկայացումին արձանագրած յաջողութիւնը կազմակերպիչները մղեց յաւելեալ երկու ներկայացումներ եւս տալու, խոնհերամբ բազմութեամբ թատերասրահներով:

Սաթամեան մեծարուեցաւ Հոկտեմբեր 2011ին, Փաստահայի մէջ տեղի ունեցած իր Ոսկեայ յոբելեանին նուիրուած հանդիսութեան ընթացքին, որուն ներկայ գտնուեցան 600 թատերասերներ եւ հանդիսականներ:

(Յաւելեալ տեղեկութիւններու համար տես՝ էջ 38):

Նոյեմբեր 2011ին, Հայաստանի Մշակոյթի նախարարութեան, «Նախաբեմ» Կրթական եւ Մշակութային Միութեան եւ Երեւանի Աւետիք Բաժնակէտանի անուան գրադարանին կազմակերպած «Նոստ հատիկ» ամենամեայ մանկա-պատանեկան փառատօսին Հ.Բ.Ը. Միութեան Փլովտիի Շաբաթօրեայ Վարժարանի թատերախումբը դարձաւ առաջին մրցանակակիր: Աշակերտական թատերախումբին կ'ընկերակցէին վարժարանի տնօրէնուհին, գեղարուեստական ղեկավարը եւ ծնողներ: Հայաստան այցելութեան ընթացքին պատուիրակութիւնը այցելեց Հ.Բ.Ը. Միութեան Հայաստանի Ներկայացուցչութեան գրասենեակ, մօտէն ծանօթանալու Միութեան կողմէ Հայաստանի թէ՛ Ղարաբաղի մէջ գործադրուող ծրագիրներուն:

Յուլիս 2010-ին, «Մէկ ազգ, Մէկ մշակոյթ» ծրագրով, Պէրոյթի Հ.Ե.Ը.-ի «Վահրամ Փափագեան» թատերախումբը հրաւիրուեցաւ Երեւան, ուր ելոյթներ ունեցաւ Յ. Պարոնեանի անուան թատերասրահին մէջ, ներկայացնելով Յակոբ Պարոնեանի «Շողորթրթը»: Թատերախումբը նոյն տարուան Փետրուար ամսուան երկու շաբաթավերջերուն նոյնպէս ներկայացուցած էր այդ գործերը:



Նոյեմբեր 2011ին, Հալէպի Հ.Ե.Ը.ի «Ադաման» թատերախումբը նշեց իր հիմնադրութեան 50-ամեակը:



Տեսարան՝ «Արտաւազ» թատերախումբի ներկայացուցած Երուանդ Օտեանի «Սէր եւ Օիծաղ» թատերգութենէն, բեմադրութեամբ եւ զլխաւոր դերակատարութեամբ Գրիգոր Սաթամեանի, 5 Նոյեմբեր 2011ին:



Պէրոյթի Հ.Ե.Ը.ի «Վահրամ Փափագեան» թատերախումբը, Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ 18 Փետրուար 2010ին ներկայացուց Յակոբ Պարոնեանի «Շողորթրթը», հայրենի արուեստագէտ Երուանդ Ղազանչեանի բեմադրութեամբ:



# ՆԻՒ ԵՈՐՔԻ ՅԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՔԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵԼՈՅՆԵՐ

Յունուար 2010ին, Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբին կազմակերպած դասական երաժշտութեան համերգները միջազգային տարողութիւն ստացան: Արդարեւ, Հալէպի, Պէյրութի եւ Դամասկոսի մէջ տեղի ունեցած այդ համերգներուն ներկայ գտնուեցան դասական երաժշտութեան 1,500 սիրահարներ, որոնք բարձր գնահատեցին եւ ծափոջոյններով ընդունեցին Միութեան Կատարողական Արուեստներու Յատուկ Կրթաթոշակներու Ծրագրին միջոցներով կրթաթոշակ ստացող երաժիշտներուն կատարումները:

Համատեղելով ուժերը, Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբը հովանաւորեց 4 երաժիշտներ, իսկ Միութեան տեղական մասնաճիւղեր կազմակերպեցին եւ հիւրընկալեցին համերգները, որոնց ընթացքին հնչեցին Պախի եւ Մոցարթի ստեղծագործութիւնները: Դամասկոսի մէջ տեղի ունեցած համերգը հովանաւորեց Մուրիոյ Մշակոյթի նախարարութիւնը, իսկ Պէյրութի մէջ տեղի ունեցած համերգին ներկայ գտնուեցան խորհրդարանի անդամներ, դեսպաններ, ինչպէս նաեւ հանրայայտ երաժիշտներ եւ ակադեմիականներ:

Դեկտեմբեր 2010ին եւ 2011ին, համաշխարհային հռչակ վայելող Carnegie Hall-ի Weill համերգարահին մէջ տեղի ունեցան Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբին կազմակերպած Հ.Բ.Ը. Միութեան Կատարողական Արուեստներու կրթաթոշակ ստացող երիտասարդ երաժիշտներու համերգները, որոնց ընթացքին հնչեցին հայ թէ օտար երգահաններու դասական երաժշտութեան լաւագոյն գործերը: Հ.Բ.Ը. Միութեան բարերարներուն կատարած նուիրատուութիւններուն շնորհիւ, երաժշտական այս օժանդակութիւններուն ընթացքին հանգանակուեցաւ 120,000 ամերիկեան տոլար՝ ի նպաստ Միութեան Կատարողական Արուեստներու Յատուկ Կրթաթոշակներու Ծրագրին:

2010ի համերգին, հիւրաբար ելոյթ ունեցաւ կիթառահար Թոմաս Տելվիսը, Նիւ Եորքէն, որ միանալով երիտասարդ երաժիշտներուն, ներկայացուց իր «Տարտղնուփ Օրագիր» ստեղծագործութիւնը, որ հայկական երաժշտութեան ուսումնասիրութենէն ներշնչուած յորինում մըն է: Երաժշտական այդ ստեղծագործութիւնը թելադրուած էր Հ.Բ.Ը. Միութեան Կատարողական Արուեստներու Յատուկ Կրթաթոշակներու Ծրագրին միջոցով իրականացած Հենրիկ Աբրահամեանի ստենախօսական ծրագրին համար:

2011ի համերգը նուիրուած էր Նորվեկացի մարդասէր, բեւեռախոյզ, գիտնական, Նոպելեան մրցանակի թափնէրկիր, դիւանագետ եւ հայ ժողովուրդի մեծ բարեկամ Ֆրիտեոֆ Նանսէնի (1861-1930) ծննդեան 150-ամեակին: Համերգի ընթացքին հնչեցին նորվեկացի երաժիշտ Էտվարտ Կրելկի գործերը: Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբը, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Մշտական Առաքելութեան հետ միասին, համահովանաւորեց այդ համերգը, որուն ընթացքին առաջին անգամ ըլլալով ելոյթ ունեցան նաեւ Հ.Բ.Ը. Միութեան Կատարողական Արուեստներու Յատուկ Կրթաթոշակներու Ծրագրի եւրոպական երկիրներու մէջ ուսանող երաժիշտները:

Վերոյիշեալ համերգներուն զլիաւոր ելոյթ ունեցողները Հ.Բ.Ը. Միութեան Կատարողական Արուեստներու Յատուկ Կրթաթոշակներու Ծրագրի մրցանակակիր երաժիշտներն են: Իրենց փայլուն տաղանդին շնորհիւ, անոնք աշխարհի ամենայայտնի եւ հեղինակաւոր երաժշտանոցներու եւ համալսարաններու մէջ իրենց ուսումը եւ գիտելիքները կատարելագործելու հնարաւորութիւնը ստացած են, արժանանալով նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի կրթաթոշակ մրցանակներուն: Այդ երաժշտանոցներու շարքին կարելի է յիշել Պարտի երաժշտանոցը, Հարվըրտի համալսարանը, Երեւանի Կոմիտասի երաժշտանոցը, Մենեսթրնի երաժշտական դպրոցը, Royal Northern College-ը եւ USC Thornton School of Music-ը:



Carnegie Hall-ի համերգը, 3 Դեկտեմբեր 2010ին:



Կատարողական Արուեստի Մրցանակներու Ծրագրի եզրափակիչ համերգը 31 Դեկտեմբեր 2011ին, Նիւ Եորքի մէջ:



Հ.Բ.Ը.Մ.ի Կատարողական Արուեստի Մրցանակակիրներու ելոյթը, որ տեղի ունեցաւ 31 Յունուար 2010ին Պէյրութի մէջ, Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբին հետ համագործակցութեամբ:



Հարիւրաւոր հանդիսականներ ողջունեցին Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբին եւ Հ.Բ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովին կազմակերպած համերգը Պէյրութի մէջ, 31 Յունուար 2010ին:

# «ԿԻՉԱԿԷՏ» ԵՐԿԱՄԵԱՅ ՇԱԲԱԹԱՎԵՐՁ



Կիզակետ 2011ի հիւրեր կը վայելեն ժանսեմի գեղանկարչական գործերը, որոնք ցուցադրուեցան Կալերի Մաթինեօնի մէջ, ժանսեմի որդիին՝ ժանի Սեմերճեան ժանսեմի կազմակերպութեամբ :

## Փարիզի Մէջ Տեղի Ունեցած «Կիզակետ» 2011ին՝ 40,000 Տոլարի Նուիրատուութիւն ՀԲԸՄ-ի Հեռավար Համալսարանին

Օգոստոս 4-7, 2011ին, ՀԲԸՄ-ի «Կիզակետ»ը ժամանեց Փարիզ, վեցերորդ Երկամեայ շաբաթավերջի հաւաքին, մօտ 400 մասնակիցներով, ժամանած՝ 25 տարբեր երկիրներէ: Առաջին անգամ ըլլալով նման հաւաք մը տեղի կ'ունենար Հիւսիսային Ամերիկայէն դուրս: Այս իրողութիւնը, ինչպէս նաեւ Փարիզի հմայքը նոր ուժականութիւն եւ մասնակիցներ ապահովեցին այս հաւաքին:

Հաւաքի կեդրոնատեղին Lutesia էր, ուրկէ հիւրերը կ'ուղեւորուէին դէպի քաղաքի աջափնեայ եւ ձախափնեայ հատուածները, յայտնաբերելով քաղաքի հետաքրքրական եւ բազմաբնոյթ երեւոյթներ եւ տեղեր: Առաջին երեկոյթը Հինգշաբթի օրն էր, երբ «Կիզակետ»ի հիւրերը հաւաքուեցան Crystal Lounge-ի մէջ (8<sup>րդ</sup> շրջան), մասնակցելու համար արտաքին աշխարհի մէջ մեր համայնքի առաւել մեծ դերակատարման վերաբերող քննարկումի մը, որ շուտով վերածուեցաւ կարծիքներու եւ գաղափարներու փոխանակման կենսունակ եւ եռուն առիթի մը:

Ուրբաթ օրուան ցերեկային ծրագիրը փոքր խումբերով Փարիզը աւելի մօտէն ճանչնալու նպատակը ունէր. այցելութիւններ եղան Փարիզի հայադրոշմ վայրեր՝ Կոմիտասի յուշարձան, Երեւանեան զբօսայգի, Մայր Տաճար եւ հայապատկան նորաձեւութեան սրահներ, ճաշարաններ, եւ այլն: Այդ զիշեր, հարիւրաւոր մասնակիցներ այցելեցին Փարիզի երկրորդ շրջանին մէջ գտնուող «1979 Club», հետաքրքրական ու իւրայատուկ երեկոյի մը համար:

Շաբաթ օրուան օրակարգին վրայ էին երկու ցուցահանդեսներ, մէկը՝ հանրաճանաչ ֆրանսահայ արուեստագէտ ժանսեմի գործերուն, իսկ միւսը՝ լուսանկարիչ Անթուան Ակուճեանի, «Galerie Maignon»ի մէջ, ուր հիւրերը առիթ ունեցան նաեւ ծանօթանալու ժանսեմի որդւոյն՝ ժանի Սեմերճեանի հետ, որուն հետ ընթացաւ սրտբաց զրոյց մը իր հօր՝ ժանսեմի

ստեղծագործութեան մասին: Եղաւ նաեւ հարց-պատասխանի բաժին:

Շաբաթ երեկոյեան, տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որ մասնակիցները տեղափոխեց կարծես դէպի կայսերական անցեալ. Cercle de L'Union Ineralliee-ի մէջ անոնք հիւրընկալուեցան նափոլեոնական շրջանի տուներէն մէկուն մէջ, որ ասօր վերածուած է ակումբի, նախագահական ապարանքէն մի քանի քայլ հեռաւորութեան վրայ:

Վերջին առաւօտեան, հիւրերը անգամ մը եւս հաւաքուեցան ճաշի, այս անգամ 6<sup>րդ</sup> շրջանի Alcazar ճաշարանին մէջ: Ճաշկերոյթը առիթ մըն էր հրաժեշտի եւ յաջորդիւ դարձեալ հանդիպելու խոստումներ տալու:

Փարիզի եւ Նիւ Եորքի մէջ «Կիզակետ»ի յանձնախումբը 40, 000ի հանգանակութիւն ապահովեց Հ.Բ.Ը.Մ.ի Հեռավար Համալսարանի ի նպաստ (տես՝ էջ 13), որ նոյնպէս կը հետապնդէ հայութեան միաւորման եւ գաղութներու միջեւ հաղորդակցութեան հաստատման ու ամրապնդման նպատակը:

«Կիզակետ»ը ստեղծուած է 2001ին, ոչ միայն վերամիաւորելու Հ.Բ.Ը. Միութեան երիտասարդական ծրագիրներու շրջանաւարտներ, բայց նաեւ՝ ի մի բերելու աշխարհասփիւռ հայ արհեստավարժ երիտասարդները, եւ իրենց առիթ ընծայելու կիսելու իրենց մօտեցումները մերօրեայ կարեւոր հարցերու վերաբերեալ: Այս հաւաքը նաեւ ի ցոյց կը դնէ Հ.Բ.Ը. Միութեան որակեալ ծրագիրներ, որոնք մեծ ազդեցութիւն ունին ամբողջ աշխարհի տարածքին բազմահազար հայորդիներու համար, եւ առիթ կը հանդիսանայ դրամահաւաք կազմակերպելու: «Կիզակետ»ի ցարդ վեց շաբաթավերջերուն հանգանակուած է աւելի քան 240,000 ամերիկեան տոլար ի նպաստ Հ.Բ.Ը. Միութեան զանազան ծրագիրներուն: Մեծապէս սպասուած այդ հաւաքները մինչ այժմ ընդգրկած են առաւել քան 2500 մասնակիցներ, խտացնելով Հ.Բ.Ը.Մ.ի շարքերը:



# ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՆԵՐՈՒ ՀԱԻԱՔ

«Կիզակետ»ը կը ծառայէ նաեւ որպէս Երիտասարդ Արհեստավարժներու համաժողովի գումարման առիթ: 17 Երիտասարդ Արհեստավարժներու խմբակներ եւ Երիտասարդ Արհեստավարժներու գործակիցներ մասնակցեցան այս հաւաքին, ներկայացնելով 10 երկիրներ (Հայաստան, Պուլկարիա, Գանատա, Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Լիբանան, Ռուսաստան, Միացեալ Արաբական Էմիրութիւններ եւ ԱՄՆ), քննարկելու համար համագործակցութեան եւ հետագայ աշխատանքային ծրագիրներ: Այս հետաքրքրաշարժ միջոցառումը

ունեցաւ աւելի քան 40 մասնակից ներկայացուցիչներ, ամենամեծը, որ ցարդ ունեցած էր: Ծրագիրը կը ներառէր արհեստավարժ զարգացման, համայնքային առաքելութեան եւ շրջանային ու համաշխարհային նախաձեռնութիւններու նուիրում մասնաբաժիններ եւ նպատակ կը հետապնդէր ընդլայնելու գոյութիւն ունեցող համաշխարհային ցանցը: Հանդիպումները վարեցին ԵՀ ատենապետներ: Բոլոր մասնակիցներու գործօն ներդրումը, որոնք յաճախ առաջին անգամ է որ դէմ առ դէմ կը հանդիպէին, նպաստեց հաւաքի արդիւնաւէտութեան:



«Հեռանկարներ» շաբաթավերջի աւանդական ձեռնարկներու սկիզբը, Հինգշաբթի, 4 Օգոստոս 2011ին:

-Հիւրեր կը ժամանեն մասնակցելու Կալա-ին, որ տեղի ունեցաւ Cercle de L'unionteralliee-ի մէջ:



Կիզակետ-ի մասնակիցներ հպարտօրէն ցոյց կուտան Փարիզի արտին մէջ գտնուող Երեւանեան այգիի ցուցանակը, գոր այցելեցին Ուրբաթ օրուան շրջագայութիւններու ընթացքին:



# ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐԻԷՍՏԱՎԱՐԺՆԵՐ



Երիտասարդ Արիեստավարժներու Երկամեայ Ընդհանուր Ժողովը, որ գումարուեցաւ Փարիզի մէջ, «Կիսակէտ 2011»-ի ծրագրի ընթացքին:

Հինգ ցամաքամասերու վրայ տարածուած Հ.Բ.Ը. Միութեան Երիտասարդ Արիեստավարժներու համախմբումը հետզհետէ աւելի ընդգրկուն դարձող համաշխարհային ցանց մըն է, որու անդամները իբրեւ յանձնառութիւն ստանձնած են հայ ինքնութեան մշակուած ու տարածումը: 22էն 40 տարեկան երիտասարդ-երիտասարդուհիներու այս ցանցը արդէն ծաւալուն համբաւ կը վայելէ, իբրեւ ընկերային առողջ շրջանակի մէջ բարենպաստակ գործունէութիւն ծաւալող խմբաւորում:

2010 եւ 2011 թուականներու ընթացքին, Երիտասարդ Արիեստավարժները իրենց առաքելութիւնը յառաջ տարին հետեւեալ նախաձեռնութիւններու ճամբով.

- Ապահովելով աշխարհասփիւռ 17,000 ԵԱ-ներու մասնակցութիւնը 307 տարբեր կրթական, մարդասիրական եւ ընկերային ձեռնարկներու, որ Հ.Բ.Ը.Մ.-ի համընդհանուր գործունէութեան քառորդը կը կազմէ:
- Աւելի քան 122,000 տոլար նուիրաբերելով տարբեր ծրագիրներու նուիրատուութեանց 65 առ հարիւրը յատկացնելով Հայաստանի ծրագիրներուն: Այս գումարէն 39,000 տոլար ուղղուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայորդեայց Տուներու Հիմնադրամին, որու հանրագումարը հասաւ 134,000 տոլարի: Իր հիմնադրումէն ի վեր, ԵԱ-ներու ընդհանուր հանգանակութիւնները հասած է 371,000 տոլարի:
- Ուժերու կեդրոնացումով, սատար հանդիսանալով տեղական, շրջանային եւ հանրագոտ ծրագիրներու Հ.Բ.Ը.Մ.-ի յանձնաժողովներու, մասնաճիւղերու, դպրոցներու, ինչպէս նաեւ հայկական եւ ոչ հայկական կազմակերպութիւններու հետ համագործակցութեամբ:

ԵԱ-ներու համաշխարհային ցանցի շարունակուող աճին ու ժողովրդականութեան վկայութիւնն էր Պուէնոս Այրէսի Ընդհանուր Ժողովին (2010) եւ Կիզակէտի (Focus) Փարիզի հաւաքին(2011) մասնակցողներու մեծ թիւը: Երկամեայ իրենց հաւաքներու ընթացքին, Երիտասարդ Արիեստավարժները մշակութային հասութաբեր բարձրորակ ձեռնարկներու առընթեր կը կազմակերպեն խորհրդաժողովներ հրատապ հարցերու քննարկումին ինչպէս նաեւ խմբակցութեան նոր կողմաորոշումներու սերտադրութեան նուիրում:

Իրենց աշխարհատարած անդամակցութեան շնորհիւ, ԵԱ-ները միասնական ծրագրումով իւրայատուկ նախաձեռնութիւն մը իրականացուցին Հայաստանի մէջ: 2010ին, անոնք եւ հայրենի իրենց գործակիցները համատեղ ուժերով կարողացան սահմանամերձ Խաչիկ գիւղին մէջ նոր հանրային պարտէզ մը հիմել այնտեղ բնակող երեք հարիւր ընտանիքներուն համար: Այս համատեղ ճիգը յստակօրէն ի յայտ բերաւ համաշխարհային համագործակցութեան բարենպաստ արդիւնքները: Նոր հանրային պարտէզը գեղեցկութեան եւ հանգստաւէտութեան իւրայատուկ համադրում մը դարձաւ իր գրաւչութեամբ տպաւորելով այցելուներն ու զբօսաշրջիկները, միաժամանակ եկամուտի նոր աղբիւր հանդիսանալով տեղաբնակներուն համար:

**AGBU  
YOUNG  
PROFESSIONALS**

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէք  
[www.agbu.org/yp](http://www.agbu.org/yp) [www.facebook.com/agbuyup](http://www.facebook.com/agbuyup) կայքերը



Հայաստանի Խաչիկ գիւղի երիտասարդներ եւ բնակիչներ բացումը կը կատարեն նոր զբօսայգիին, որ իրականացաւ շնորհիւ Նիւ Եորքի Երիտասարդ Արիեստավարժներու համամագործակցութեան եւ բարերարութեան:





Հայաստանի Ամերիկեան Համալսարանի շրջանաւարտներ կ'օգտուին համալսարանի թուային գրադարանէն, որ կը վայելէ Հ.Բ.Ը.Մ.ի Երիտասարդ Արհեստավարժներու ամենամեայ հովանաւորութիւնը:

### Երիտասարդ Արհեստավարժներու 2010-2011ի Նուիրատուութիւններ

- Հայաստանի Ամերիկեան Համալսարան  
Հ.Բ.Ը.Մ.-ի Հեռավար Գոլէճ
- Հ.Բ.Ը.Մ.-ի Նուպար Ճամբար
- Հ.Բ.Ը.Մ.-ի Յաջորդ Մերունդ Ծրագիր
- Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի Ամառնային Ասպարէզային Փորձառութեան Ծրագիր
- Հ.Բ.Ը.Մ.-ի Փաստատենայի Սկաւտներ
- Հ.Բ.Ը.Մ.-ի Փլովտիի Կանաչ Ճամբար
- Հ.Բ.Ը.Մ.-ի Սոֆիայի Ընկեր Ճամբար
- Հ.Բ.Ը.Մ.-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարան
- Հ.Բ.Ը.Մ.-ի ԵԱ-ներու Խաչկի հանրային պարտեզի ծրագիր
- Հ.Բ.Ը.Մ.-ի Ծառուկեան Վարժարան

### 2010-2011 Երիտասարդ Արհեստավարժ Նուիրատուներ

- |                  |                                    |
|------------------|------------------------------------|
| ԵԱ-Պոսթոն        | ԵԱ-Հիւսիսային Գալիֆորնիա           |
| ԵԱ-Պրազիլ        | ԵԱ-Օրէնճ Քաունթի                   |
| ԵԱ-Պուէնոս Այրէս | ԵՀ-Ֆիլատելֆիա                      |
| ԵԱ-Շիքակօ        | ԵԱ-Փլովտի                          |
| ԵԱ- Նիւ Եորք     | ԵԱ-Սոֆիա                           |
| ԵԱ-Լոնտոն        | ԵԱ-Թեհրան                          |
| ԵԱ-Լոս Անճելըս   | ԵԱ-Թորոնթօ                         |
| ԵԱ-Մարսէլլ       | ԵԱ-Երեւան                          |
| ԵԱ-Մոնթրէալ      | Հայք (Ֆրանսֆուրթ) համգործակցութիւն |



Մեն Նիւ Եորքի Երիտասարդ Արհեստավարժներու Գործադիր Վարչութեան անդամներու Քոթթլէ-ընդունելութիւնը, որ տեղի ունեցաւ 2010ին: Երիտասարդները կրցան ապահովել 2010-2011 տարիներու ծրագիրներու համար անհրաժեշտ գումարներու մեծ մասը:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՆԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐ 2010-2011

### ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՄ՝ Իկնասիօ Պալասանեան

### ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՒԱՆ՝ Յարութիւն Պողոսեան

### ԱՒՍՏՐԱԼԻԱ

ՄԻՏՆԷՅ՝ Շանթ Ֆապրիքաթորեան

### ԱՒՍՏՐԻԱ

ՎԻԷՆՆԱ՝ Հրայր Սարիքեան

### ՊՐԱԶԻ

ՍԱՆ ՓԱՌԻԼՕ՝ Փաուլօ Պիլեզիքճեան

### ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՓԼՈՎՏԻՒ՝ Սուգաննա Յարութիւնեան-Վասիլէվսքա ՍՈՖԻԱ՝ Գէորգ Խաչատրեան

### ԳԱՆԱՏԱ

ՍՈՆԹՐԷԱԼ՝ Յարութ Շիթիլեան (2012), Սարին Շիթիլեան (2011)  
ԹՈՐՈՆԹՕ՝ Գէրըն Փափազեան

### ՖՐԱՆՍԱ

ՄԱՐՍԷՅԼ՝ Մարալ շէքիմեան  
ՓԱՐԻԶ՝ Օրէլի Տէյրաբեան (2010), Արմէն Սերոբեան (2011)

### ԳԵՐՄԱՆԻԱ

ԳՈԼՈՆ՝ Ալֆրանդ Պետրոսեան  
ՀԱՄՊՈՒՐԿ՝ Արմէն Շամկեան

### ՊԱՐՄԿԱՍՏԱՆ

ԹԵՀՐԱՆ՝ Մարիա Ղազարեանց

### ԼԻԲԱՆԱՆ

ՊԷՅՐՈՒԹ՝ Կի Մարգարեան (2010), Սարինէ Գարաճըրճեան (2011)

### ԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՈՒՊԵՅ՝ Մոսիս Գուլաքսըզեան, Ճորճ Թապազեան (2010)  
Մոսիս Գուլաքսըզեան, Լարա Սեդրակեան (2011)

### ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԼՈՏՏՈՆ՝ Գառնիկ Տէրտէրեան, Վալէնթինա Պողոսեան (2011)  
Գառնիկ Տէրտէրեան, Անի Գալուստան (2011)

### ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ, ԳԱԼԻՖՈՐՆԻԱ՝ Մեանա Մելիքեան (2010),  
Եղիկ Քէշիշեան (2011)  
ՀԻՒՄԻՍՏՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱ՝ Սթիւըն Չերեզեան, Դաւիթ Օճախեան (2010), Սթիւըն Չերեզեան (2011)  
ՕԷՆՃ ՔԱՌԻՆԹԻ, ԳԱԼԻՖՈՐՆԻԱ՝ Լինտա Ատրան, Տօրա Կիլիսէրեան (2010) Տօրա Կիլիսէրեան (2011)  
ՇԻՔԱԿՕ, ԻԼԻՆՈՅ՝ Արինա Մավլեան  
ՊՈՍԹՈՆ, ՄԱՍՍՉՈՒՄԵՅ՝ Հոնիփսիմէ Մկրտչեան (2010),  
Լիքոլ Մկրտչեան (2011)  
ՆԻՒ ԵՈՐՔ, ՆԻՒ ԵՈՐՔ, Ալին Մարգարեան  
ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԵՆՍԻԼՎԱՆԻԱ՝ Մերետիթ Աւագեան (2010),  
Մերետիթ Աւագեան, (2011), Ճուլի Բարեջան (2011)  
ՈՒԱՇԻՆԿԹՐՆ, ՏԻ ՄԻ, Մալրի Գապաքեան-Սլենց

## ԱՐՇԵՍԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Երիտասարդ Արհեստավարժներու խումբերը, ինչպես Պոստոնի, Լիբանանի, Լոնտոնի, Մոնթրեալի եւ Թորոնթոյի պարագային զանազան ուսուցողական ձեռնարկներ կազմակերպեցին իրենց համայնքներու երիտասարդներուն համար, գործարարութեան վարքականոններու, ձեռնարկատիրութեան, դրամատնային եւ էլեմտական գործունէութեան, տեղեկտուական ճարտարարուեստներու եւ կազմակերպչական ղեկավարումի վերաբերեալ գիտելիքներ փոխանցելով անոնց:

Երիտասարդ սերունդին աշխատանքային մասնագիտական ձգտումներուն զարկ տալու նպատակով ԵԱ-ները նաեւ որդեգրեցին խորհրդատուական ծրագիրներ, ինչպես Լոս Անճելոսի ԵԱ-ներու նախաձեռնութեամբ տարբեր մասնագիտութիւններու վերաբերեալ տեղեկատուական ցուցահանդէսներու կազմակերպումը Հ.Բ.Ը.Մ.-ի երկրորդական վարժարաններու աշակերտներուն համար, Նիւ Եորքի ԵԱ-ներու խորհրդատուական ծրագիրը Հ.Բ.Ը.Մ.-ի Ամառնային Ասպարեզային Փորձառութեան Ծրագրի մասնակիցներուն համար, ինչպես նաեւ Մոնթրեալի ԵԱ-ներու Խորհրդատուական Ծրագիրը համալսարանական ուսանողներու եւ համալսարանաւարտներու համար:

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

ԵԱ-ներու խումբերը գիտակցութեամբ կը մօտենան համայնքային ծառայութեան իրենց պարտաւորութիւններուն: Այդ նպատակով անոնք հասութեամբ տարբեր ձեռնարկներ կը կազմակերպեն օժանդակելու համար համայնքային տարբեր ծրագիրներու: Կարելի է նշել Հ.Բ.Ը.Մ.-ի Հայաստանի ծրագիրներուն ի նպաստ, Նիւ Եորքի տարեկան ամառային աւանդական աճուրդ-ընդունելութիւնը եւ Հիւսիսային Գալիֆորնիայի Ձմեռային Շաբաթավերջի զբօսահաւաքը: Այլ խումբեր նիւթական աջակցութիւն ապահովեցին Հ.Բ.Ը.Մ.-ի զանազան ծրագիրներուն, ինչպես Լոս Անճելոսի ԵԱ-ներու աջակցութիւնը Յաջորդ Սերունդ Ծրագրին, Փրովտիի ԵԱ-ներու աջակցութիւնը տեղւոյն Կանաչ Ճամբար ծրագրին եւ Սոֆիայի ԵԱ-ներու աջակցութիւնը տեղւոյն Ընկեր Ճամբարին:

Որպէս ԵԱ-ներու քաղաքացիական յանձնառութեան օրինակ, Թեհրանի ԵԱ-ները իրենց արձակուրդներու մէկ մասը անցուցին տարեցներու, մանուկներու եւ սահմանափակ կարողութիւններու տէր անձանց հետ, Նիւ Եորքի ԵԱ-ները տարեցներու համար ելոյթ ունեցան Հ.Բ.Ը.Մ.-ի Ամառնային Ասպարեզային Փորձառութեան Ծրագրի մասնակիցներու հետ, իսկ Լոս Անճելոսի ԵԱ-ները մաքրութեան արշաւներ



Լոս Անճելոսի, Հարաւային Գալիֆորնիա եւ Օրենձ Գաունթիի ԵԱ-ու նաւարկութեան պտոյտը:



ԵԱ-ու Պոստոնի Կենցաղավարութեան հարցերու նուիրում խորհրդատուութիւնը:



ԵԱ-ու Պուէնոս Այրէսի տարեկան 2րդ պատկերասրահը:



ԵԱ-ու Լիբանանի կազմակերպած դասախօսութիւնը գործարարութեան եւ երիտասարդութեան դիմագրասած մարտահրաւերներուն մասին:



Երիտասարդ Արհեստավարժներու Լոնտոնի գինիի համաժողովի ձեռնարկը:




կազմակերպեցին Հարաւային Գալիֆորնիայի որոշ գետերու եւ ծովափներու շուրջ: Երեւանի ԵԱ-ները իրենց գործունէութիւնը ընդլայնելով մայրաքաղաքէն դուրս, ձեռնարկեցին գիրքերու հաւաքագրում ի նպաստ Արցախի եւ վրացահայ դպրոցներու ու գրադարաններու, ինչպէս նաեւ համակարգչային սենեակ հիմնեցին Խաչիկ գիւղին մէջ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԾԱՆՕԹԱՅՈՒՄ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Հ.Բ.Ը.Մ.-ի՝ սփիւռքահայ երիտասարդութիւնը Հայրենիքին կապելու կարգախօսին հետեւողութեամբ, ԵԱ-ները իրենց համայնքներուն մէջ բազմաթիւ առիթներ ստեղծեցին հայրենական երիտասարդական ծրագիրները ծանօթացնելու ուղղութեամբ: Պուէնտս Այրլէնի ԵԱ-ները դասախօսութիւն մը կազմակերպեցին կամուր ԵԱ-ներու հայրենական փորձառութեան մասին, իսկ Մոնթրէալի ԵԱ-ները կազմակերպեցին ցուցահանդէս մը, որուն միջոցով ներկայացուցին համալսարանական ուսանողներու համար Հայաստանի մէջ գործող ծրագիրները: Ֆիլատելֆիայի ԵԱ-ները մշակութային երեկոյ մը կազմակերպեցին նուիրուած կամուրներու հայրենական փորձառութեան՝ պատմողական, բանաստեղծական եւ նկարչական արտայայտչամիջոցներու կիրարկումով:



Մոնթրէալի ԵԱ-ու աշխատանքային ցուցահանդէս:



Հիւսիսային Գալիֆորնիոյ ԵԱ-ը Միացեալ Նահանգներու մօտ Լեռնային Ղարաբաղի Մշտական Ներկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեանի հետ:



Ֆիլատելֆիայի ԵԱ –ու Յունուարի Jingle-ը:



Թեւրանի ԵԱ –ու այցելութիւնը հաշմանդամ երիտասարդներու Ակունք կեդրոն:



Արաբական Էմիուրիներու ԵԱ-ու այցելութիւնը ջրաշիարի:



Երեւանի ԵԱ-ու եւ Երեւանի սկաւտներու մասնակցութիւնը Չիլիվարժութեան բաց ախոյեանութեան:





Քոլոնի տը վարանս, Ֆրանսա

## ԱՄԱՌԱՅԻՆ ԳԻՇԵՐՈՅԻ ԵՒ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՆԵՐ



Անցնող երկու տարիներուն, հարիւրաւոր հալ պատանիներ եւ երիտասարդներ, Միութեան 11 գիշերօթիկ եւ ցերեկային ճամբարներու մէջ, մինչ կը վայելէին գեղեցիկ բնութիւնը, թարմ օդը եւ իրենց տարեկիցներուն մտերմութիւնը, առիթը ունեցան նաեւ կապուելու իրենց ազգային ինքնութեան եւ մշակութային ժառանգութեան:

Հայաստանէն, Գանատայէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն, Թուրքիայէն, Մեծն Բրիտանիայէն եւ Միացեալ Նահանգներու զանազան քաղաքներէն հինգ հարիւրէ աւելի պատանիներ եւ երիտասարդ պատասխանատուներ յաճախեցին Հ.Բ.Ը. Միութեան Նիւ Եորքի Նուպար ճամբարը: Զանազան խմբային գործունէութիւններու շարքին անոնք առիթ ունեցան զբաղելու նետաձգութեան, պասքէթպոլի, ձիավարժութեան, լողի եւ թենիսի յատուկ մարզաձեւերով: 2010ի ճամբարի ընթացքին անոնք հետեւեցան գրելու արուեստի դասընթացքի, թուայնական հաղորդամիջոցներու եւ երգի դասերու, որոնք մեծ ոգեւորութեամբ ընդունուեցան: Մանաւանդ հետաքրքրական էին ժամանակակից պարերու, կիրառական արուեստներու եւ ձեռարուեստի դասերը, զորս վարեցին պալէի վարպետ Արման

Չուկակեանը եւ արուեստի ուսուցչուհի Էլլա Պեպանեանը, որոնք 2011ին յատկապէս հրաւիրուեցան Հ.Բ.Ը.Մ.ի Երեւանի Նորքի Հայրողեայ կեդրոնէն:

Ինչպէս միշտ, Ֆրանսայի Մասնաճիւղի Քոլոնի տէ Վազանս ճամբարը շարունակեց յաջողութեամբ եւ խուներամ մասնակցութեամբ գործել նաեւ անցնող երկու տարիներուն: Փետրուար 2010ին, Եգիպտոսի Մասնաճիւղի Ուատի Ճամբարը հիւրընկալեց Լիբանանի եւ Սուրիոյ Հ.Բ.Ը. Միութեան երիտասարդները, որոնք մէկ շաբաթ զուարճացան եւ հաճելի ժամանակ անցուցին իրենց տարեկիցներուն հետ: Իր հերթին, Սուրիոյ Մասնաճիւղի Քեսայի ճամբարը Օգոստոսին հիւրընկալեց Սղեքսանդրիոյ եւ Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի երիտասարդները:

Անկախ այն իրողութենէն թէ պատանիներ Հ.Բ.Ը.Մ.-ի տեղական թէ այլ երկիրներու մասնաճիւղերու կազմակերպած ճամբարներուն կը մասնակցին, վերջնական արդիւնքը նոյնն է: Անոնք կը ստեղծեն ամառնային քաղցր յիշողութիւններ եւ կը կապուին իրենց ազգային ինքնութեան, միեւնոյն ստեն ձեռք ձգելով մաայուն ընկերներ:

Ուատի ճամբար, Եգիպտոս



Ընկեր ճամբար, Պուկարիա







Նուպար Ճամբար, Միացեալ Նահանգներ



Տեպիրճեան Կեդրոնի Ամառնային Ցերեկային Ճամբար, Լիբանան



Քոլոնի տը վարանս, Ֆրանսա

Ամառնային Ցերեկային Ճամբար, Գորտուպա, Արժանթին







Գնահատելով Մոնթրեալի Հ.Բ.Ը.Մ.ի սկաուտական խումբին նուաճումները, Գանատայի Սկաուտական Ընդհանուր Կառավարիչ Տեյվիտ խումբը եւ խմբապետական կազմը պարգևատրեց Anapurna մրցանակով, որ սկաուտական բարձրագույն մրցանակն է երկրին մէջ:

## ՄԿԱՌՏԱԿԱՆ

Սկաուտական երդում տուած, սկաուտական տարբեր աստիճաններու տիրացած եւ կամ ընդհանրապէս համայնքային ծառայութիւններու մասնակցած, Հ.Բ.Ը.Մ.-ի ինը երկիրներու մէջ գործող սկաուտական խումբերը “Միշտ պատրաստ” են վառ պահելու ազգային ինքնութիւնը եւ մշակոյթը:



Անցնող երկու տարիներուն, Հայաստանի Լոռիի Մարզի մէջ գտնուող մեր Անդրանիկ սկաուտական բանակավայրը ընդունեց հարիւրաւոր ճամբարականներու, ինչպէս նաեւ Լորքի Հայրողեաց Կեդրոնի նորակազմ սկաուտական խումբերը:

Մոնթրեալի սկաուտական Venturers խումբը իր մասնակցութիւնը բերաւ հայրենի ժողովուրդի կեանքի բարելաման գործին: Խումբը հանգանակեց 50,000 ամերիկեան սուլար, որով Օգոստոս 2010ին մեկնեցաւ Հայաստան եւ մասնակցեցաւ Տարօն թաղամասի մէջ տուններու կառուցման աշխատանքներուն: Խումբին ճիգերը անկատ չմտացին: Արդարեւ, աւելի ուշ, գնահատելով խումբին նուաճումները եւ նուիրումը իրենց նախահայրերու հայրենիքին, գանատական կառավարութիւնը խումբը պարգևատրեց Anapurna մրցանակով, որ սկաուտական բարձրագույն մրցանակն է երկրին մէջ:

Յատկանշական իրադարձութիւն մըն էր Կլենտլի-Փասատենայի սկաուտական խումբի 25-ամեակին նուիրուած ձեռնարկը, որ տեղի ունեցաւ Մայիս 2011ին: Ամիսներ յետոյ տեղի ունեցաւ խումբին տարեկան բանակումի խարուկահանդէսը, 300 ծնողներու միութեանականներու եւ համակիրներու ներկայութեամբ:



Փասատենայի սկաուտները այցելեցին Բգայեյլա լիճ:

Երեւանի սկաուտները 5 Հոկտեմբեր 2011ին ծառատունկ կազմակերպեցին Անդրանիկ սկաուտական բանակավայրին մէջ:

Երեւանի սկաուտական խումբը 13 Նոյեմբեր 2010ին այցելեց Վազգէն Մարգարեանի անունան ռազմական ակադեմիա:







Հ.Բ.Ը.Մ.ի Արարատ գոգ դաշտի ֆութբոլի խումբը 7րդ անգամ տիրացաւ Կիպրոսի 2010ի ախոյեանութեան:



Յուլիս 2010ին Փասատենայի մէջ տեղի ունեցաւ Հիւսիսային Ամերիկայի պասթբոլի մրցաշարը:

2010ի Լիբանանի պասթբոլի աղջկանց առաջին դասակարգի ախոյեան Հ.Բ.Ը.ի խումբը:

## Մարզասրեր



Տասնեակ երկիրներու մէջ գործող Հ.Բ.Ը. Միութեան պասթբոլի, վոլեյբոլի, ֆութբոլի եւ այլ մարզաձեւերու խումբերը ապացուցեցին, թէ միշտ պատրաստ են մրցելու եւ յաղթանակներ արձանագրելու:

2010ին եւ 2011ին, Պէրտի Հ.Ե.Ը.-ի աղջկանց պասթբոլի խումբը, յաջորդաբար 8-րդ եւ 9-րդ անգամ ըլլալով նուաճեց Լիբանանի ախոյեանութիւնը, անգամ մը եւս ապացուցելով, որ իր մտայուն տեղը ապահոված է յառաջատարներուն մէջ:

Նիկոսիոյ Հ.Բ.Ը.Մ.-ի փակ դաշտի ֆութբոլի Արարատ խումբը, իր 11-ամեայ գոյութեան ընթացքին, 7-րդ անգամ հռչակուեցաւ Կիպրոսի ազգային առաջնութեան ախոյեան, որով դարձեալ ապացուցեց իր մրցունակութիւնը:

Հ.Բ.Ը.Մ.-ի մարզական խումբերը կը շարունակեն իրենց սերտակցութիւնը Միութեան տարբեր քոյր խումբերու հետ: Յուլիս 2010ին տեղի ունեցան Հ.Բ.Ը.Միութեան Հարաւային Ամերիկայի Տարեկան Շրջանային 32-րդ Մարզական Խաղերը, որոնց մասնակցեցան Պուէնոս Այրեսի, Գորտոպայի, Մոնթեվիտոյի եւ Սան Փաուլոյի մարզական խումբերը: Հարիւրաւոր մարզականներ խանդավառութեամբ քաջալերեցին իրենց խումբերը:

Հարաւային Գալիֆորնիոյ եւ Գանատայի խումբերու մրցակցութեան յաջողեցին Յուլիս 2010ին Փասատենայի մէջ տեղի ունեցած Հիւսիսային Ամերիկայի Շրջանային Մարզական Խաղերը: Գանատայի խումբերը կը շարունակեն ամեն տարի իրարու հետ մրցիլ Մայիսի թորոնթոյի, իսկ Հոկտեմբերին Մոնթրէալի մէջ: Հակառակ այդ զօրաւոր մրցակցութեան, խումբերը կը շարունակեն պահել իրենց միջեւ գոյութիւն ունեցող ամուր բարեկամութիւնը:

Հարաւային Ամերիկայի Շրջանային Մարզախաղերը տեղի ունեցան Պուէնոս Այրեսի մէջ, 7 Յուլիս 2010ին:







Յայտնաբերի Հայաստանի երիտասարդական պտույտը:

## ՀԵՏԱՌԻՋԷ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ



Պելճիքային, Գանատային, Ֆրանսային, Յունաստանին, Լիբանանին, Սուրիային, Արաբական Միացեալ Էմիրություններին, Մեծ Բրիտանիային և Միացեալ Նահանգներին, 15-18 ամեայ 62 երիտասարդներ, Օգոստոս 2010ին և 2011ին մասնակցեցան Հ.Բ.Ը.Մ.-ի կողմից 2003ին ստեղծուած Հետախուզիչ Հայաստանը ծրագրին: Մասնակիցներ երեք

շաբաթ տեղադրութեամբ հաճելի և օգտակար օրեր անցուցին հայրենիքի մէջ:

Հետախուզիչ Հայաստանը շրջապտույտին կարեւորագոյն նախադրեալներն է երիտասարդներուն մասնակցութիւնը համայնքային հանրօգուտ աշխատանքներուն: Իրենց բերած ծառայութեան դիմաց, ուսանողները կրնան վարկանիշ ստանալ իրենց վարժարաններէն: Անցնող երկու տարիներուն, FULLER կազմակերպութեան հետ համագործակցաբար, այդպիսի ծրագիրներ իրականացած են կարիքաւոր ընտանիքներու համար տուններ կառուցանելով Արագածոտնի, Արմավիրի և Լոռիի մարզերուն մէջ:

Փոքրիկներու հետ խաղալու և ժամանակ անցընելու նպատակով, շրջապտույտի մասնակիցներ կ'այցելէն մանկատուններ, ճաշ կը հիւրասիրեն ամէն օր Հ.Բ.Ը.Մ.-ի ճաշարաններ յաճախող տարեցներուն, ինչպէս նաեւ գիրքեր կը նուիրեն Ստեփանակերտի մանկական գրադարանին: Ծրագրի մասնակիցներ կը ծանօթանան Հայաստանի պատմական յուշարձաններուն, ներկայ կը գտնուին մշակութային ձեռնարկներու, ինչպէս նաեւ կ'այցելէն Հ.Բ.Ը. Միութեան Հայաստանի Ներկայացուցչութիւն և Հեռավար Գոլէճ: Խումբերը կը մեկնին նաեւ Արցախ, յայտնաբերելու անոր գեղատեսիլ լեռները և բնակչութեան հետ անմիջական շփումներու միջոցով մօտէն ճանչնալու զայն:



Յայտնաբերի Հայաստանի երիտասարդական պտույտը:



Յայտնաբերի Հայաստանի երիտասարդական պտույտը:





“Կենսի Երկիր” ծրագրի մասնակիցները Հայաստանի մեջ, Օգոստոս 2011ին:

## ՄՐՅԱԿԿԱԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ «ԿԵՆՍ ՀՈՐ»



Մփիւռքահայ գաղութներու մէջ հայապահպանման եւ հայկական ինքնութեան զարգացման ճիգերը քաջալերելու նպատակով, 2011ին

Մփիւռքի նախարարութիւնը «Լաւազոյն Երիտասարդական Կազմակերպութիւն» անունով մրցանակներ յանձնեց վեց երիտասարդական կազմակերպութիւններու, որոնց շարքին էր նաեւ Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.-ի UGAB Jeunes կազմակերպութիւնը: Իրապէս, UGAB Jeunes-ը արժանատր մրցանակակիր մըն էր: Նախապէս հանգանակուած միջոցներով, կազմակերպութիւնը «Կենսաց Երկիր» անունը կրող ծրագիր մը իրականացուցած էր դէպի Հայաստան եւ Արցախ, Օգոստոս 2011ին: 18էն 26 տարեկան երեսուներկու երիտասարդ կամաւորներ, հայ թէ ֆրանսացի, առաքելութեան մը ձեռնարկեցին դէպի Հայրենիք, որով կրթական, մարդափրական, բնապահպանական եւ մշակութային տարրեր ունեցող տպատրիչ յայտագիր մը գործադրեցին Հայաստանի եւ Արցախի մէջ: Անոնք նորոգեցին երկու յարկանի երիտասարդական կեդրոն մը, որուն նուիրեցին նաեւ ֆրանսերէն գիրքեր, ինչպէս նաեւ դպրոցական գրենական պիտոյքներ նուիրեցին Հայկական գիտի դպրոցին: Բնապահպանական հարցերու մասին հասարակութիւնը իրագեկ պահելու նպատակով, խումբը ACBA Credit-Agricole դրամատան հետ համագործակցաբար իրականացուց Մեանայ Լիճի ափերուն եւ հոն գտնուող միջնադարեան եկեղեցիի մաքրութեան աշխատանքներ:

## ՇՐՋԱՊՏՈՅՏԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Հ.Բ.Ը.Մ.-ի դպրոցներու երկրորդական եւ նախաւարտական դասարաններու աշակերտ-աշակերտուհիները ամէն տարի կ'այցելեն իրենց Հայրենիքը՝ յայտնաբերելու անոր գեղեցկութիւնը եւ իրողապէս ծանօթանալու իրենց ազգային ժառանգութեան: Անցնող երկու տարիները տարբեր չէին կրնար ըլլալ: Գարնան եւ ամրան շրջաններուն, Հ.Բ.Ը.Մ.-ի Գալիֆորնիոյ Մանուկեան-Տեմիրճեան եւ Վաչէ եւ Թամար Մանուկեան, Տիթորոյթի Ալէք եւ Մարի Մանուկեան եւ Պուէնտո Այրէսի Մարի Մանուկեան վարժարաններու դպրոցականներ իրենց տարեկան այցելութիւնները ունեցան Հայաստան:

2011ին, ամենաքաջալերականը Դարուհի-Յովակիմեան Վարժարանի աշակերտներուն եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Գորտոպայի մասնաձիղի Երիտասարդաց Լիկայի Հայաստան այցելութիւններն էին: Այցելուներէն շատեր առաջին անգամ ըլլալով կը վայելէին հայրենիքի ապող իրականութիւնը: Մեպտեմբեր 2010ին Հայաստան մեկնեցան նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի Թեհրանի Մանուկեան Աղջկանց Վարժարանի աշակերտուհիները, իսկ Աթէնքի Գալիաքեան Վարժարանի աշակերտներ եւ նախկին շրջանաւարտներ նոյն ամրան ընթացքին մասնակցեցան Մփիւռքի նախարարութեան կազմակերպած Արի Տոն ծրագրին:

Ալէք եւ Մարի Մանուկեան Վարժարանի աշակերտներ Մայիս 2010ին այցելեցին Հայաստան:

Մանուկեան-Տեմիրճեան Երկրորդական Վարժարանի 2010ի շրջանաւարտ դասարանը Երեւանի Մատենադարանին առջեւ:







**Հ.Բ.Շ. Միութեան մամուլը եւ գանազան հրատարակութիւնները վեց լեզուներով տարուան ընթացքին կը հասնին շուրջ 100,000 հայերու, աշխարհի բոլոր տարածքին: Մեր լրատուական ցանցը կարելոր միջոց է անդամակցութիւնը տեղեակ պահելու Միութեան տեղական թէ համապիլիտքեան գանազան գործունէութեանց մասին:**


## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- ՀԲԸՄ.ի Լուրեր Վեցամսեայ պաշտօնաթերթը (Նիւ Եորք, ԱՄՆ)
- Նոր Զայն էլեկտրոնական Ամսաթերթը (Մելպուռն, Աւստրալիա)
- Միութիւն Ամսաթերթը (Միսսիսիպի, Աւստրալիա)
- Հ.Բ.Շ.Մ.ի Զայն Ամսաթերթը (Փրովիտի, Պուկարիա)
- Տեղեկատու Եռամսեայ (Գահիրէ, Եգիպտոս)
- Revue arménienne des questions contemporaines semi-annual journal (Փարիզ, Ֆրանսա)
- Խօսնակ Եռամսեայ (Պէյրոս, Լիբանան)
- Հայեացք Եռամսեայ (Հալէպ, Սուրիա)
- Երամ էլեկտրոնական Ամսաթերթը (Դամասկոս, Սուրիա)
- AGBU-AYA News quarterly (Հարաւային Գալիֆորնիա ԱՄՆ)
- AGBU Newsletter monthly newsletter (Նիւ Եորք, ԱՄՆ)
- Հ.Բ.Շ.Մ.ի Հայաստանի Լրատու (Երեւան, Հայաստան)
- Արարատ Գրական-Մշակութային Եռամսեայ (Նիւ Եորք, ԱՄՆ)
- Յուշարար Պաշտօնաթերթը (Նիւ Եորք, ԱՄՆ)



Հ.Բ.Շ.Մ.ի Արարատ Գրական-Մշակութային Եռամսեայի էլեկտրոնական հրատարակութիւնը այժմ հասանելի է նաեւ [araratmagazine.org](http://araratmagazine.org) կայքի վրայ:

Միութեան կայքերու ամբողջական եւ այժմէական ցանկին համար այցելեցէք [agbu.org](http://agbu.org) կայքը:



**The Farms and Village of Armenia**



**The Mother See of Holy Etchmiadzin Welcomes AGBU Students and Scouts**  
 A trip to Armenia wouldn't be complete without visiting the Mother See of Holy Etchmiadzin, which is just where students from the AGBU's Marie Manougian Institute of Buenos Aires and members of the AGBU's Montreal Venturers Scout Group headed this past Sunday.  
 The 56 students of the Toronto St. Sabas Metro Saturday School, on July 22, the AGBU youth were welcomed to the Armenian Church's headquarters by His Holiness Karegin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians. Local clergy introduced the group to the Pontiff, who bestowed wishes, praising them for connecting with their cultural roots.

**RECENT POSTS**

- The Mother See of Holy Etchmiadzin Welcomes AGBU Students and Scouts
- MSP Interns Reflect on a Trip of Beauty
- YSP Interns Beta Ananyan's Experiences in Georgia
- AGBU Exploring Presence in India and Khiva Algor Region
- 500,000 Celebrating Total Announced at NYSP's 10th Anniversary Gala
- Summer Meets Up at Bonfire Organized by AGBU Young Professionals of Orange County
- AGBU Melbourne's "Star Team" July 2012 Newsletter
- AGBU America Newsletter, June 2012
- YSP Interns Connecting with Their Homeland
- YSP Atlanta Celebrates Summer with United Satehood Networking Mixer
- AGBU 100th World Games Set to Begin in Los Angeles
- Missouri Summer Interns Enjoy Both "Summer" and "Winter" During

**RECENT COMMENTS**

- Bilva-MD Poetry on AGBU Co-Sponsors a Series of Book Launch Events in North America for Professor Vahak N. Dabirian
- Bilva-MD Poetry on AGBU Co-Sponsors a Series of Book Launch Events in North America for Professor Vahak N. Dabirian
- Erica Greenough on ATA Lebanon Basketball Captains 6th Strategic Lebanon Championship
- Kar Sarkisian on AGBU-AYA Graduate/Fellowship Seminars 2012 Victor Award Ceremony Held in Hartford, Conn., an Emerging Artist Appreciates AGBU's Contribution
- Patricia Whittaker on Supporting Youth, an Emerging Artist Appreciates AGBU's Contribution
- Alise Movsesian on Simple Settlement, President of AGBU Launching the Dispute Case, by the Genocide
- Aida Kroyanjanian on Sofia in Celebrate 50 Yrs of Armenia's

**AGBU LONDON**

**100th Anniversary**

**AGBU LONDON**

**YOUTH ZONE**

**Home House**

**AGBU YOUTH AFTER WORK**

**Technology Professionals**

**FOCUS PARIS 2011**

**HSBC x AGBU**

**EVENTS**

**YOUTH ZONE**

**AGBU LONDON**

**Concert**

**Young Talents**

**AGBU LONDON**

**Copyright © 2006**

**Website best viewed at 1024x768 resolution setting**



# 2010 ԵՒ 2011 Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ (3)

Մարի Մանուկեան եւ Նուարդ Կիւլպէնկեան Վարժարաններ (Գալիֆ. ԱՄՆ)  
Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան Վարժարան (Գալիֆ. ԱՄՆ)  
Դարուհի-Յովակիմեան Վարժարան (Գալիֆ. ԱՄՆ)

## ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ (2)

Արամ Խաչատուրեան Երաժշտական Դպրոց (Հալէպ, Սուրիա)  
Սարեան Նկարչական Ակադեմիա (Հալէպ, Սուրիա)

## ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՆԵՐ (11)

Անդրանիկ Սկառտական բանակավայր, (Լոռի, Հայաստան)  
Նուպար ճամբար (Նիւ Եորք, ԱՄՆ)  
Ընկեր ճամբար (Մոֆիա, Պուկարիա)  
Քոլոնիա տէ Վագասիոնէ (Պուէնոս Այրէս, Արժանթին)  
Քոլոնիա տէ Վագասիոնէ (Գորտոպա, Արժանթին)  
Քոլոնի տէ Վագան (Բարձր Ալպէան, Ֆրանսա)  
Տեմիրձեան Կեդրոնի Ամառնային ճամբար (Անթիլիաս, Լիբանան)  
Կանաչ ճամբար (Փլովտիւ, Պուկարիա)  
Քեսապ ճամբար (Քեսապ, Սուրիա)  
Ամառնային Յերեկային ճամբար (Գամիշլի, Սուրիա)  
Երջանիկ Թաճիրեան Ամառնային Դպրոց (Պաղտատ, Իրաք)

## ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐ (8)

Առաօտ Երգչախումբ (Եամպու, Պուկարիա)  
Հ.Ե.Ը.ի Օհան Երգչախումբ (Պաղտատ, Իրաք)  
Հ.Ե.Ը.ի Սպենդիարեան Երգչախումբ (Հալէպ, Սուրիա)  
Ծիածան Մանկական Երգչախումբ (Գահիրէ, Եգիպտոս)  
Կոմիտաս Երգչախումբ (Հապրովօ, Պուկարիա)  
Կռունկ Երգչախումբ (Մոնթեվիտէօ, Ուրուկուէ)  
Գողթան Երգչախումբ (Փարիզ, Ֆրանսա)  
Երիտասարդ Չայներ խումբ (Թորոնթօ, Գանատա)

## ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐ (11)

Աղթամար (Գամիշլի, Սուրիա)  
Անդրանիկ (Նիւ Ճըրզի, ԱՄՆ)  
Հ.Ե.Ը.ի Անդրանիկ (Պէրուք, Լիբանան)  
Հ.Ե.Ը.ի Անդրանիկ (Հալէպ, Սուրիա)  
Արարատ (Գորտոպա, Արժանթին)  
Պարախումբ (Տոպրիչ, Պուկարիա)  
Պարախումբ (Թեսաղոնիկէ, Յունաստան)  
Կարօտ (Վիեննա, Աւստրիա)  
Նուռ (Մոֆիա, Պուկարիա)  
Փունջ Մանկական Պարախումբ (Հալէպ, Սուրիա)  
Սարդարապատ Պարախումբ (Գալիֆ. ԱՄՆ)

## ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ (4)

Մոսկուայի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագիր  
Նիւ Եորքի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագիր  
Փարիզի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագիր  
Երեւանի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագիր

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ/ՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ (1)

Նուպարեան Մատենադարան (Փարիզ, Ֆրանսա)

## ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ (1)

Կորիզ Երիտասարդ Առաջնորդներու Յայտագիր (Փարիզ, Ֆրանսա)

## ԲՈՒԺԱՐԱՆՆԵՐ (6)

Հայ Կին Յղի Կանանց Կեդրոն (Թալին, Հայաստան)  
Հայ Կին Յղի Կանանց Կեդրոն (Վանաձոր, Հայաստան)  
Հայ Կին Յղի Կանանց Կեդրոն (Եղվարդ, Հայաստան)  
Դարմանատուներ (Պէրուք, Լիբանան)  
Գերձայնային Ախտաճանաչումի Կեդրոն (Երեւան, Հայաստան)

## ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (1)

Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Յայտագիր (Գալիֆ. ԱՄՆ)

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ (10)

Հ.Ե.Ը.ի Նուագախումբ (Հալէպ, Սուրիա)  
Հ.Ե.Ը.ի Փողերախումբ (Հալէպ, Սուրիա)  
Մենեկային Նուագախումբ (Մոֆիա, Պուկարիա)  
Մենեկային Նուագախումբ (Ստեփանակերտ, Ղարաբաղ)  
Ծիրանի Նուագախումբ (Գորտոպա, Արժանթին)  
Երեւան 50 Նուագախումբ (Մոնթեվիտէօ, Ուրուկուէ)  
Երեւոնի Նուագախումբ (Փլովտիւ, Պուկարիա)  
Կոմիտաս Մենեկային Նուագախումբ (Հալէպ, Սուրիա)  
Հայ Հերոսներ Փողերախումբ (Գալիֆ. ԱՄՆ)  
Ֆիլիարմոնիք Նուագախումբ (Երեւան, Հայաստան)

## ԳՈՐԾԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ (4)

ACAB (Հայկական Մշակութային Կեդրոն-Պարսերուն)  
HAİK (Հայ Համալսարանական Միութիւններու Համախմբում-Գերմանիա)  
INSIDE EUROPE (Հայաստան-Սփիւռք-Եւրոպա Յարաբերութիւններու եւ Տեղեկատուութեան Կեդրոն-Պելճիքա)  
SIVAM (Մոսկուայի Հայ Համալսարանականներու Օժանդակ Միութիւն)

## ՉԱՅՆԱՍՓԻՌ (2)

Հայկական Ռատիոժամ (Մելպուռն, Աւստրալիա)  
Հայկական Ռատիոժամ (Լիոն, Ֆրանսա)

## ՅԱՏՈՒԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ (6)

Ասպետներ (Անթիլիաս, Լիբանան)  
Ասպետներ (Գալիֆ. ԱՄՆ)  
Կիզակէտ (Նիւ Եորք, ԱՄՆ)  
Հայ Կին (Գալիֆ. ԱՄՆ)  
Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբ (Նիւ Եորք, ԱՄՆ)  
ՄԱԿ-ի Յատուկ Յանձնախումբ (Նիւ Եորք, ԱՄՆ)

## ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԵՐ (8)

Ահագանգ Թատերախումբ (Փարիզ, Ֆրանսա)  
Արտաւազդ Թատերախումբ (Գալիֆ. ԱՄՆ)  
Պետրոս Աղամեան Թատերախումբ (Հալէպ, Սուրիա)  
Գրիգոր Սաթամեան Թատերախումբ (Պուէնոս Այրէս, Արժանթին)  
Փարոս Թատերախումբ (Թեհրան, Պարսկաստան)  
Վահրամ Փափազեան Թատերախումբ (Միսնի, Աւստրալիա)  
Վահրամ Փափազեան Թատերախումբ (Պէրուք, Լիբանան)  
Երիտասարդաց Թատերախումբ (Հապրովօ, Պուկարիա)

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ (2)

Ակադեմական (Փարիզ, Ֆրանսա)  
Համալսարանականներու Հաղորդակցական Ծրագիր (Նիւ Եորք, ԱՄՆ)

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ (1)

Յայտնաբերէ Հայաստանը (Երեւան, Հայաստան)



## **AGBU**

55 East 59<sup>th</sup> Street, New York, NY 10022-1112

TEL 212-319-6383 | FAX 212-319-6507

EMAIL [agbuny@agbu.org](mailto:agbuny@agbu.org)

[www.agbu.org](http://www.agbu.org)